Երկրորդ ընթերցում

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ԽՍ-750-30.09.2020-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կուսակցությունների մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ՀՕ-224-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածը լրացնել 4-րդ մասով.

«4. Արգելվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական նախադպրոցական, դպրոցական և այլ ուսումնական հաստատությունների, պետական այլ կազմակերպությունների տեղակայումը կուսակցությանը սեփականության իրավունքով պատկանող շենքերում և շինություններում»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության մեջ «ծառայողական (պաշտոնեական) դիրքն» բառերը փոխարինել «ծառայողական (պաշտոնեական) դիրքը, ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական և մարդկային ռեսուրսները, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների, »բառերով:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում «առնվազն 100 հիմնադիր» բառերը փոխարինել «առնվազն 300 հիմնադիր» բառերով:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Կուսակցության հիմնադիր համագումարը որոշումներ է ընդունում կուսակցության հիմնադրման, կուսակցության ծրագրի ընդունման և կանոնադրության հաստատման, պետական գրանցման համար անձին (անձանց) լիազորելու մասին, իր կազմից ընտրում է ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններ:»,

2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Կուսակցության ստեղծման մասին որոշումը համարվում է ընդունված, եթե որոշմանը կողմ է քվեարկել կուսակցության հիմնադիր համագումարի մասնակիցների մեծամասնությունը, բայց ոչ պակաս, քան 300 հիմնադիր»:

Հոդված 5. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

2) 4-րդ մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) կուսակցության խնդիրներն ու նպատակներն արտացոլող ծրագրի առնվազն երկու օրինակ.»,

3) 4-րդ մասի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) հիմնադիր համագումարի արձանագրությունը, ինչպես նաև կուսակցության հիմնադրման, մշտապես գործող ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրության, կանոնադրության հաստատման ու ծրագրային փաստաթղթերի ընդունման, պետական գրանցման համար անձին (անձանց) լիազորելու մասին որոշումները,»

4) 4-րդ մասի 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

5) 4-րդ մասի 6-րդ կետում «հիմնադիր համագումարին մասնակցած հիմնադիրների» բառերը փոխարինել «հիմնադիր համագումարում կուսակցության ստեղծման մասին որոշմանը կողմ քվեարկած հիմնադիրների» բառերով,

6) 4-րդ մասի 10-րդ կետում «տեղեկատվություն» բառից առաջ լրացնել «առկայության դեպքում՝» բառերը,

7) 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«7. Կուսակցության պետական գրանցումից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, կուսակցության կանոնադրությունը և ծրագիրը համընդհանուր իրազեկման նպատակով պետական լիազոր մարմնի կողմից հրապարակվում են Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am»:

Հոդված 6. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությունում «սույն օրենքով» բառերից հետո լրացնել «ինչպես նաև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով» բառերը, իսկ երկրորդ նախադասությունից հանել «սույն» բառը:

Հոդված 7. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) կուսակցության հիմնադիրների թիվը չի համապատասխանում սույն օրենքի պահանջներին կամ կուսակցության հիմնադիր համագումարում որոշում չի ընդունվել կուսակցության հիմնադրման կամ կուսակցության ծրագրի ընդունման կամ կանոնադրության հաստատման մասին կամ չեն ընտրվել կուսակցության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինները կամ»,

Հոդված 8. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Կուսակցության հիմնադիրներ և անդամներ կարող են լինել տասնութ տարին լրացած ընտրական իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:»

Հոդված 9. Օրենքի 16-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) կառուցվածը, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ձևավորման և կազմալուծման կարգը, իրավունքները և պարտականությունները, գործունեության ժամկետները և որոշումներ ընդունելու կարգը. »,

2) 2-րդ մասի 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5) կուսակցության անդամների, ներառյալ՝ պատվիրակների միջոցով, համագումարին մասնակցության կարգը»,

3) ուժը կորցրած ճանաչել 2-րդ մասի 6-րդ , 7-րդ և 10-րդ կետերը,

4) 2-րդ մասի 8-րդ կետում «կանոնադրությունում» բառից հետո լրացնել «և ծրագրում» բառերը,

5) 3-րդ մասի առաջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն.

«Ընտրական ցուցակների ձևավորման կարգը պետք է արտացոլի Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքով ընտրական ցուցակներին ներկայացվող պահանջները»:

6) 4-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ.

«4. Տարածքային ստորաբաժանումների առկայության դեպքում կուսակցության կանոնադրությունը պետք է սահմանի նաև դրանց ստեղծման և գործունեության դադարեցման կարգը, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ձևավորման և կազմալուծման կարգը, իրավունքներն ու պարտականությունները և դրանց գործունեության ժամկետները:

Հոդված 10. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «ոչ ուշ, քան չորս տարին մեկ անգամ» բառերը փոխարինել «ոչ ուշ, քան երեք տարին մեկ անգամ» բառերով, իսկ առաջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն. «Կուսակցության անդամների նախաձեռնությամբ, որոնց նվազագույն թիվը սահմանվում է կուսակցության կանոնադրությամբ, ինչպես նաև կանոնադրությամբ սահմանված այլ դեպքերում և կարգով կարող է հրավիրվել նաև արտահերթ համագումար»:

2) 3-րդ մասի 1-ին կետից հանել «բացառությամբ սույն օրենքի փոփոխությամբ պայմանավորված փոփոխությունների և լրացումների. » բառերը, իսկ 2-րդ կետում «կազմավորումը» բառը փոխարինել «ընտրությունը» բառով,

3) 3-րդ մասը լրացնել նոր՝ 5-րդ կետով.

«5) Ազգային ժողովի հերթական ընտրություններում կուսակցության ընտրական ցուցակում թեկնածուների՝ առնվազն առաջին երեք տասնյակի հաստատումը.»:

4) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Կուսակցության անունից այլ մարմինների և անձանց հետ հարաբերություններում հանդես է գալիս կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարը՝ առանց լիազորագրի, եթե կուսակցության կանոնադրությամբ նախատեսված է մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի պաշտոն, ինչպես նաև մշտապես գործող ղեկավար մարմնի կողմից լիազորված անձը»:

5) լրացնել նոր՝ 4.1. մաս.

«4.1. Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը ձևավորվում է կոլեգիալության սկզբունքով, որի անդամները կուսակցության կազմից ընտրվում են

համագումարում՝ կուսակցության կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետով: Մշտապես գործող ղեկավար մարմինը որոշումներ է ընդունում նիստերի արդյունքում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով»:

6) 5-րդ մասի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) փոփոխություններ է կատարում համագումարի կողմից Ազգային ժողովի ընտրությունների համար հաստատված ընտրական ցուցակներում, եթե համագումարի կողմից հաստատվելուց հետո ընտրական ցուցակում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունն առաջացել է կուսակցության կամքից անկախ պատճառներով,»

7) 5-րդ մասը լրացնել նոր՝ 5.1-ին կետով.

«5.1. հաստատում է Ազգային ժողովի հերթական ընտրություններում կուսակցության ընտրական ցուցակը թեկնածուների այն մասով, որոնց հաստատումը սույն օրենքով և կուսակցության կանոնադրությամբ վերապահված չէ համագումարին, ինչպես նաև հերթական և արտահերթ ընտրություններում կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը»:

8) լրացնել նոր՝ 6-րդ մաս.

«6. Կուսակցության կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև կուսակցության այլ մարմիններ»:

9) լրացնել նոր՝ 7-րդ մաս.

«8. Կուսակցության՝ օրենքով սահմանված ղեկավար մարմիններն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ՝ սույն օրենքով և կուսակցության կանոնադրությամբ սահմանված կարգով»:

Հոդված 11. Օրենքի 18-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 18. Կուսակցության համագումարում որոշումների ընդունման կարգը**

1. Կուսակցության համագումարին ձայնի իրավունքով մասնակցության, ներառյալ՝ պատվիրակների մասնակցության կարգը սահմանվում է կուսակցության կանոնադրությամբ:

2. Կուսակցության համագումարն իրավազոր է, եթե համագումարին ներկա են կուսակցության անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը, իսկ համագումարին պատվիրակների մասնակցության դեպքում՝ պատվիրակների ընդհանուր թվի առնվազն կեսը, բայց ոչ պակաս, քան 100 պատվիրակ:

3. Կուսակցության համագումարի որոշումները, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, ընդունվում են համագումարում ձայնի իրավունք ունեցող ներկաների ձայների մեծամասնությամբ:

4. Կուսակցության կանոնադրությունում և ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրության, մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի ընտրության, կուսակցության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումներն ընդունվում են համագումարում ձայնի իրավունք ունեցող մասնակիցների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ»:

Հոդված 12. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Կուսակցությունները կարող են իրենց կանոնադրությամբ սահմանված կարգով ունենալ տարածքային ստորաբաժանումներ: Կուսակցության տարածքային ստորաբաժանումները ենթակա են պետական հաշվառման՝ օրենքով սահմանված կարգով: Տարածքային ստորաբաժանումների պետական հաշվառման համար պետական տուրք չի գանձվում»:

Հոդված 13. Օրենքի 21-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետից հանել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության» բառերը,

2) 1-ին մասը լրացնել 7.1-ին կետով.

«7.1) իր գործունեության ֆինանսավորման, այդ թվում՝ նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման նպատակով ստանալու վարկեր Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերից, վարկային կազմակերպություններից, ինչպես նաև ներդնել ավանդներ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում,

3) 2-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ.

«Կուսակցության կողմից իր գույքի վաճառքի կամ վարձակալության գինը չպետք է էականորեն գերազանցի պայմանագրի կնքման պահին համանման գույքի վաճառքի կամ վարձակալության համար գործող շուկայական գինը: Կուսակցության կողմից իր գույքը համանման գույքի համար շուկայական գնից էականորեն բարձր գնով վաճառելու կամ վարձակալության հանձնելու դեպքում՝ վաճառքի գնի կամ վարձակալության վճարի՝ շուկայական գինը գերազանցող մասը դիտվում է որպես

կուսակցության օգտին կատարվող նվիրատվություն և դրա նկատմամբ համապատասխանաբար կիրառելի են սույն օրենքի 24-րդ հոդվածի 1.2-րդ, 8.1-ին և 9-րդ մասերով սահմանված դրույթները: Գործող շուկայական արժեքից տարբերվող գինը համարվում է էականորեն բարձր, եթե այն գործող շուկայական արժեքից տարբերվում է նվազագույնը քսան տոկոսը գերազանցող չափով»:

4) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«3. Կուսակցությունն իրավունք չունի զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ, ինչպես նաև լինելու առևտրային իրավաբանական անձի հիմնադիր կամ մասնակից, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի»:

5) 4-րդ մասում «Ազգային ժողովի ընտրություններում» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև համայնքների՝ համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու ընտրություններում» բառերը:

6) լրացնել նոր՝ 6-րդ մաս.

«6. Կուսակցության կողմից հիմնադրված զանգվածային լրատվության միջոցների և հրատարակչությունների գործունեության արդյունքում ստացված և կուսակցությանը փոխանցված եկամուտը կարող է օգտագործվել միայն կուսակցության կանոնադրությամբ և ծրագրով սահմանված նպատակների համար:»:

Հոդված 14. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am, հրապարակել ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի վերաբերյալ հաշվետվությունը: Կուսակցությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով պարտավոր է ներկայացնել հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային տեղեկատվություն»:

Հոդված 15. Օրենքի 23-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասի երկրորդ նախադասության մեջ «արգելվում է» բառերից հետո լրացնել «բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի» բառերը,

2) լրացնել 6-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«6. Կուսակցությունը կարող է բանկային հաշիվներ ունենալ միայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող՝ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված բանկերում»:

3) լրացնել 7-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«7. Կուսակցությունը բոլոր դրամական վճարումները կատարում է անկանխիկ հաշվարկներով»:

Հոդված 16. Օրենքի 24-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Կուսակցություններն իրավունք ունեն գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների, ներառյալ՝ փոխառությունների, երրորդ անձի կողմից կուսակցության պարտքի մարման, պարտատիրոջ կողմից կուսակցության պարտքը ներելու, ինչպես նաև կուսակցության օգտին կատարվող այլ գործունեության տեսքով նվիրատվություններ ստանալու ֆիզիկական անձանցից, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1 մաս.

«1.1. Նվիրատվություն է համարվում նաև կուսակցության օգտին անհատույց աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը, կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցումը, օգտագործման հանձնելը կամ նույն կամ համանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գործող շուկայական արժեքից էականորեն ցածր գնով կուսակցության օգտին աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման կամ կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցման կամ վարձակալության հանձնելու արդյունքում կուսակցության մոտ ձևավորված խնայողությունը (բնեղենով նվիրատվություն): Գործող շուկայական արժեքից տարբերվող գինը համարվում է էականորեն ցածր, եթե այն գործող շուկայական արժեքից տարբերվում է նվազագույնը քսան տոկոսը գերազանցող չափով»:

3) լրացնել 1.2. մաս.

«1.2. Սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված բնեղենով նվիրատվությունները ենթակա են հաշվարկման իրենց շուկայական արժեքով և պետք է արտացոլվեն կուսակցության տարեկան հաշվետվության մեջ, իսկ դրանց արժեքը (գումարը՝ դրամական արտահայտությամբ՝ պայմանագրով նախատեսված

արժեքի և շուկայական արժեքի տարբերության մասով) ներառվում է նվիրատվությունների՝ սույն օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափում»:

4) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2. Կուսակցությանը տրվող նվիրատվության, ինչպես նաև անդամավճարի և մուտքի վճարի ընդհանուր չափը՝ դրամական արտահայտությամբ, մեկ տարվա ընթացքում չի կարող գերազանցել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրհազարապատիկը, այդ թվում՝ մեկ ֆիզիկական անձի կողմից՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկը:

Սույն հոդվածով սահմանված՝ նվիրատվությունների առավելագույն սահմանաչափը չի ներառում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում նախընտրական հիմնադրամներին կատարված նվիրատվությունները:

Ֆիզիկական անձը կարող է սույն մասի առաջին պարբերությունում նշված նվիրատվության առավելագույն սահմանաչափի շրջանակներում նվիրատվություն կատարել մեկ և ավելի կուսակցության»:

5) 3-րդ մասի առաջին նախադասությունն ուժը կորցրած ճանաչել:

6) 4-8-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4. Նվիրատվություններ չեն թույլատրվում՝

1) օտարերկրյա պետություններից,

2) ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից, այդ թվում՝ օտարերկյա իրավաբանական անձանցից և միջազգային կազմակերպություններից,

3) պետական և համայնքային բյուջեներից և (կամ) արտաբյուջետային միջոցներից, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն կատարվող ֆինանսավորման,

4) պետական և համայնքային կազմակերպություններից, պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններից,

5) անանուն անձանցից:

5. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը գերազանցող նվիրատվությունների ստացման դեպքում կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, կուսակցության համար սահմանված նվիրատվության, անդամավճարի կամ մուտքի վճարի սահմանված չափը

գերազանցող մասը կամ նվիրատվությունն ամբողջությամբ վերադարձնել նվիրատուին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցել պետական բյուջե:

6. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ չթույլատրված նվիրատվությունների ստացման դեպքում կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, դրանք փոխանցել պետական բյուջե:

7. Նվիրատվություն կատարող անձինք պարտավոր են նշել իրենց անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի համարը:

8. Կուսակցությանն օրենքով սահմանված դրամական հատկացումները կատարվում են միայն անկանխիկ»:

7) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1. -ին մաս՝

«8.1. Սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված նվիրատվությունների դեպքում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը գերազանցելիս կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, նվիրատվությունը, նվիրատվությանը համարժեք դրամական գումարը կամ նվիրատվության սահմանված չափը գերազանցող դրամական գումարը վերադարձնել նվիրատուին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցել պետական բյուջե: Եթե նվիրատվությունն ստացվել է սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ չթույլատրված աղբյուրներից, ապա կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, նվիրատվությունը, նվիրատվությանը համարժեք դրամական գումարը կամ նվիրատվության սահմանված չափը գերազանցող դրամական գումարը փոխանցել պետական բյուջե»:

8) 9-րդ մասում «հոդվածի 4-րդ և 5-րդ» բառերը փոխարինել «հոդվածի 4-րդ, 5-րդ և 8.1-ին» բառերով:

9) լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մաս.

«10. Սույն օրենքի իմաստով նվիրատվություն չի համարվում կամավորների կողմից, ներառյալ՝ վերջիններիս կողմից անձնական գույքի օգտագործմամբ (բացառությամբ տրանսպորտային միջոցների և անշարժ գույքի) կատարված աշխատանքը կամ ծառայությունների մատուցումը, ինչպես նաև տեղական կամ միջազգային համագործակցության շրջանակներում կուսակցությանը ու նրա անդամներին ուսումնառության, վերապատրաստման, համաժողովներին, սեմինարներին ու նմանատիպ այլ միջոցառումներին մասնակցության նպատակով հատուցված համապատասխան ողջամիտ ծախսերը:

Սույն հոդվածի իմաստով աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը չի համարվում կամավոր աշխատանք, եթե դրանց կատարման համար պահանջվում է որոշակի մասնագիտական որակավորում, դրանց դիմաց աշխատանք կատարողը կամ ծառայությունները մատուցողը այլ դեպքերում սովորաբար ստանում է հատուցում և աշխատանքի կամ ծառայության մատուցման տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը: Այդ ծառայությունները համարվում են բնեղենով նվիրատվություն և ներառվում նվիրատվությունների՝ սույն օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափում»:

10) լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ մաս.

«11. Կուսակցության հետ վարկային պայմանագիր կնքելու դեպքում այդ պայմանագրի պայմանները, ներառյալ՝ վարկի տոկոսադրույքը պետք է համապատասխանեն շուկայում գործող սովորական պայմաններին և չպետք է էականորեն տարբերվեն այլ անձանց հետ նույնանման պայմաններում կնքվող պայմանագրերի պայմաններից:

11) լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-րդ մաս.

«12. Վարկային պայմանագրի դեպքում արգելվում է վարկը կամ դրանց տոկոսները ամբողջությամբ կամ մասնակի վճարելու պարտականությունից կուսակցությանն ազատելը (պարտքը ներելը) կամ պայմանագիրը կնքելուց հետո տոկոսադրույքի վերանայումը, որի արդյունքում տոկոսադրույքը շուկայականից էականորեն կնվազի կամ այդ պայմանագրերի հետ փոխկապակցված գրավի պայմանագիրը վաղաժամկետ լուծելը կամ պայմանագրի պայմանների այնպիսի փոփոխությունները, որոնք կարող են դիտվել ակնհայտ անհավասար այլ անձանց հետ կնքվող համանման պայմանագրերի պայմանների համեմատ կամ փաստացի կարող են հավասարվել պարտքը ներելուն: Սույն դրույթների խախտումը կարող է դիտվել որպես իրավաբանական անձի կողմից նվիրատվություն և առաջացնել օրենքով սահմանված պատասխանատվություն»:

12) լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ մաս.

«13. Սույն հոդվածի 11-րդ և 12-րդ մասերի դրույթների խախտման արդյունքում կուսակցության կողմից ձեռք բերված եկամուտը (խնայողությունը) համարվում է օրենքով արգելված նվիրատվություն և ենթակա է փոխանցման պետական բյուջե՝ սույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան: Սույն դրույթների խախտումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն»:

13) լրացնել հետևյալ բովանդակությամբ 14-րդ մաս.

«14. Կուսակցության հետ բանկային ավանդի պայմանագիր կնքելիս պայմանագրի պայմանները, ներառյալ՝ բանկային ավանդի տոկոսադրույքը պետք է համապատասխանեն շուկայում գործող սովորական պայմաններին և չպետք է էականորեն տարբերվեն այլ անձանց հետ նույնանման պայմաններում կնքվող պայմանագրերի պայմաններից: Եթե բանկային ավանդի տոկոսադրույքը էականորեն գերազանցում է համանման պայմանագերի դեպքում առաջարկվող տոկոսադրույքը, ապա ավանդի տոկոսների՝ համանման պայմանագրերի համեմատ էականորեն գերազանցող մասը դիտվում է որպես օրենքով չթույլատրված աղբյուրից նվիրատվություն, և ենթակա է փոխանցման պետական բյուջե՝ սույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան: Սույն մասի դրույթների խախտումը կարող է դիտվել որպես իրավաբանական անձի կողմից նվիրատավություն և առաջացնել օրենքով սահմանված պատասխանատվություն»:

Հոդված 17. Օրենքի 25-րդ հոդված լրացնել 3-րդ մասով.

«3. Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում կուսակցությունների՝ օրենքով սահմանված դեպքերում հաշվետվությունների հրապարակումը, ինչպես նաև հայտարարություններն ու ծանուցումներն իրականացվում են անվճար:

Հոդված 18. Օրենքի 26-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 26. Կուսակցությունների պետական ֆինանսավորումը

1. Կուսակցությունների պետական ֆինանսավորումն (պետական սուբսիդավորում) իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ նպատակ ունենալով խթանելու որոշակի հանրային աջակցություն ունեցող և եկամտի այլ էական աղբյուրներ չունեցող կուսակցությունների կենսունակությունն ու ինքնուրույնությունը: Այդ ծախսերն արտացոլվում են պետական բյուջեում առանձին հոդվածով:

2. Պետական ֆինանսավորումը կազմված է երկու մասից՝ պետական ընդհանուր ֆինանսավորում և պետական նպատակային ֆինանսավորում: Յուրաքանչյուր տարվա համար պետական ընդհանուր ֆինանսավորումը կուսակցություններին տրամադրվում է կիսամյակային սկզբունքով, բայց ոչ շուտ, քան Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կուսակցության տարեկան հաշվետվության ստուգումը: Պետական նպատակային ֆինանսավորումը

յուրաքանչյուր տարվա համար տրամադրվում է միանվագ՝ պայմանավորված կուսակցությունների կառուցվածքով և գործունեությամբ:

3. Պետական ֆինանսավորում հատկացվում է այն կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին), որի ընտրական ցուցակն Ազգային ժողովի վերջին ընտրությունների ժամանակ ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն երկու տոկոսը, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ յոթ տոկոսը: Պետական ֆինանսավորումը հատկացվում է միայն այն կուսակցությունների դաշինքներին, որոնք հաղթահարել են «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված ընտրական արգելապատնեշը:

4. Պետական բյուջեի միջոցները սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված շեմը հաղթահարած յուրաքանչյուր կուսակցությանը բաշխվում են հետևյալ բանաձևով.

1) 2-ից մինչև 5 տոկոս ձայներ ստանալու դեպքում՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափով՝ յուրաքանչյուր ձայնի դիմաց,
2) 5-ից մինչև 20 տոկոս ձայներ ստանալու դեպքում՝ մինչև 5 տոկոսի սահմաններում տրված յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափով, իսկ 5-ից մինչև 20 տոկոսի սահմաններում տրված յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի կեսի չափով,
3) 20 և ավելի տոկոս ձայներ ստանալու դեպքում՝ մինչև 5 տոկոսի սահմաններում տրված յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափով, 5-ից մինչև 20 տոկոսի սահմաններում՝ յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի կեսի չափով, իսկ 20 տոկոսը գերազանցող սահմաններում տրված յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի քառորդի չափով:

5. Յուրաքանչյուր կուսակցության համար պետական ընդհանուր ֆինանսավորման ծավալը հավասար է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված բանաձևի արդյունքում ստացված գումարի 60 տոկոսին:

6. Յուրաքանչյուր կուսակցության համար պետական նպատակային ֆինանսավորման ծավալը հավասար է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված բանաձևի արդյունքում ստացված գումարի 40 տոկոսին:

7. Եթե հաշվետու տարում կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչների թիվը գերազանցում է 40 տոկոսը, ապա կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման կեսը: Եթե կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչների թիվը կազմում է 20-40 տոկոս, ապա կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման քառորդը: Եթե կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչների թիվը պակաս է 20 տոկոսից, ապա կուսակցությանը պետական նպատակային ֆինանսավորման կեսը չի տրամադրվում: Սույն մասով նախատեսված նպատակային ֆինանսավորումը կուսակցությանը տրամադրվում է կանանց, երիտասարդներին, հաշմանդամություն ունեցող անձանց և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին կուսակցության գործունեության մեջ ներգրավելուն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով:

8. Եթե կուսակցությունը հաշվետու տարում ունեցել է տարածքային ստորաբաժանումներ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն ½-ում, ապա կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման քառորդը: Սույն մասով նախատեսված նպատակային ֆինանսավորումը կուսակցությանը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության մարզերում կուսակցության տարածքային ներկայացվածության և տարածքային ստորաբաժանումների գործունեության ապահովման նպատակով:

9. Կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման մյուս քառորդը, եթե կուսակցությունը հաշվետու տարում իրականացրել և հրապարակել է կուսակցության գաղափարախոսության, ծրագրային նպատակների և հանրային քաղաքականության հարցերի մասին հետազոտություններ: Սույն մասով նախատեսված նպատակային ֆինանսավորումը կուսակցությանը տրամադրվում է կուսակցության գաղափարախոսության, ծրագրային նպատակների և հանրային քաղաքականության հարցերի մասին հետազոտությունների անցկացման, հրապարակմանն ու տարածման նպատակով:

Պետական նպատակային ֆինանսավորման միջոցով իրականացված հետազոտությունների արդյունքները ենթակա են հրապարակման:

10. Հաշվետու տարում սույն հոդվածի 7-9-րդ մասերով սահմանված՝ նպատակային ֆինանսավորման միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

11. Սույն հոդվածի 7-9-րդ մասերով նախատեսված նպատակային ֆինանսավորման միջոցների օգտագործումը պետք է արտացոլվի կուսակցության տարեկան հաշվետվության մեջ՝ այն ներկայացնելով հաշվետվությանը կից հավելվածով: Եթե հաշվետվության ստուգման արդյունքում պարզվում է, որ կուսակցությունը չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել հաշվետու տարում սույն հոդվածի 7-9-րդ մասերով նախատեսված պահանջները կամ կատարել է նշված պահանջներից միայն մեկը կամ մի քանիսը, ապա հաշվետու տարվան հաջորդող տարվա համար նպատակային ֆինանսավորումը համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասամբ (չկատարված պահանջների մասով) չի տրամադրվում: Պետական նպատակային ֆինանսավորումը տրամադրելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ընդունում է որոշում, որի մասին ընդունման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, տեղեկացնում է Կառավարությանը:

12. Եթե կուսակցությունն իր գույքը հանձնում է վարձակալության կամ բանկային ավանդից ստանում է տոկոսներ կամ եկամուտներ է ստանում իր կողմից հիմնադրված զանգվածային լրատվության միջոցի կամ հրատարակչության գործունեության արդյունքում, ապա հաջորդ տարում կուսակցության կողմից ստացվող պետական ֆինանսավորումը նվազեցվում է վարձակալության, բանկային ավանդի կամ իր կողմից հիմնադրված զանգվածային լրատվության միջոցի կամ հրատարակչության գործունեության արդյունքում ստացված և կուսակցությանը փոխանցված եկամտի չափով: Եթե տվյալ տարում գույքի վարձակալության, բանկային ավանդի կամ կուսակցության կողմից հիմնադրված զանգվածային լրատվության միջոցի կամ հրատարակչության գործունեության արդյունքում կուսակցության կողմից ստացված եկամուտը գերազանցում է պետական ֆինանսավորումը, ապա հաջորդ տարվա համար կուսակցության պետական ֆինանսավորումը դադարեցվում է:

13. Սույն օրենքով նախատեսված՝ կուսակցության գույքի վարձակալությունից, բանկային ավանդից կամ կուակցության կողմից հիմնադրված զանգվածային լրատվության միջոցի կամ հրատարակչական կազմակերպության գործունեության արդյունքում ստացված և կուսակցությանը փոխանցված եկամտի մասին տեղեկատվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կուսակցության տարեկան հաշվետվության ստուգումից հետո մեկշաբաթյա ժամկետում փոխանցում է Կառավարություն:

14. Պետական ֆինանսավորման միջոցները կուսակցությունների ընտրական դաշինքին մասնակցող կուսակցությունների միջև բաշխվում են հավասարապես, եթե այլ բան նախատեսված չէ կուսակցությունների ընտրական դաշինքի որոշմամբ:

15. Սույն հոդվածով նախատեսված կուսակցությունների պետական ֆինանսավորումն իրականացվում է տվյալ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ժամանակահատվածում և դադարեցվում Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտման օրը: Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտման ամսվա համար կուսակցության պետական ֆինանսավորման հաշվարկն իրականացվում և ֆինանսավորումը փոխանցվում է ըստ օրերի քանակի՝ մինչև տվյալ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ավարտման օրը:

16. Կուսակցության վերակազմակերպման, լուծարման պետական գրանցման օրվանից, ինչպես նաև կուսակցության գործունեության արգելման մասին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից պետական բյուջեի միջոցների հատկացումը դադարեցվում է»:

Հոդված 19. Օրենքի 6-րդ գլխի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ. «ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ԱՈՒԴԻՏԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄԸ»:

Հոդված 20. Օրենքի 27-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2. Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մայիսի 31-ից ոչ ուշ, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը

(այսուհետ՝ տարեկան հաշվետվություն), իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը:

Հաշվետությունը ներառում է նաև սույն օրենքի 24-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված՝ կուսակցություններին և նրա անդամներին տեղական կամ միջազգային համագործակցության շրջանակներում ստացած նյութական և ոչ նյութական աջակցության նպատակով հատուցված (ներառյալ՝ դասընթացների, ճանապարհածախսի հատուցում և այլն) ծախսերի մասին տեղեկություններ»:

2) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Կուսակցությունն իր հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելուց հետո՝ եռօրյա ժամկետում, պարտավոր է հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով»:

3) 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«7. Կուսակցության տարեկան հաշվետվության ձևը և դրա լրացման կարգը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Կուսակցություններն իրավունք ունեն իրենց հաշվետվությանը կից ներկայացնելու լրացուցիչ բացատրական նյութեր»:

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մաս՝

«8. Կուսակցության տարեկան հաշվետվությունը, ի թիվս այլ տեղեկությունների, պետք է պարունակի կուսակցության՝

1) մուտքերը՝

ա. մուտքի վճարներ,

բ. անդամավճարներ,

գ. ֆիզիկական անձանց նվիրատվություններ,

դ. օրենքով սահմանված կարգով ստացված բյուջետային ֆինանսավորում,

ե. կուսակցության կողմից հիմնադրված զանգվածային լրատվության միջոցների և հրատարակչությունների կողմից հաշվետու տարում կուսակցությանը փոխանցված միջոցները՝ առանձին նշելով զանգվածային լրատվության միջոցների և հրատարակչությունների կողմից հաշվետու տարվա գործունեության արդյունքում ստացված շահույթը,

զ. տեղական և միջազգային համագործակցության շրջանակներում կուսակցությանը ու նրա անդամներին ուսումնառության, վերապատրաստման, համաժողովներին, սեմինարներին ու նմանատիպ այլ միջոցառումներին մասնակցության նպատակով հատուցված համապատասխան միջոցներ,

է. վարկեր և փոխառություններ,

ը. բանկային ավանդների գծով ստացված տոկոսներ,

թ. կուսակցության օգտին անհատույց կատարված աշխատանքներ և մատուցված ծառայություններ,

ժ. քաղաքացիաիրավական այլ գործարքներից՝ կուսակցության գույքի առուվաճառքից, վարձակալությունից և օրենքով չարգելված այլ գործարքներից ստացված միջոցներ,

ժա. այլ մուտքեր:

2) Ելքերը՝

ա. աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված այլ վճարումներ, քաղաքացիրավական պայմանագրերի հիման վրա ծառայությունների մատուցման վճարներ,

բ. հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ,

գ. կոմունալ վճարներ,

դ. գույքի վարձակալության վճարներ,

ե. ապրանքանյութական արժեքների ձեռքբերման համար կատարված վճարումներ,

զ. տրանսպորտային ծախսերի գծով ելքեր,

է. գործուղման ծախսերի գծով ելքեր,

ը. այլ ելքեր,

3) կուսակցության գույքը՝

ա. անշարժ գույք (շենք, շինություն, հողամաս և այլն),

բ. տրանսպորտային միջոցներ,

4) կուսակցության պարտավորությունները՝

ա. բանկերի հանդեպ ունեցած պարտավորություններ,

բ. վարկային կազմակերպությունների հանդեպ ունեցած պարտավորություններ,

գ. փոխատուի հանդեպ ունեցած պարտավորություններ,

դ. այլ պարտավորություններ»:

Հոդված 21. Օրենքի 28-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 28. Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտը**

1. Այն կուսակցությունների տարեկան հաշվետվությունները, որոնց՝ սույն օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված մուտքերը կամ ելքերը հաշվետու տարվա ընթացքում գերազանցել են օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգհազարապատիկը, ենթակա են պարտադիր աուդիտի:

2. Սույն օրենքով սահմանված կարգով պետական բյուջեից պետական ֆինանսավորում ստացած կուսակցությունների տարեկան հաշվետվությունները ենթակա են պարտադիր աուդիտի՝ անկախ հաշվետու տարում սույն օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված մուտքերի կամ ելքերի չափից:

3. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դեպքերում սույն օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված մուտքերի կամ ելքերի չափը հաշվարկելիս դրանում չեն ներառվում սույն օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետի ե. ենթակետով սահմանված՝ կուսակցության կողմից հիմնադրված զանգվածային լրատվության միջոցների և հրատարակչությունների կողմից հաշվետու տարվա գործունեության արդյունքում ստացված ընդհանուր շահույթը: Հաշվարկման ենթակա են միայն կուսակցության կողմից հիմնադրված զանգվածային լրատվության միջոցների և հրատարակչությունների կողմից հաշվետու տարում կուսակցությանը փոխանցված միջոցները:

4. Սույն հոդվածով նախատեսված պարտադիր աուդիտը ֆինանսավորվում է պետական բյուջեի միջոցներից և իրականացվում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բաց մրցույթով ընտրված աուդիտորական կազմակերպությունների կողմից:

5. Կուսակցությունները հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարին աուդիտի կազմակերպման նպատակով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջի հիման վրա հնգօրյա ժամկետում տրամադրում են աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով հայտարարվող մրցույթի անցկացման համար անհրաժեշտ տեղեկություններ»:

Հոդված 22. Օրենքը լրացնել նոր՝ 28. 1-ին հոդվածով.

«Հոդված 28.1. Կուսակցության ղեկավար մարմնի պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման պարտականությունը

1.Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում՝ այդ մարմնի անդամները (այսուհետ նաև՝ հայտարարատու պաշտոնատար անձինք) պարտավոր են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իրենց գույքի և եկամուտների հայտարարագիր, որի ձևանմուշը և հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

2. Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են պաշտոնը ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրեր:

3. Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագերի ներկայացման կարգի նկատմամբ կիրառելի են «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքների համապատասխան նորմերը, բացառությամբ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների կողմից իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ ներկայացնելու պարտականության և պատասխանատվության վերաբերյալ դրույթների:

4. Կուսակցությունը իր ղեկավար մարմնում հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին եռօրյա ժամկետում ծանուցում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ տրամադրելով համապատասխան ակտի պատճենը:

5. Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում՝ այդ մարմնի անդամները ազատվում են սույն հոդվածով նախատեսված հայտարարագիր ներկայացնելու պարտականությունից, եթե «Հանրային ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածի իմաստով հանդիսանում են հայտարարատու պաշտոնատար անձ:

6. Եթե սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված անձը պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագիրը ներկայացնելուց հետո շարունակում է պաշտոնավարել որպես կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում՝ որպես այդ մարմնի անդամ, ապա նա կուսակցությունում պաշտոն ստանձնելու հայտարարագիր չի

ներկայացնում: Այդ դեպքում անձն օրենքով սահմանված կարգով ներկայացնում է տարեկան հայտարարագիր:

7. Եթե սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված անձը պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագիրը ներկայացնելուց հետո մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ն ազատվում է կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում՝ այդ մարմնի անդամի պաշտոնից, ապա պաշտոնը դադարեցնելու օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում կուսակցության պաշտոնի դադարեցման հայտարարագիր:

8. Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձը «Հանրային ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված պաշտոնի նշանակման դեպքում չի ազատվում «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարագիր ներկայացնելու պարտականությունից»:

Հոդված 23. Օրենքի 30-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1.Կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը, ներառյալ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվության ստուգումն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն օրենքով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով»:

2) 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 24. Օրենքի 32-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1) իր գործունեության ընթացքում թույլ է տվել օրենքի կոպիտ խախտում:»,

2) 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչել,

3) 2-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1) կուսակցության կողմից օրենքով չթույլատրված կամ օրենքով սահմանված չափը գերազանցող նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետում պետական բյուջե կամ նվիրատունին փոխանցելու կամ կուսակցության տարեկան հաշվետվությունը օրենքով սահմանված ժամկետում և կարգով հրապարակելու կամ պետական լիազոր մարմնին ներկայացնելու կամ օրենքով սահմանված՝ տարեկան հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ փաստաթղթերը Կոռուպցիայի

կանխարգելման հանձնաժողովին տրամադրելու օրենքով սահմանված կարգը դիտավորությամբ խախտելը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով պատասխանատվության ենթարկվելուց և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կուսակցության գործունեությունը կասեցնելու հնարավորության վերաբերյալ գրավոր նախազգուշացվելուց հետո՝ երեսնօրյա ժամկետում, խախտումը չվերացնելը կամ»

4) 3-րդ և 4-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել,

6) 5-րդ մասում «Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը» բառերով,

7) 9-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«9. Կասեցման ժամանակահատվածում կուսակցությունը չի կարող իրականացնել որևէ գործունեություն, այդ թվում՝ ստանալ սույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված որևէ նվիրատվություն, բացառությամբ անդամավճարներ հավաքելու, պայմանագրային, այդ թվում՝ աշխատանքային պարտավորությունները կատարելու, հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարումներ վճարելու հետ կապված գործողությունների, ինչպես նաև այն գործողությունների, որոնք անհրաժեշտ են կասեցման համար հիմք հանդիսացող խախտումները վերացնելու և կուսակցության՝ որպես իրավաբանական անձի բնականոն գործունեությունն ապահովելու համար»:

8) լրացնել 10-րդ մասով.

«10. Կուսակցության գործունեության կասեցումը հիմք չէ այդ կուսակցության առաջադրմամբ ընտրված պատգամավորի, համամասնական ընտրակարգով ընտրված՝ համայնքի ավագանու անդամի լիազորությունները կամ Ազգային ժողովում տվյալ կուսակցությունը ներկայացնող խմբակցության գործունեությունը դադարեցնելու համար»:

Հոդված 25. Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասում «դադարեցնելու» բառից հետո լրացնել «կամ Ազգային ժողովում տվյալ կուսակցությունը ներկայացնող խմբակցության գործունեությունը դադարեցնելու» բառերը:

Հոդված 26. Օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասում «Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» բառերով:

Հոդված 27. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ կետերը, 14-րդ հոդվածը, 16-րդ հոդվածի 3-րդ կետը, 18-24-րդ և 26-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

3. Կուսակցությունները պարտավոր են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022 թվականի հունվարի 1-ը իրենց կանոնադրությունները և կառուցվածքը համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին և պետական գրանցման նպատակով կանոնադրության փոփոխությունները ներկայացնել պետական լիազոր մարմին: Սույն հոդվածով նախատեսված պետական գրանցման գործառույթի դիմաց պետական տուրք չի գանձվում: 2022 թվականի հունվարի 1-ից հետո սույն օրենքի փոփոխությամբ պայմանավորված՝ կանոնադրության փոփոխությունները պետական գրանցման ներկայացնելու դեպքում կուսակցությունը չի ազատվում օրենքով սահմանված պետական տուրքը վճարելու պարտականությունից: Սույն մասով սահմանված ժամկետում կուսակցության կանոնադրությունը սույն օրենքի պահանջներին չհամապատասխանեցնելու դեպքում կուսակցության կանոնադրությունը գործում է այնքանով, որքանով այն չի հակասում սույն օրենքին և կուսակցությունների գործունեությունը կարգավորող այլ օրենքներին:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող օտարերկրյա բանկերում բանկային հաշիվներ ունեցող կուսակցությունները փակում են իրենց բանկային հաշիվները:

5. Կուսակցությունները 2021 թվականի իրենց տարեկան հաշվետվությունները 2022 թվականին ներկայացնում են սույն օրենքով սահմանված կարգով:

6. Սույն օրենքի 19-24-րդ և 26-րդ հոդվածներով սահմանված դրույթներն ուժի մեջ մտնելուց հետո՝ քսանօրյա ժամկետում, Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն իր մոտ առկա՝ կուսակցությունների ընթացիկ ֆինանսական վերահսկողության հետ կապված փաստաթղթերի փաթեթը փոխանցում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

7. Սույն օրենքով նախատեսված կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում՝ այդ մարմինների անդամները մինչև 2022 թվականի մարտի 31-ը Կոռուպցիայի կանխարգելման

հանձնաժողով են ներկայացում 2021 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՔՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐԿԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը ցանկացած ժողովրդավարական հասարակության կարևորագույն հենասյուներից են և ազատ ու արդար ընտրությունների նախապայման: Կուսակցությունները նպաստում են ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը և ապահովում ժողովրդի՝ հասարակության և պետության քաղաքական կյանքին մասնակցությունը: Սահմանադրությամբ բացառապես կուսակցություններին վերապահված գործառույթի ապահովման՝ Հայաստանում օրենսդիր և գործադիր մարմինների ձևավորմանը մասնակցելու նպատակով կարևոր է կուսակցությունների ստեղծման և թափանցիկ գործունեության համար անհրաժեշտ իրավական երաշխիքների ամրագրումը:

Խորհրդային Միության 70-ամյա միակուսակցական համակարգից հետո 1990թ. Անկախության հռչակագրի ընդունմամբ սկիզբ դրվեց ժողովրդավարական, իրավական համակարգի արմատավորմանը՝ նախանշելով բազմակուսակցական համակարգի ձևավորման նախադրյալները: Բազմակուսակցական համակարգի ձևավորման մեկնարկը տեղի ունեցավ ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1991 թվականի փետրվարի 26-ին ընդունված «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքի ընդունմամբ, որն ամրագրում էր կուսակցությունների ձևավորման և գործունեության հիմնադրույթները:[1]

Անկախությունից ի վեր Հայաստանի Հանրապետությունում պարբերաբար իրականացվել են կուսակցությունների կարգավիճակին և գործունեության կարգավորմանն

[1] Տե՛ս «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» 26.02.1991թ. օրենքը, Ն0266-Ի, ՀՀԳԽՏ 1991/14:

ուղղված զգալի օրենսդրական փոփոխություններ: 2002 թվականի հուլիսի 3-ին «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքը փոխարինվեց «Կուսակցությունների մասին» նոր օրենքով, որն առավել համապարփակ կարգավորումներ էր նախատեսում կուսակցությունների կազմակերպման և գործունեության վերաբերյալ:[2] Կուսակցությունների վերաբերյալ հաջորդ խոշոր փոփոխությունը տեղի ունեցավ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների շրջանակներում, երբ 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունվեց «Կուսակցությունների մասին» գործող սահմանադրական օրենքը:

Տարիների ընթացքում կատարված այս փոփոխությունները պետք է նպաստեին կուսակցությունների ստեղծման և գործունեության համար առավել բարենպաստ պայմանների ստեղծմանը, գաղափարական հենք ունեցող կուսակցությունների ձևավորմանն ու կայացմանը, բազմակուսակցական համակարգի զարգացմանը: Գործող օրենքի ընդունմամբ կուսակցությունների ստեղծման և գրանցման կարգավորումները ենթարկվել են զգալի փոփոխությունների, որոնք առավելապես դիտվել են որպես օրենսդրության ազատականացում, մասնավորապես՝ շնորհիվ կուսակցությունների հիմնադրման և հետագայում նաև գրանցման պայմանների դյուրացման: Այդուհանդերձ, տարիների փորձը վկայում է, որ օրենսդրական այս փոփոխությունները աչքի չեն ընկել բավարար արդյունավետությամբ, իսկ բազմաթիվ կարգավորումներ եղել են թերի: Օրենքի կարգավորումից դուրս են մնացել մի շարք առանցքային հիմնահարցեր, որոնց օրենսդրական կարգավորման բացերը խոչընդոտ են հանդիսանում կուսակցությունների ու կուսակցական համակարգի կայացման ու կայունացման (ինստիտուցիոնալացման) ճանապարհին:

Ըստ էության, անցած երեսուն տարիների ընթացքում կենսունակ և մրցակցային բազմակուսակցական համակարգ ձևավորելու խնդիրը հնարավոր եղավ լուծել միայն մասնակիորեն: Հայաստանի Հանրապետությունում ստեղծվեցին բազմաթիվ կուսակցություններ, սակայն այդ կուսակցությունների գործունեության համար հավասար մրցակցային հնարավորությունների դաշտը այդպես էլ չկայացավ:

Ավելին, Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգն այս ընթացքում աչքի է ընկել անձակենտրոն, ապագաղափարական, ներքին ժողովրդավարության ակնհայտ պակաս ունեցող կուսակցությունների առատությամբ, որոնց գործունեության հիմքում հաճախ գերակշռել են առանձին անհատների տնտեսական կամ մասնավոր շահերը և այդ շահերը սպասարկելու համար ներդրված կարողությունները:

Թեև կուսակցությունների գործունեության համար ազատ, նպաստավոր և մրցակցային դաշտի ստեղծման համար օրենսդրական պատշաճ կարագավորումները չեն կարող լինել կուսակցությունների գործունեության միակ երաշիքը, այդուհանդերձ, նման կարգավորումների բացակայությունն էապես նպաստել է կուսակցական համակարգում առկա արատների խորացմանը: Օրենսդրական փոփոխությունների ոչ բավարար արդյունավետության և քաղաքական համակարգի անկատարության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության պատմության ողջ ընթացքում Ազգային ժողովում ներկայացված բոլոր այն կուսակցությունները, որոնք չեն եղել իշխանության մաս, չեն կարողացել վերընտրվել

[2] «Կուսակցությունների մասին» 03.07.2002թ. ՀՕ410-Ն օրենք: Ուժը կորցրել է 01.04.2017թ.:

հաջորդ խորհրդարանական ընտրություններում, մինչդեռ բոլոր այն կուսակցությունները, որոնք իշխանության մաս են կազմել կամ այս կամ այն ձևաչափով համագործակցել են իշխող կուսակցության հետ, իրենց գործունեության ընթացքում կարողացել են ձեռք բերել էական առավելություններ՝ համակարգված ձևով չարաշահելով վարչական ռեսուրսները, ընտրական գործընթացում ներգրավելով բազմաթիվ պետական և համայնքային ծառայողների, ինչպես նաև օգտվել միայն կառավորող ուժին հասանելի այլ հնարավորություններից, որոնք ազդեցություն են ունեցել ընտրությունների արդյունքների վրա և խաթարել մրցակցային կուսակցական համակարգ ունենալու հնարավորությունը: Արդյունքում նման գործելաոճը հանգեցրել է պետական կառավարման համակարգի և կուսակցական գործունեության միջև սահմանների միաձուլման՝ նույնացնելով պետությունը իշխող կուսակցության հետ: Հաճախ նաև հենց օրենսդրական կարգավորումներն են նպաստել նման ոչ մրցակցային խաղի կանոններին: Օրինակ՝ կուսակցություններին տրամադրվող անգամ չնչին հանրային ֆինանսավորման մեծ մասը տրամադրվել է այն կուսակցություններին, որոնք կազմել են իշխանության մաս (տե՛ս Հիմնավորման վերջում ներկայացված աղյուսակում): Խնդիրների մի մասը պայմանավորված է կուսակցությունների ֆինանսավորման և դրա նկատմամբ պատշաճ պետական վերահսկողության թերի կարգավորմամբ և, որպես հետևանք՝ կուսակցական համակարգում անհավասար պայմանների ու անվերահսկելի մրցակցության, ինչպես նաև կոռուպցիոն երևույթների առաջացմամբ:

Գործող օրենքում առկա են նաև մի շարք այլ բացեր և թերություններ, որոնք կանխարգելում են բազմակուսակցական համակարգի ու գաղափարական բազմակարծության պատշաճ զարգացմանը, հակասում են կուսակցությունների գործունեության ազատության սահմանադրական սկզբունքի գործնական իրացմանը, ինչի մասին են վկայում մի շարք փորձագիտական եզրակացություններ, այդ թվում՝ միջազգային չափորոշիչների համապատասխանության վերաբերյալ միջազգային կառույցների հրապարակած կարծիքները (ի թիվ այլոց՝ Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի կողմից հրապարակված կարծիքը 2016 թվականի «Կուսակցությունների մասին» օրենքի նախագծի վերավերյալ[3], Ազգային ժողովի Ընտրական բարեփոխումների աշխատանքային խմբի առաջարկով ներկայացված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 2019 թվականի հոկտեմբերի 11-ի կարծիքը գործող օրենքի վերաբերյալ[4] և այլն):

Այսպիսով, Հայաստանում 2018 թվականի ժողովրդավարական ոչ բռնի Թավշյա հեղափոխությունից սկիզբ առած և դրա նպատակների առանցքը կազմող արմատական քաղաքական փոփոխություններին համընթաց՝ օրակարգային է դարձել ժողովրդավարական հաստատությունների ամրապնդմանն ուղղված բարեփոխումների իրականացումը: Կուսակցությունների գործունեության կարգավորման հիմնական թիրախը պետք է հանդիսանա կուսակցական համակարգի կայունացումը՝ խաղի նոր՝ հավասար կանոնների արմատավորման, բոլոր կուսակցությունների համար՝ ժողովրդի կամքը արտահայտելու նպատակով քաղաքական պայքարին ու ընտրություններին մասնակցությանը նպաստող պայմանների ստեղծման, կուսակցական գործունեության հաշվետվողականության և թափանցիկության ապահովման իրական պայմանների, ինչպես նաև կուսակցությունների ներքին ժողովրդավարության ու

[3] Տ ե ՛ ս https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2016)038-e.
[4] Տե՛ս https://www.osce.org/odihr/437261

ներառականության խթանման միջոցով: Կուսակցությունների և կուսակցական համակարգի կայունացումը ժողովրդավարության արմատավորման (կոնսոլիդացիայի) կարևորագույն նախադրյալ է, և դրան ուղղված միջոցները, այդ թվում՝ հանրային օժանդակության տրամադրումը, Հայաստանում ժողովրդավարության զարգացումն ամրապնդելու կարևորագույն հրամայական:

I. **«Կուսակցությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ**

1) **Կուսակցությունների պետական գրանցումը:** Ներկայումս «Կուսակցությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածը որպես կուսակցության պետական գրանցման պարտադիր նախապայման սահմանում է կուսակցության անդամների տարածքային ներկայացվածությունը, ինչպես նաև սահմանում որոշ թվաքանակով տարածքային ստորաբաժանումներ ունենալու պահանջ: Մասնավորապես՝ գործող օրենքը նախատեսում է, որ կուսակցությունները պետական գրանցման պահին պետք է ունենան Երևան քաղաքում՝ առնվազն երեք տարածքային ստորաբաժանում կամ մարզերի 1/3-ում՝ յուրաքանչյուրում առնվազն մեկ ստորաբաժանում կամ Երևանում և մարզերի 1/4-ում՝ յուրաքանչյուրում առնվազն մեկ ստորաբաժանում: Համանման պահանջ է ներկայացվում նաև անդամներին, որոնք պետք է ներկայացնեն Երևան քաղաքը կամ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/3-ը կամ Երևան քաղաքը և Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/4-ը:

Խնդիրը նրանում է, որ կուսակցության անդամության տարածքային բաշխվածության, ինչպես նաև տարածքային ստորաբաժանումների պարտադիր առկայության պահանջները, հատկապես ժամանակակից հաղորդակցության միջոցների զարգացման պայմաններում ոչ միայն չեն հետապնդում որևէ արդարեցված նպատակ, այլև բավականին դժվարեցնում են կուսակցություն ստեղծելու գործընթացը՝ անհարկի սահմանափակելով կուսակցությունների ստեղծման հնարավորությունը: Այսպիսի մոտեցումը չի բխում գաղափարական բազմակարծության և բազմակուսակցական համակարգի երաշխավորման վերաբերյալ սահմանադրական նորմերից: Տարածքային ներկայացվածության պահանջից խուսափելու առաջարկություն առկա է նաև 2016թ. «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից ներկայացված համատեղ կարծիքում:[5] Մասնավորապես՝ նշում է, որ «կուսակցության անդամների աշխարհագրական բաշխվածության պահանջը կարող է դիտարկվել որպես տեղական և մարզային մակարդակով քաղաքական մասնակցության խիստ սահմանափակում, ինչն անհամատեղելի է միավորումների ազատության հետ:[6] Ավելին, ինչպես նշվում է Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ կարծիքում, ՄԻԵԴ-ն իր նախադեպային իրավունքում մտահոգություն է հայտնել կուսակցությունների տարածքային ներկայացվածության պահանջի վերաբերյալ:[7]

---

[5] CDL-PI (2016)012, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ կարծիք, կետ24:

[6] CDL-PI (2016)012, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ կարծիք, կետ24:

[7] Տե՛ս ՄԻԵԴ-ի՝ Ռուսաստանի Հանրապետական կուսակցությունն ընդդեմ Ռուսաստանի գործով 2011 թվականի ապրիլի 12-ի վճիռը, թիվ 12976/07, 124- 131-րդ պարբերություններ:

2) **Կուսակցության ղեկավար մարմինները**: Ներկայումս «Կուսակցությունների մասին» օրենքով նախատեսվում են երկու ղեկավար մարմիններ՝ կուսակցության համագումարը՝ որպես բարձրագույն ղեկավար մարմին և մշտապես գործող ղեկավար մարմինը, որը կարող է լինել ինչպես միանձնյա, այնպես էլ կոլեգիալ մարմին: Ընդ որում, համագումարը, ըստ օրենքի, պետք է գումարվի առնվազն չորս տարին մեկ անգամ (հոդվ. 17):

Թեև կուսակցություններն իրենք են որոշում իրենց կառուցվածքը և մարմինների ձևավորման կարգը, այդուհանդերձ, պետությունն իր օրենսդրական կարգավորումներով պետք է նպաստի կուսակցության ներսում ներքին ժողովրդավարության զարգացմանը: Այդ օրենսդրական լուծումներն ընտրելիս պետք է հաշվի առնել առաջին հերթին երկրում ձևավորված մշակույթը: Այս առումով Հայաստանի Հանրապետությունում կուսակցությունները հաճախ եղել են անձնակենտրոն, կառավարվել միանձնյա՝ խոչընդոտելով կուսակցության անդամների կողմից ակտիվ քաղաքական մասնակցությունը կուսակցության գործունեությանը: Թերևս դրան նպաստել են օրենքում կուսակցության ներքին ժողովրդավարությանը խթանող ոչ բավարար իրավական լուծումները: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է համագումարի՝ որպես կառավարման բարձրագույն մարմնի գումարման հաճախականությանը և մշտապես գործող ղեկավար մարմնի՝ միանձնյա ձևավորելու հնարավորությանը: Կուսակցության համագումարը հրավիրվում է կուսակցության կանոնադրությամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան չորս տարին մեկ անգամ: Ընդ որում, այն կարող է հրավիրել մշտապես գործող ղեկավար մարմինը, որը, ինչպես նշվեց, կարող է ձևավորվել նաև միանձնյա: Այս կարգավորումներն ի զորու են հանգեցնելու նրան, որ նվազագույնը չորս տարի կուսակցության ներքին գործունեությունը դուրս մնա կուսակցության որևէ կոլեգիալ մարմնի, մասնավորապես՝ համագումարի ազդեցությունից: Գործող կարգավորումների պայմաններում կուսացկության մշտապես գործող ղեկավար մարմինը կարող է չորս տարի փաստացի հաշվետու չլինել կուսակցությանը:

Կուսակցության ներսում ներքին ժողովրդավարությունը խթանելու տեսանկյունից կարևոր է առանցքային հարցերով որոշումների ընդունման գործընթացին կուսակցության անդամների առավելագույն ներգրավումը: Այս առումով ընտրական ցուցակների ձևավորումը թերևս կուսակցության անդամների համար առավել հետաքրքրություն ներկայացնող հարցերից է: «Կուսակցությունների մասին» գործող օրենքը **ընտրական ցուցակների** ձևավորման հարցի կարգավորումը թողնում է կուսակցության կանոնադրությանը (հոդվ. 16, մաս 3), ինչը նշանակում է, որ ընտրական ցուցակներն, ըստ էության, կարող են ձևավորվել նաև միանձնյա մշտապես գործող ղեկավար մարմնի կողմից: Ընդ որում, այս դրույթը, համաձայն անցումային դրույթների, պետք է ուժի մեջ մտնի միայն 2021թ. հունվարի 1-ից (հոդվ. 36, մաս 5):

3) **Կանանց ներկայացվածությունը կուսակցության ղեկավար մարմիններում**: Հայաստանում երկար ժամանակ շարունակում է չլուծված մնալ քաղաքական գործունեության մեջ կանանց բավարար չափով ներգրավման, հատկապես՝ կուսակցության ղեկավար մարմիններում կանանց բավարար ներկայացվածությունն ապահովելու հարցը: Միջազգային պրակտիկայում քաղաքական գործունեության ներառականությունը ապահովելու ուղղությամբ գործադրվում են մի

շարք օրենսդրական գործիքներ: Այդ գործիքների շարքում են կանանց համար նախատեսված քվոտաները:

Քաղաքական և հասարակական կյանքում կանանց ներգրավելու մասին դրույթներ են պարունակվում բազմաթիվ միջազգային փաստաթղթերում: Դեռևս 2016 թվականի «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ կարծիքում նշվում է կանանց քաղաքական մասնակցությունը բարելավելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին՝ հղում կատարելով մի շարք միջազգային փաստաթղթերի:[8] Մասնավորապես՝ «Քաղաքական և հասարակական կյանքում կանանց մասնակցության մասին» ԵԱՀԿ նախարարների խորհրդի թիվ 07/09 որոշմամբ «բոլոր քաղաքական ուժերին կոչ է արվում խթանել քաղաքական կուսակցություններում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունը՝ որոշումների կայացման բոլոր մակարդակներում ընտրովի պետական պաշտոններում կանանց և տղամարդկանց ավելի հավասարակշռված ներկայացուցչություն ապահովելու նպատակով»:[9] «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի[10]՝ Ուղեցույցում նշվում է, որ օրենսդրությունը մշակելիս անհրաժեշտ է ձգտել, որ կանայք կարողանան լիակատար մասնակցություն ունենալ կուսակցություններում, որն իրենց քաղաքական իրավունքներից լիովին օգտվելու հիմնական միջոցներից է:[11] Այս նպատակին հասնելու համար դիտարկվում են մի շարք եղանակներ, ինչպիսիք են կուսակցության ներքին կանոնակարգերը կամ օրենսդրությունը:[12]

4) Կուսակցությունների ֆինանսավորումը: Ժողովրդավարական հասարակությունում իրենց գործառույթները պատշաճորեն իրականացնելու համար կուսակցությունները պետք է ապահովված լինեն մի շարք երաշխիքներով: Դրանցից է հանդիսանում նաև կուսակցությունների համար հավասար հնարավորությունների ապահովումը: Ներկայումս գործող օրենքը կուսակցություններին թույլ է տալիս նվիրատվություններ ստանալ նաև իրավաբանական անձանցից, այդ թվում՝ առևտրային իրավաբանական անձանցից: Իրավաբանական անձի կողմից նվիրատվություն իրականացնելու հնարավորությունը հղի է կոռուպցիոն ռիսկերով. նախևառաջ, դեռևս չկան բավարար երաշխիքներ առ այն, որ վերջնականապես հաղթահարված է իշխանություն հանդիսացող կամ դրա մաս կազմող կուսակցությանը ֆինանսական աջակցության

---

[8] CDL-PI (2016)012, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ կարծիք, կետ 33-36:

[9] MC.DEC/7/09, 2009 թվականի դեկտեմբերի 2, http://www.osce.org/mc/40710?download=true:

[10] Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիա [UN Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women (hereinafter "CEDAW")], որն ընդունվել է Ընդհանուր վեհաժողովի կողմից 1979 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 34/180 բանաձեւով: Հայաստանի Հանրապետությունը Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին կոնվենցիան վավերացրել է 1993 թվականի սեպտեմբերի 13-ին:

[11] Ուղեցույց, 101-րդ պարբերություն:

[12] CDL-PI (2016)012, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ կարծիք, կետ 35:

միջոցով սիրաշահելու լայն տարածված պրակտիկան:[13] Այս առումով, իրավաբանական անձանց կողմից նվիրատվությունների արգելքը արդյունավետ միջոց է բիզնեսի ազդեցությունը քաղաքականության վրա սահմանափակելու համար: Նման մոտեցումը դրական է համարվել նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից՝ հաշվի առնելով ներկայումս միջազգային պրակտիկայում առկա միտումները՝ իրավաբանական անձանց կուսակցության նվիրատուների շարքից բացառելու հարցում:[14]

Նույն տրամաբանությամբ՝ առանձին անհատների կողմից կուսակցությունների ամբողջական գործունեության ֆինանսավորումից խուսափելու, առանձին կուսակցություններ մեծ կարողություններ ունեցող անհատների ակումբեր վերածվելու հնարավորությունը կանխելու նպատակով կարևորվում է անհատների նվիրատվության առավելագույն շեմի սահմանումը: Թեև Հայաստանում ևս կա նման շեմ, սակայն հաշվի առնելով թե՛ Հայաստանի սոցիալ-տնտեսական ցուցանիշները և թե՛ այլ երկներում նման առավելագույն շեմերի համեմատությունը՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանում նախատեսված առավելագույն գումարը նպատակահարմար է կրճատել, ինչպես նաև վերացնել օրենսդրական կարգավորումների բացերը, որ հնարավորություն էր տալիս շրջանցել այդ շեմը՝ անդամավճարների, մուտքի վճարների և այլ տեսակի աջակցության միջոցով:

Միաժամանակ, ֆինանսական թափանցիկության ապահովման նպատակով կարևոր է նվիրատվությունների ու անդամավճարների, ինչպես և ցանկացած այլ ֆինանսական մուտքերի և ելքերի անկանխիկ եղանակով իրականացումը:

Նվիրատվության հասկացությունը: Գործող օրենքով ոչ ամբողջությամբ է բացահայտվում նվիրատվության հասկացությունը: Միջազգային պրակտիկայում նվիրատվությունները բաժանվում են երկու խմբի՝ ֆինանսական և բնեղենով նվիրատվություններ (in-kind contributions):[15] Բանն այն է, որ նվիրատվությունը կարող է հանդես գալ ոչ միայն գույքի (շարժական կամ անշարժ) կամ դրամական տեսքով, այլև երրորդ անձի կողմից կուսակցության հանդեպ իր պարտքը ներելու, երրորդ անձի կողմից իր պահանջի իրավունքը կուսակցության փոխանցելու կամ անհատույց կամ շուկայականից ցածր գնով գույք փոխանցելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու և այլ ձևերով: Համանման դեպքերը պետք է դիտարկվեն որպես նվիրատվություն և դրանց նկատմամբ պետք է տարածվեն նվիրատվությունների վերաբերյալ իրավակարգավորումները: Խնդիրը հատկապես կարևորվում է իրավաբանական անձանց կողմից նվիրատվության արգելքի համատեքստում, քանի որ բնեղենով նվիրատվությունները կարող են իրավաբանական անձանց կողմից նվիրատվությունների արգելքը շրջանցելու միջոց հանդիսանալ:

Իրավաբանական անձանց կողմից նվիրատվությունների արգելքի նախատեսումը օրակարգային է դարձնում նաև կուսակցությունների կողմից վարկեր ներգրավելու կամ ավանդներ ներդնելու հետ կապված հարաբերությունների առանձնահատուկ կարգավորումը:

---

[13] Տե՛ս Public Opinion Survey: Residents of Armenia, September-October 2019, Center for insights in survey research, էջ 60, 62-63: https://www.iri.org/sites/default/files/wysiwyg/iri_poll_armenia_september-october_2019.pdf

[14] CDL-AD(2020)004, կետ 24:

[15] Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի՝ Քաղաքական կուսակցությունների կարգավորման մասին ուղեցույցը, կետ 170: https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)024-e

Օրինակ՝ հնարավոր են իրավիճակներ, որ վարկային տոկոսադրույքը հաշվարկվի սովորաբար կիրառելի տոկոսադրույքից ցածր տոկոսադրույքով կամ սահմանվի տոկոսների հետվճարման այնպիսի երկարատև ժամանակահատված, որը կարող է, ըստ էության, հավասարվել բանկի կողմից վարկի ձևով պարտքը ներելուն: Վարկային պայմանագրի դեպքում իրավաբանական անձանց կողմից նվիրատվությունների արգելքի շրջանցումը հնարավոր է նաև այդ պայմանագրի հիմքում ընկած գրավի պայմանագիրը չեղարկելու միջոցով: Նույն խնդիրը վերաբերում է նաև ավանդի տոկոսադրույքին, որը կարող է էականորեն գերազանցել համանման հանգամանքներում սովորաբար կիրառելի տոկոսադրույքը: Նվիրատվությունների արգելքը շրջանցելու վտանգը առկա է նաև աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման կամ սեփականության իրավունքով գույքի փոխանցման դեպքերում, երբ վերջիններս իրականացվում են անհատույց կամ շուկայական արժեքից էականորեն ցածր գնով:

«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ իր կարծիքում Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը ևս առաջարկում են կարգավորել վարկերի, ապառիկների և պարտքերի միջոցով իրավաբանական անձանց կողմից նվիրատվությունների արգելքը շրջանցելու հնարավորությունը:[16] Այս կապակցությամբ ողջունվել է Իսպանիայի՝ «Կուսակցությունների ֆինանսավորման մասին» օրենքի նախագծում վարկային պայմանագիրը կամ դրա տոկոսները ամբողջությամբ կամ մասնակիորեն չեղարկելու կամ նախատեսված տոկոսադրույքը շուկայական տոկոսադրույքից ավելի ցածրով փոխարինելու արգելքի նախատեսումը:[17] Միաժամանակ, Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ կարծիքում մտահոգություն էր բարձրացվել առ այն, որ կարող է չեղարկվել ոչ թե վարկի, այլ դրա հիմքում ընկած գրավի պայմանագիրը: Ավելին, վարկային պայմանագիրը լուծելու արգելքը կարող է շրջանցվել վարկի անորոշ ձևով տարաժամկետման միջոցով կամ այնպիսի եղանակով, որը գործնականում կնշանակի, որ վարկը երբևէ չի մարվելու:[18] Ուստի խորհուրդ է տրվել վարկի փաստացի չեղարկման դեպքերը ևս ընդգրկել նվիրատվություններին վերաբերող սահմանափակումների մեջ:[19]

5) **Կուսակցությունների պետական ֆինանսավորումը**:

Միջազգային փորձը վկայում է, որ կուսակցությունների և կուսակցական համակարգի կայունացմանն և բիզնեսից կախվածության նվազեցմանն/չեզոքացմանն ուղղված ինստիտուցիոնալ մեխանիզմների շարքում առավել արդյունավետ գործիքների թվում առանձնակի նշանակություն կարող է ունենալ կուսակցությունների հանրային օժանդակության ավելացումը, այդ թվում՝ ուղղակի հանրային ֆինանսավորման ավելացումը: Միջազգային փորձը, ինչպես նաև ոլորտի գիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կուսակցությունների հանրային օժանդակությունը նպաստում է կուսակցական համակարգի համախմբմանը և այսպիսով նաև՝ ժողովրդավարության արմատավորմանը, առանձին կուսակցությունների կենսունակությանը և հետևաբար՝ քաղաքական մրցակցության ամրապնդմանը, կոռուպցիայի կանխարգելմանը, մասնավոր նվիրատվություններից կախվածության կանխմանը և այսպիսով՝

[16] CDL-AD(2020)004, կետ 24:
[17] https://www.legislationline.org/download/id/7479/file/310_POLIT_ESP_30October2017_en.pdf, կետ43-45:
[18] https://www.legislationline.org/download/id/7479/file/310_POLIT_ESP_30October2017_en.pdf, կետ43:
[19] https://www.legislationline.org/download/id/7479/file/310_POLIT_ESP_30October2017_en.pdf, կետ44:

հավասար մրցակցային պայքարի խթանմանը, քաղաքական բեռնաթափման նվազմանը և հաճախ նաև՝ քաղաքական արմատականության (էքստրեմիզմի) կանխմանը:[20]

Մինչև 2018 թվականը Հայաստանի Հանրապետության քաղաքական մրցակցությունը տեղի է ունեցել կուսակցությունների համար ակնհայտորեն անհավասար պայմաններում, ինչին նպաստել է, ի թիվ այլոց, կուսակցությունների ֆինանսավորման թերի կանոնակարգումը՝ մի կողմից, և օրենքով նախատեսված սահմանափակումների համատարած արհամարհումն ու անտեսումը՝ մյուս կողմից: Օրինակ՝ իշխանություն հանդիսացող կուսակցությունները բացահայտորեն օգտվել է հանրային ռեսուրսներից:[21]

Գործող օրենքը ներկայումս նախատեսում է կուսակցությունների պետական ֆինանսավորում, սակայն պետական ֆինանսավորումը հատկացվում է միայն ՀՀ Ազգային Ժողովի ընտրություններում ձայների ընդհանուր թվի երեք տոկոսը ստացած կուսակցություններին (կամ դաշինքներին), իսկ պետական աջակցության ընդհանուր ծավալը սահմանված է նվազագույն աշխատավարձի 0.04-ապատիկի և Ազգային ժողովի վերջին ընտրությունների ժամանակ ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների ընդհանուր թվի արտադրյալի չափից ելնելով, ինչը բազմակի անգամ ցածր է եվրոպական երկրներում կիրառվող պետական օժանդակության ծավալից:

Պետական ֆինանսավորման գործող համակարգը հնարավորություն չի տալիս բավարար չափով ֆինանսավորել հատկապես փոքր կուսակցություններին՝ վերջիններիս դուրս թողնելով պետական աջակցության շրջանակներից: Այն առավելապես հաշվի է առնում ընտրություններում առավելագույն թվով ձայներ ստացած կուսակցության շահերը՝ այդ եղանակով հետագա ընտրություններում ապահովելով լրացուցիչ ֆինանսական առավելություն մյուս կուսակցությունների նկատմամբ:

6) Կուսակցական գործունեության ներառականության խթանումը: Պետական նպատակային ֆինանսավորումը: Առաջարկվող փոփոխությունների առանցքային նպատակներից է քաղաքական գործունեության մեջ ոչ բավարար ներկայացված խմբերի, մասնավորապես՝ կանանց, ազգային փոքրամասնությունների, հաշմանդամների ու երիտասարդների մասնակցության խթանումը: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ թեև վերջին տարիներին, և հատկապես ժողովրդավարական ոչ բռնի Թավշյա հեղափոխության արդյունքում հատկապես կանանց ու երիտասարդների քաղաքական մասնակցությունն աճել է: Այնուամենայնիվ, նրանց թիվը կուսակցություններում ու հատկապես դրանց ղեկավար մարմիններում մնում է չափազանց ցածր:[22]

Կուսակցական գործունեության ներառականությունը խթանելու կարևորագույն գործիքներից է հանրային աջակցության միջոցով ներառականության խթանումը: Այս

[20] Տե՛ս Քաղաքական կուսակցություններին ուղղված պետական ֆինանսավորումը, Ֆերդինանդ Կոզլ, Բերտոլդ հոկտեմբեր 2019, Freidrich Ebert Stiftung: http://library.fes.de/pdf-files/bueros/georgien/15756.pdf

[21] Տե՛ս 2015թ. դեկտեմբերի 6-ի Հայաստանի Հանրապետության սահմանադրական հանրաքվեի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԳ հանրաքվեի փորձագիտական խմբի վերջնական զեկույցը, 5 վեստրվարի 2016թ. Վարշավա, էջ 17-18: https://www.osce.org/files/f/documents/3/b/220951.pdf?fbclid=IwAR3UI_J7NBHYCMfNUZs63e8DhJ8sM0pEBVoGzHMQwQYWHOzNvwp_rutRxD0

[22] Օրինակ՝ ներկայումս ԱԺ-ում ներկայացված կուսակցությունների ղեկավար մարմիններում կանայք միջինում կազմում են ընդամենը 15%:

առումով «Կուսակցությունների մասին» նախկին և ներկա օրենքներում բացակայել է պետական նպատակային ֆինանսավորումը, որը հնարավորություն կտար նպաստելու կուսակցությունների կայացմանը, գաղափարական հենքի վրա հիմնված կուսակցությունների ստեղծմանը կամ դրանց զարգացմանը: Նույնը վերաբերում է նաև կանանց, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների և ոչ բավարար չափով ներկայացված այլ խմբերի ներկայացվածությանը նպաստող քաղաքականության պետական ֆինանսավորմանը: Նախագծով առաջարկվում է պետական ֆինանսավորման մի մասը հատկացնել միայն որոշակի նպատակով՝ դրանց իրականցման համար սահմանելով վերահսկողություն և չկատարման դեպքում՝ բացասական ֆինանսական հետևանքներ:

7) **Կուսակցությունների հաշվետվությունները**:

Հաշվետվությունների ներկայացման ժամկետը: Ներկայումս կուսակցությունները գույքի տարեկան հաշվետվությունները հրապարակում և ներկայացնում են մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 25-ը: Սա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում կուսակցությունները պետք է պատրաստեն գույքի տարեկան հաշվետվությունը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև կազմակերպեն աուդիտի իրականացումը և հաշվետվության հետ մեկտեղ ներկայացնեն նաև հաշվետվության վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը:

Ինչպես նշվեց, Նախագծով, ընդհանոր պետական ֆինանսավորումից զատ, նախատեսվում է նաև նպատակային պետական ֆինանսավորում: Պետական ֆինասավորման միջոցների նպատակային օգտագործման նկատմամբ սահմանվում է վերահսկողություն, որն իրականացնելու է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Հաջորդող տարիների համար կուսակցությունը կարող է ստանալ նպատակային ֆինանսավորում, եթե պատշաճ ձևով օգտագործել է նպատակային պետական ֆինանսավորման միջոցները՝ օրենքով սահմանված նպատակների իրականացման ուղղությամբ: Ընդ որում, ներկայումս կուսակցությունները պետական ֆինանսավորման միջոցները ստանում են եռամսյակային սկզբունքով: Որպեսզի նպատակային ֆինանսավորման միջոցների օգտագործումը ժամանակին ստուգվի և դրա հիման վրա հատկացվի պետական ֆինանսավորումը, առաջանում է կուսակցությունների հաշվետվությունների հրապարակման և ներկայացման ժամկետները փոփոխելու անհրաժեշտություն:

Հաշվետվությունների ձևը: Ներկայումս կուսակցությունների գույքի տարեկան հաշվետվության ձևը սահմանվում է Կառավարության որոշմամբ: Խնդիրը նրանում է, որ հաշվետվության պատշաճ ձևից է կախված կուսակցությունների ֆինանսական գործունեության ստուգման արդյունավետությունը: Այն պետք է սահմանի տեղեկատվության ներկայացման այնպիսի ձև, որը հնարավորություն կտա ամբողջական պատկերացում կազմել ելքերի, մուտքերի և պարտավորությունների վերաբերյալ՝ դրանցից յուրաքանչյուրը ներկայացնելով առանձին տողով: Հաշվետվության ձևը պետք է հնարավորություն տա բացահայտելու կուսակցության եկամուտների աղբյուրները: Այս առումով հաշվետվության ներկայիս ձևը աչքի չի ընկնում տեղեկատվության ամբողջական բացահայտման հնարավորությամբ: Դրանում, օրինակ, ներառված չեն կուսակցության օգտին կատարվող աշխատանքները և ծառայությունները, որոնք կարող են լինել անհատույց: Կամ հաշվետվության ձևը չի սահմանում միջազգային համագործակցության շրջանակներում ստացված ծախսերի բացահայտման մասին առանձին

տող: Այս առումով կարևորվում է հաշվետվության բովանդակությանը վերաբերող հիմնական պահանջների օրենսդրական կարգավորումը:

8) Կուսակցությունների նկատմամբ վերահսկողությունը: Բարեփոխումների հիմանական ուղղություններից է կուսակցությունների նկատմամբ, հատկապես՝ ֆինանսական գործունեության նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացումը: Ներկայումս կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը վերապահված է Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը (ՎՎԾ), որը գործում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) կազմում: Այս մարմնի իրավական կարգավիճակը հստակ սահմանված չէ, իսկ լիազորությունների իրականացման՝ օրենքով սահմանված գործիքակազմը՝ անբավարար՝ արդյունավետ վերահսկողական գործառույթ իրականացնելու համար: Այս մասին են վկայում նաև միջազգային կազմակերպությունների դիտարկումները, մասնավորապես՝ ԵԱՀԿ ԺՄԻԳ-ի՝ ընտրական գործընթացը գնահատող զեկույցները, ինչպես նաև Վենետիկի հանձնաժողովի՝ «Կուսակցությունների մասին» գործող օրենքի վերաբերյալ կարծիքը:[23] Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը նախկինում ընդգծել են կուսակցության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի ինստիտուցիոնալ կարգավիճակի հստակեցման անհրաժեշտությունը՝ նշելով անկախ ինստիտուցիոնալ վերահսկողության առավելությունը:[24] Հատկանշական է ԵԱՀԿ ԺՄԻԳ-ի՝ 2017 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում հրապարակած զեկույցի հետևյալ հատվածը, ըստ որի՝ «Ըստ Ընտրական օրենսգրքի՝ ՎՎԾ-ն պետք է գործի ԿԸՀ-ից անկախ, սակայն օրենքը հստակ չի սահմանում նրա ինստիտուցիոնալ կարգավիճակը կամ աշխատակարգը: ՎՎԾ-ին ունի ԿԸՀ-ից իրական անկախության պակաս, քանի որ վերջինս է նշանակում ու պաշտոնից ազատում ՎՎԾի ղեկավարին: Բացի այդ, ՎՎԾ-ն չի կարող իր նախաձեռնությամբ որևէ վարչական վարույթ սկսել կամ վիճարկել ԿԸՀ որոշումները: Խորհրդարանական կուսակցությունների կողմից վեց աուդիտորներ էին նշանակվել ՎՎԾ-ի հետ աշխատելու համար, սակայն նրանց գործողությունները բավարար կերպով կանոնակարգված չէին, ոչ էլ իրականացվել են միատեսակ և հետևողական կերպով»:[25]

Չնայած բոլոր հորդորներին՝ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կարգավիճակի անկախության ապահովման ուղղված քայլերը սահմանափակվեցին այն մարմնի անկախության մասին 2016թ. Ընտրական օրենսգրքում ձևական նշում կատարելով: Կուսակցությունների նատմամբ պատշաճ վերահսկողությունը երաշխավորելու տեսանկյունից կարևորվում է անկախ և մասնագիտացված մարմնի կողմից այդ գործառույթի իրականացումը:

9) Կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտը: Գործող օրենքով կուսակցությունների հաշվետվությունների աուդիտի կազմակերպումը ամբողջությամբ

---

[23] Տ ե ՛ս https://www.osce.org/hy/odihr/elections/armenia/413564?download=true; https://www.osce.org/hy/odihr/elections/armenia/333491?download=true; https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2016)038-e:

[24] CDL-PI (2016)012, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ կարծիք, կետ 44:

[25] 2017թ. ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրություններ/ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, Դիտորդական առաքելության վերջնական զեկույց, https://www.osce.org/hy/odihr/elections/armenia/333491?download=true, է ջ 20:

վերապահված է կուսակցություններին: Մինչդեռ դրա պատշաճ իրականացումը պահաջում է համապատասխան ֆինասական միջոցներ: Բացակայում է կուսակցությունների հաշվետվությունների աուդիտի կազմակերպման նկատմամբ որևէ պետական վերահսկողություն:

10) Կուսակցության գործունեության կասեցումը: Գործող օրենքով կուսակցության գործունեությունը ենթակա է կասեցման, եթե կուսակցությունը իր գործունեության ընթացքում թույլ է տվել օրենքի կոպիտ խախտում կամ ինքնուրույն կամ կուսակցությունների դաշինքի կազմում կամ այլ կուսակցության ընտրական ցուցակի կազմում երկու անգամ անընդմեջ չի մասնակցել Ազգային ժողովի կամ համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքների ավագանիների ընտրություններին:

Ընտրություններին չմասնակցելու հիմքով կուսակցությունների գործունեության կասեցման հնարավորությունը անհրաժեշտ է դիտարկել կուսակցությունների գործունեության ազատության սկզբունքի լուսի ներքո: Խնդիրը նրանում է, որ կուսակցությունները կարող են մասնակցել հասարակության քաղաքական կյանքին նաև խորհրդարանից դուրս և, ընդհանրապես, առանց ընտրություններին մասնակցելու: Վերջիններս իրենց քաղաքական ակտիվությամբ կարող են նպաստել ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը: Այս առումով արդարացված չէ կուսակցությունների գործունեության կասեցումը ընտրություններին չմասնակցելու հիմքով: Կուսակցությունները ազատ են իրենց իրավաչափ գործունեության եղանակները, մեթոդները և ձևերը որոշելիս, և պետական ներկայացուցչական մարմինների ընտրություններին մասնակցելը կուսակցությունների իրավունքն է և ոչ թե պարտականությունը:[26] Ավելին, նշված կարգավորումը խնդրահարույց է նաև Սահմանադրական դատարանի 2006թ. դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-669 որոշմամբ արտահայտված դիրքորոշմանը հակասելու պատճառով:

Իր հերթին, օրենքի կոպիտ խախտման հիմքով կուսակցության գործունեության կասեցման վերաբերյալ ձևակերպումը Վենետիկի հանձնաժողովի կողմից համարվել է չափազանց ընդհանրական, որը գործնականում կարող է հանգեցնել կուսակցությունների գործունեությանը անհամաչափ միջամտության: Ուստի անհրաժեշտություն է առաջանում շտկել այս դրույթը՝ առավել հստակություն մտցնելով կոպիտ խախտում հանդիսացող գործողությունների (կամ անգործության) սահմանման մեջ:

11) Կուսակցության ղեկավար մարմինների անդամների գույքի և եկամուտների հայտարարագրումը:

Կուսակցությունների գործունեության թափանցիկությունն ամբողջական դարձնելու նպատակով անհրաժեշտությունն է առաջանում սահմանել նաև կուսակցությունների ղեկավար մարմնինների անդամների գույքի և եկամուտների հայտարարագրման պահանջ: Խնդիրը նրանում է, որ կուսակցության ֆինանսավորման վերաբերյալ կարգավորումները հնարավոր է շրջանցել կուսակցության առանձին անդամներին ֆինանսավորելու կամ օրինակ նրանց անունով գույքի ձևակերպման միջոցով, ինչը հնարավորություն չի տա ապահովելու Նախագծով հետապնդվող նպատակների իրականացումը, այն է՝ կուսակցությունների գործունեության ֆինանսական թափանցիկության ապահովումը, վերջիններիս անկախությունը մասնավոր շահերից:

[26] Տե՛ս 2006թ. դեկտեմբերի 22-ի ՍԴՈ669 որոշումը:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

1) **«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու» օրենքի նախագիծ**

ա) Կուսակցությունների պետական գրանցման համար անհրաժեշտ անդամների տարածքային ներկայացվածության և տարածքային ստորաբաժանումների առկայության պարտադիր պահանջի վերացում: Հաշվի առնելով բազմակուսակցական համակարգի կայացման տեսանկյունից կուսակցությունների ստեղծման խոչընդոտների վերացման անհրաժեշտությունը՝ նախածով վերացվել են կուսակցության պետական գրանցման պարտադիր պայման հանդիսացող **անդամների տարածքային ներկայացվածության և տարածքային ստորաբաժանումների առկայության պարտադիր պահանջները:**

բ) Պետական գրանցման երկաստիճան ընթացակարգի վերացում: Ներկայումս կուսակցության հիմանդրաման համար պահանջվում է առնվազն 100 հիմնադրի միաձայն որոշում՝ կուսակցություն հիմնադրելու մասին: Իսկ արդեն պետական գրանցման պահին կուսակցությունը պետք է ունենա նվազագույնը 800 անդամներ: Նախագծով առաջարկվում է վերացնել կուսակցության ստեղծման այս երկաստիճան ընթացակարգը՝ սահմանելով, որ կուսակցություն կարող է հիմնադրվել նվազագույնը 300 հիմնադիների որոշմամբ, որն էլ բավարար է կուսակցության պետական գրանցման համար:

գ) Կուսակցության ղեկավար մարմինները: Նախագծով նախատեսվում է փոփոխել կուսակցության համագումարի գումարման նվազագույն հաճախականությունը: Մասնավորապես՝ այն պետք է գումարվի առնվազն **երեք տարին մեկ անգամ**: Միաժամանակ, նախատեսվել է, որ կուսակցության համագումար կարող են **հրավիրել նաև կուսակցության անդամները**, որոնց թիվը սահմանվում է կուսակցության կանոնադրությամբ:

Կուսակցության ներքին ժողովրդավարությանը խթանելու նպատակով նախատեսվել է նաև կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի՝ **կոլեգիալության սկզբունքով** ձևավորելու պարտադիր պահանջ, որի անդամները պետք է ընտրվեն համագումարի կողմից:

Կուսակցության համար առանցքային նշանակություն ունեցող որոշումների կայացման գործընթացին կուսակցության ադամներին առավելագույնս ներգրավելու նպատակով Նախագծով **համագումարի իրավասությանն է վերապահվել Ազգային ժողովի հերթական ընտրություններում համապետական ընտրական ցուցակում, ինչպես նաև կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում առաջին երեք տասնյակ թեկնածուների հաստատումը**: Ընդ որում, խոսքը վերաբերում է միայն հերթական ընտրություններին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտահերթ ընտրությունների ժամանակ չնախատեսված համագումարի հրատապ հրավիրումը կարող է առանձին դեպքերում կուսակցության համար դժվարություններ առաջացնել: Իսկ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում կուսակցության համապետական և տարածքային ընտրական ցուցակները, ինչպես նաև կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակները հաստատվում են կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կողմից: Մշտական ղեկավար մարմնի կողմից են հաստատվում նաև Ազգային ժողովի հերթական ընտրությունների ընտրական ցուցակները, ինչպես նաև կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակները՝ սկսած թեկնածուների երրորդ տասնյակից:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որը ընտրական ցուցակը համագումարի կողմից հաստատվելուց հետո չեն բացառվում իրավիճակները, որ ցուցակում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն կարող է առաջանալ, ուստի մշտապես գործող ղեկավար մարմնին իրավունք է վերապահել փոփոխություններ կատարել համագումարի կողմից հաստատված ընտրական ցուցակում: Սակայն մշտապես գործող ղեկավար մարմնի փոփոխություններ կատարելու իրավունքը վերաբերում է բացառապես այն դեպքերին, երբ փոփոխություն կատարելու անհրաժեշտությունն առաջացել է կուսակցության կամքից անկախ հանգամանքներում, օրինակ՝ թեկնածուն ինքնաբացարկ է հայտնել, մահացել է և այլն:

Կուսակցության անդամների կողմից որոշումների կայացման հարցում արտաքին ճնշումներից զերծ պահելու և կամարտահայտության ազատությունը ապահովելու նպատակով նախատեսվել է նաև կուսակցության ղեկավար մարմիններ ընտրելիս **գաղտնի քվեարկության** իմպերատիվ պահանջ (հոդվ. 7):

դ) Կուսակցությունների մասնավոր ֆինանսավորումը: Որոշակի խմբային կամ կորպորատիվ շահերից կուսակցությունների կախվածությունը բացառելու նպատակով Նախագծով սահմանվել է **ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից նվիրատվությունների արգելք,** այդ թվում՝ օտարերկյա իրավաբանական անձանցից և միջազգային կազմակերպություններից:

Նվիրատվությունների առավելագույն սահմանաչափը: Կուսակցությունների կախվածությունը մասնավոր անձանցից նվազեցնելու նպատակով նվիրատվությունների առավելագույն սահմանաչափը մեկ տարվա համար կրճատվել է կիսով չափ: Ընդ որում, կուսակցության անդամավճարների շեմը ներառվում է ֆիզիկական անձանց կողմից կատարվող նվիրատվության սահմանաչափում: Մասնավորապես՝ նախատեսվում է, որ կուսակցությանը տրվող **նվիրատվության, ինչպես նաև անդամավճարի և մուտքի վճարի ընդհանուր չափը՝** դրամական արտահայտությամբ, մեկ տարվա ընթացքում չի կարող գերազանցել օրենքով սահմանված **նվազագույն աշխատավարձի հինգհարյուրհազարապատիկը**: Ընդ որում, գործող օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկի համեմատությամբ՝ կրճատվել է **մեկ ֆիզիկական անձի կողմից** մեկ տարվա ընթացքում նվիրատվության առավելագույն սահմանաչափը, որը չի կարող գերազանցել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի **երկուհազարհինգհարյուրապատիկը**: Ավելին, մեկ Ֆիզիկական անձը կարող է օրենքում նշված նվիրատվության առավելագույն սահմանաչափի շրջանակներում նվիրատվություն կատարել մեկ և ավելի կուսակցության:

Միաժամանակ, օրենքով սահմանված՝ **նվիրատվությունների առավելագույն սահմանաչափը չի ներառում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում նախընտրական հիմնադրամներին կատարված նվիրատվությունները**:

Նվիրատվություն: Նախագծով հստակեցվել է «նվիրատվություն» հասկացությունը՝ հաշվի առնելով միջազգային փորձը: Ըստ Նախագծի՝ «կուսակցություններն իրավունք ունեն գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների, ներառյալ՝ փոխառությունների, երրորդ անձի կողմից կուսակցության պարտքի մարման, պարտատիրոջ կողմից կուսակցության պարտքը ներելու, ինչպես նաև կուսակցության օգտին կատարվող այլ գործունեության տեսքով նվիրատվություններ ստանալու ֆիզիկական անձանցից, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի»:

Բնեղենով նվիրատվություն: Նվիրատվությունների շարքում ներառվել են նաև բնեղենով նվիրատվությունները: Մասնավորապես՝ Նախագծի 15-րդ հոդվածով նախատեսվում է, որ **«նվիրատվություն է համարվում նաև կուսակցության օգտին անհատույց աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը, կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցումը, օգտագործման հանձնելը կամ նույն կամ համանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գործող շուկայական արժեքից էականորեն ցածր գնով կուսակցության օգտին աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման կամ կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցման կամ վարձակալության հանձնելու արդյունքում կուսակցության մոտ ձևավորված խնայողությունը (բնեղենով նվիրատվություն):** Ընդ որում, գործող շուկայական արժեքից տարբերվող գինը համարվում է էականորեն ցածր, եթե այն գործող շուկայական արժեքից տարբերվում է **նվազագույնը քսան տոկոսը գերազանցող** չափով: Այս նվիրատվությունները «ենթակա են հաշվարկման իրենց շուկայական արժեքով և պետք է արտացոլվեն կուսակցության տարեկան հաշվետվության մեջ, իսկ դրանց արժեքը **(գումարը՝ դրամական արտահայտությամբ՝ պայմանագրով նախատեսված արժեքի և շուկայական արժեքի տարբերության մասով)** ներառվում է նվիրատվությունների՝ սույն օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափում»:

Վարկեր և ավանդներ: Ընդհանուր առմամբ, կուսակցություններն իրավունք ունեն վարկ վերցնել իրենց գործունեության կամ նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման համար: Խնդիրը նրանում է, որ գործնականում իրավաբանական անձանց կողմից նվիրատվությունների արգելքը հնարավոր է շրջանցել վարկերի և փոխառությունների պայմանագրերի կնքման և հետագայում բանկի կամ վարկային կազմակերպության կողմից պարտքը ներելու կամ շուկայում սովորաբար կիրառվող տոկոսադրույքից էականորեն ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու կամ գրավի պայմանագիրը վաղաժամկետ լուծելու միջոցով, որի դեպքում վարկային պայմանագրի կատարումը ապագայում դրվում է հարցականի տակ, ինչպես նաև այլ եղանակներով: Այս խնդիրներից խուսափելու նպատակով նման դեպքերը ևս պետք է դիտվեն որպես նվիրատվություն և դրանց նկատմամբ կիրառվեն նույն սահմանափակումները: Այս կապակցությամբ Նախագծով սահմանվում է, որ «կուսակցության հետ **վարկային պայմանագիր կնքելու դեպքում** այդ պայմանագրի պայմանները, ներառյալ՝ **վարկի տոկոսադրույքը պետք է համապատասխանեն շուկայում գործող սովորական պայմաններին և չպետք է էականորեն տարբերվեն այլ անձանց հետ նույնանման պայմաններում կնքվող պայմանագրերի պայմաններից**»: Ի հավելումն՝ «վարկային պայմանագրի դեպքում **արգելվում է վարկը կամ դրանց տոկոսները ամբողջությամբ կամ մասնակի վճարելու պարտականությունից կուսակցությանն ազատելը (պարտքը ներելը) կամ պայմանագիրը կնքելուց հետո տոկոսադրույքի վերանայումը, որի արդյունքում տոկոսադրույքը շուկայականից էականորեն կնվազի կամ այդ պայմանագրերի հետ փոխկապակցված գրավի պայմանագիրը վաղաժամկետ լուծելը կամ պայմանագրի պայմանների այնպիսի փոփոխությունները, որոնք կարող են դիտվել ակհայտ անհավասար այլ անձանց հետ կնքվող համանման պայմանագրերի պայմանների համեմատ կամ փաստացի կարող են հավասարվել պարտքը ներելուն»**: Վերոնշյալ դրութների խախտման արդյունքում կուսակցության կողմից ձեռք բերված **եկամուտը (խնայողությունը)** համարվում է **օրենքով արգելված նվիրատվություն** և ենթակա է **փոխանցման պետական բյուջե**:

Համանման դրույթներ են նախատեսվել նաև **բանկային ավանդի պայմանագիր** կնքելիս:

Ընդ որում, նշենք, որ կուսացկությունը իրավունք ունի վարկային և բանկային ավանդի պայմանագրեր կնքելու միայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների հետ:

Գույքի վաճառք և վարձակալություն: Իրավաբանական անձանց կողմից նվիրատվությունների արգելքի, ինչպես նաև նվիրատվությունների համար օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափի շրջանցումը բացառելու նպատակով Նախագծով հատուկ կարգավորում է նախատեսվել կուսակցության գույքի վաճառքի և վարձակալության համար: Մասնավորապես՝ «**կուսակցության կողմից իր գույքի վաճառքի կամ վարձակալության գինը չպետք է էականորեն գերազանցի պայմանագրի կնքման պահին համանման գույքի վաճառքի կամ վարձակալության համար գործող շուկայական գինը**»: Ընդ որում, գործող շուկայական արժեքից տարբերվող գինը համարվում է էականորեն բարձր, եթե այն գործող շուկայական արժեքից տարբերվում է **նվազագույնը քսան տոկոսը գերազանցող չափով**: Հակառակ պարագայում կուսակցության կողմից իր գույքը համանման գույքի համար շուկայական գնից էականորեն բարձր գնով վաճառելը կամ վարձակալության հանձնելը դիտվում է որպես կուսակցության օգտին կատարվող նվիրատվություն և դրա նկատմամբ համապատասխանաբար կիրառելի են նվիրատվություններիին վերաբերող սահմանափակումները (հոդվ. 12):

Կամավորական աշխատանք և տեղական ու միջազգային համագործակցության արդյունքում ստացված հատուցում: Նվիրատվությունների ցանկից բացառվել է կամավորական աշխատանքը, հատկապես, երբ վերջիններս օգտագործում են անձնական գույքը, ինչպես նաև կուսակցությունների տեղական կամ միջազգային համագործակցության շրջանակներում ստացված ծախսերի հատուցումները: Մասնավորապես՝ Նախագծով սահմանվում է, որ «սույն օրենքի իմաստով **նվիրատվություն չի համարվում կամավորների կողմից, ներառյալ՝ վերջիններիս կողմից անձնական գույքի օգտագործմամբ (բացառությամբ տրանսպորտային միջոցների և անշարժ գույքի) կատարված աշխատանքը, ինչպես նաև տեղական կամ միջազգային համագործակցության շրջանակներում կուսակցությանը ու նրա անդամներին ուսումնառության, վերապատրաստման, համաժողովներին, սեմինարներին ու նմանատիպ այլ միջոցառումների մասնակցության նպատակով հատուցված համապատասխան ծախսերը**:

Սակայն հաշվի առնելով այն հանգամանք, որ կամավորական աշխատանքի անվան ներքո հնարավոր է շրջանցել նվիրատվությունների վերաբերյալ սահմանափակումները՝ կամավորական աշխատանքից բացառություն է նախատեսվել այն աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման դեպքերի համար, եթե դրանց կատարման համար պահանջվում է որոշակի մասնագիտական որակավորում, դրանց դիմաց աշխատանք կատարողը կամ ծառայությունները մատուցողը այլ դեպքերում սովորաբար ստանում է հատուցում և աշխատանքի կամ ծառայության մատուցման տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը: Այդ ծառայությունները համարվում են **բնեղենով նվիրատվություն և ներառվում նվիրատվությունների՝ օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափում**:

զ) **Կուսակցությունների պետական ֆինանսավորում**: Բարեփոխումների արդյունքում նախատեսվում է ավելացնել կուսակցությունների ուղղակի հանրային աջակցությունը

(ֆինանսավորումը)՝ թե՛ աջակցության ծավալի առումով և թե՛ ֆինանսավորման ենթակա կուսակցությունների շրջանակի ընդլայնման առումով: Նախ Նախագծով առաջարկվում է իջեցնել պետական ֆինանսավորման **նվազագույն շեմը՝ երեք տոկոսից սահմանելով երկու տոկոս**, որը հնարավորություն կտա պետական ֆինանսավորում ստանալ ավելի շատ թվով կուսակցությունների: Իսկ կուսակցությունների դաշինքների դեպքում սահմանվել է, որ վերջիններս կարող են ստանալ պետական ֆինանսավորում, եթե հաղթարահել են Ընտրական օրենսգրքով սահմանված ընտրական արգելապատնեշը, այսինքն՝ 7 տոկոս կազմող անցողիկ շեմը:

Նախագծով առաջարկվում է պետական ֆինանսավորման երկու տեսակ՝ պետական ընդհանուր ֆինանսավորում և պետական նպատակային ֆինանսավորում: Պետական ընդհանուր ֆինանսավորումը կազմում է պետական ֆինանսավորման ընդհանուր միջոցների 60 տոկոսը, իսկ նպատակայինը՝ 40 տոկոսը:

Միաժամանակ, առաջարկվում է փոփոխել պետական ֆինանսավորման բանաձևը՝ սահմանելով պետական ֆինանսավորման միջոցները կուսակցությունների միջև բաշխելու աստիճանական համակարգ: Մասնավորապես՝ այն ենթադրում է, որ բոլոր այն կուսակցությունները, որոնք ստացացել են նվազագույնը 2-5 տոկոս ձայներ, պետական բյուջեից ֆինանսավորվելու են հավասարապես՝ յուրաքանչյուր ձայնի դիմաց նվազագույն աշխատավարձի չափով: 5 տոկոսից առավել ձայներ ստանալու դեպքում 5 տոկոսը գերազանցող յուրաքանչյուր ձայնի դիմաց պետական ֆինանսավորման չափը աստիճանաբար նվազում է՝ հնարավորություն տալով հավասարակշռել կուսակցությունների ֆինանսական հնարավորությունները:

Նոր կարգավորման արդյունքում պետական ֆինանսավորման ընդհանուր ծավալը կավելանա մոտավորապես 550 միլիոն դրամով՝ ներկայումս գործող մոտավորապես 103 միլիոն դրամ կազմող պետական ֆինանսավորման ընդահուր գումարի համեմատ:

Այսպիսով, Նախագիծը առաջարկում է կուսակցությունների պետական ֆինանսավորման նոր բանաձև, որը ընդլայնում է պետական ֆինանսական աջակցություն ստացող կուսակցությունների շրջանակը, զգալիորեն ավելացնում է կուսակցությունների կողմից ստացված մեկ քվեի համար նախատեսված ֆինանսավորման չափը և ռեգրեսիվ սանդղակի միջոցով նվազեցնում է ավելի շատ քվեներ ստացած կուսակցությունների ֆինանսավորման ծավալը՝ քիչ քվեներ ստացած կուսակցությունների համեմատությամբ: Այս եղանակով հնարավոր է դառնում ավելացնել որոշակի ընտրական արդյունք գրանցած կուսակցությունների ֆինանսական անկախությունը և դրական խտրականության միջոցով խթանել ավելի փոքր ընտրական աջակցություն ունեցող կուսակցությունների գործունեությունը:

Կուսակցությունների հնարավորությունների հավասարությունը երաշխավորելու նպատակով նախատեսվում է հատուկ կարգավորում նախատեսել մշտական հիմունքներով կամ պարբերաբար ստացվող եկամտի դեպքում: Մասնավորապես՝ Եթե կուսակցությունն իր գույքը հանձնում է **վարձակալության** կամ բանկային ավանդից ստանում է տոկոսներ կամ եկամուտներ է ստանում իր կողմից հիմնադրված **զանգվածային լրատվության միջոցի** կամ **հրատարակչության գործունեության** արդյունքում, ապա հաջորդ տարում կուսակցության կողմից ստացվող պետական ֆինանսավորումը **նվազեցվում է** վարձակալության, բանկային ավանդի կամ իր կողմից

հիմնադրված զանգվածային լրատվության միջոցի կամ հրատարակչության գործունեության արդյունքում ստացված և կուսակցությանը փոխանցված եկամտի չափով: Եթե տվյալ տարում գույքի վարձակալության, բանկային ավանդի կամ կուսակցության կողմից հիմնադրված զանգվածային լրատվության միջոցի կամ հրատարակչության գործունեության արդյունքում կուսակցության կողմից ստացված եկամուտը գերազանցում է պետական ֆինանսավորումը, ապա հաջորդ տարվա համար կուսակցության պետական ֆինանսավորումը **դադարեցվում է**:

Պետական նպատակային ֆինասավորում: Կուսակցությունների՝ որպես գաղափարական հենքի վրա ստեղծված միավորումների կայացմանը նպաստելու, ինչպես նաև կուսակցական գործունեության ներառականությանը նպաստելու, մասնավորապես՝ կուսակցության գործունեության մեջ որոշ սոցիալական խմբերի՝ կանանց, հաշմանդամների, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների և երիտասարդների ներգրավվածությունը բարձրացնելու, կուսակցությունների տարածքային ներկայացվածությունն ապահովելու նպատակով առաջարկվում է կուսակցությունների պետական ֆինանսավորման քառասուն տոկոսը սահմանել որպես նպատակային՝ այն ուղղելով օրենքով նախանշված նպատակների իրականացմանը: Այսպես՝ նպատակային ֆինանսավորման կեսը (40 տոկոս կազմող նպատակային ֆինանսավորման կեսը) կուսակցությանը տրամադրվում է **կանանց, երիտասարդներին, հաշմանդամություն ունեցող անձանց և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին** կուսակցության գործունեության մեջ ներգրավելուն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով: Այն տրամադրվում է այն կուսակցություններին, որոնց մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչների թիվը հաշվետու տարում գերազանցում է 40 տոկոսը: Եթե կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչների թիվը կազմում է 20-40 տոկոս, ապա կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման քառորդը: Եթե կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչների թիվը պակաս է 20 տոկոսից, ապա կուսակցությանը պետական նպատակային ֆինանսավորման կեսը չի տրամադրվում:

Պետական նպատակային ֆինանսավորման մեկ քառորդը տրամադրվում է այն կուսակցություններին, որոնք հաշվետու տարում ունեցել են **տարածքային ստորաբաժանումներ** Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն ½-ում, Այս դեպքում նպատակային ֆինանսավորումը կուսակցությանը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության մարզերում կուսակցության տարածքային ներկայացվածության և տարածքային ստորաբաժանումների գործունեության ապահովման նպատակով:

Կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման մյուս քառորդը, եթե կուսակցությունը հաշվետու տարում իրականացրել և հրապարակել է կուսակցության **գաղափարախոսության, ծրագրային նպատակների և հանրային քաղաքականության հարցերի մասին հետազոտություններ**: Այսինքն՝ նպատակային ֆինանսավորման մի մասը կուսակցությանը տրամադրվում է կուսակցության գաղափարախոսության, ծրագրային նպատակների և հանրային քաղաքականության հարցերի մասին հետազոտությունների անցկացման, հրապարակմանն ու տարածման նպատակով:

Միաժամանակ, որպես վերը նշված պահանջը խախտելու հետևանք նախատեսվում է **հաջորդ հաշվետու տարում պետական նպատակային ֆինանսավորման համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակի դադարեցում**: Պետական նպատակային ֆինանսավորումը հաջորդող տարիներին տրամադրվում է, եթե կուսակցությունն իրականացնում է «Կուսակցությունների մասին» օրենով նախատեսված նպատակներին ուղղված պատշաճ միջոցառումներ և բավարարում է նույն օրենքով սահմանված պահանջներին:

է) Կուսակցությունների հաշվետվությունները: Հաշվետվության ձևը: Նախագծով նախատեսվում է կուսակցության կողմից մինչև յուրաքանչյուր տարվա՝ հաշվետու տարվան հաջորդող **մայիսի 31-ից ոչ ուշ**, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների, դրանց աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը և օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը հրապարակելու պարտականություն: Կուսակցությունն իր հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելուց հետո եռօրյա ժամկետում պարտավոր է հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

Օրենքով սահմանվել է նաև կուսակցության եկամուտների, ծախսերի, գույքի և պարտավորությունների մասին այն հիմնական ցանկը, որի վերաբերյալ կուսակցությունը պետք է ներկայացնի տարեկան հաշվետվություն: Ընդ որում, հաշվետությունը ներառում է նաև **կուսակցությունների և նրա անդամների կողմից տեղական կամ միջազգային համագործակցության արդյունքում ստացած նյութական և ոչ նյութական աջակցության (ներառյալ՝ դասընթացները, ճանապարհածախսի հատուցում և այլն) հայտարարագրումը**:

Միաժամանակ, հաշվետվության ձևը և դրա լրացման կարգը սահմանելու լիազորությունը վերապահվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

ը) Կուսակցությունների նկատմամբ վերահսկողությունը: Նախագծով նախատեսվում է կուսակցությունների **ընթացիկ ֆինանսական գործունեության** նկատմամբ վերահսկողական գործառույթը ԿԸՀ-ի Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունից փոխանցել **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին**՝ որպես մասնագիտացված անկախ մարմնի: Այս կապակցությամբ «Կուսակցությունների մասին» օրենքով սահմանվել են կուսակցության գույքի տարեկան հաշվետվության ստուգման կապակցությամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի լիազորությունները: Մասնավորապես՝ եթե կուսակցության հաշվետվության ստուգման արդյունքում Հանձնաժողովը պարզում է, որ հաշվետվության մեջ առկա են անճշտություններ կամ ոչ լիարժեք տվյալներ, կուսակցությանը տրամադրում է որոշակի ժամկետ՝ դրանց վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու և տվյալները շտկելու նպատակով:

Եվ միայն սահմանված ժամկետում կուսակցության կողմից հաշվետվության համապատասխանությունը Կուսակցությունների մասին» օրենքով սահմանված պահանջներին չհիմնավորվելու և հաշվետվության ստուգման արդյունքում «Կուսակցությունների մասին» օրենքի պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իրավասու է օրենքով նախատեսված դեպքերում ընդունելու կուսակցությանը

տրամադրվող պետական **ֆինանսավորումը հաջորդ տարում չտրամադրելու** մասին որոշում (նպատակային ֆինանսավորումը ոչ պատճաշ օգտագործելու դեպքում) կամ կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված **պատասխանատվության միջոց**:

Կուսակցությունների տարեկան հաշվետվության ստուգման կապակցությամբ համապատասխան ընթացակարգ է նախատեսվել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում:

Նշենք, որ խոսքը վերաբերում է միայն կուսակցության ընթացիկ ֆինանսական գործունեության՝ գույքի տարեկան հաշվետվությունների մասով վերահսկողական լիազորությունների փոխանցմանը: Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը պահպանում է նախընտրական քարոզչության ժամանակահատվածում կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողական գործառույթը:

թ) Կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտը: Նախագծով նախատեսվում է, որ կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտը պետք է ֆինանսավորվի պետական բյուջեի միջոցներից, որը պետք է իրականացվի Կոռոպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բաց մրցույթով ընտրված աուդիտորական կազմակերպությունների կողմից: Աուդիտի ենթակա կուսակցությունների բաշխումը մրցույթով ընտրված աուդիտորական կազմակերպությունների միջև պետք է իրականացվի վիճակահանությամբ, որին կարող են ներկա գտնվել աուդիտի ենթարկվող կուսակցությունները: Համանման դրույթներ են նախատեսվել նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում:

ժ) Կուսակցության գործունեության կասեցումը: Նախագծով վերացվել է կուսակությունների գործունեությունը ընտրություններին երկու անգամ անընդմեջ չմասնակցելու հիմքով կասեցնելու հնարավորությունը: Միաժամանակ, հստակեցվել են կուսակցության գործունեության կասեցման դեպքերը օրենքի կոպիտ խախտման հիմքով:

Մասնավորապես՝ կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել կուսակցության կողմից օրենքով չթույլատրված կամ օրենքով սահմանված չափը գերազանցող նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետում պետական բյուջե կամ նվիրատունին փոխանցելու կամ կուսակցության տարեկան հաշվետվությունը օրենքով սահմանված ժամկետում և կարգով հրապարակելու կամ պետական լիազոր մարմնին ներկայացնելու կամ օրենքով սահմանված՝ տարեկան հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ փաստաթղթերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տրամադրելու օրենքով սահմանված կարգը դիտավորությամբ խախտելու և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով պատասխանատվության ենթարկվելուց և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կուսակցության գործունեությունը կասեցնելու վերաբերյալ գրավոր նախազգուշացվելուց հետո՝ երեսնօրյա ժամկետում, խախտումը չվերացնելու դեպքերում:

ժա) Կուսակցության ղեկավար մարմինների անդամների գույքի և եկամուտների հայտարարագրումը: Նախագծով սահմանվում է, որ կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների առկայության դեպքում՝ նաև այդ մարմնի անդամները պարտավոր են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իրենց

գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիր: Կուսակցության ղեկավար մարմնի անդամների հայտարարագերի ներկայացման կարգի նկատմամբ կիրառելի են «Հանրային ծառայության մասին» օրենքի համապատասխան նորմերը, բացառությամբ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների կողմից իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ ներկայացնելու պարտականության և պատասխանատվության վերաբերյալ դրույթների:

Միաժամանակ, նշենք, որ հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը չի վերաբերում կուսակցության համագումարի անդամներին, ինչպես նաև կուսակցության ղեկավար մարմինների անդամների ընտանիքի անդամներին:

ժբ) Նախագծով իրականացվել են նաև կուսակցությունների գործունեության և կազմակերպման բարելավմանն ուղղված մի շարք այլ փոփոխություններ: Մասնավորապես՝ կուսակցության գործունեության ֆինանսական թափանցիկության մակարդակը բարձրացնելու նպատակով նախատեսվել է, որ կուսակցությունը **բոլոր դրամական վճարները** կատարում է **անկանխիկ հաշվարկներով**:

2) «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ

1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 29-րդ հոդվածը սահմանում է Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության լիազորությունները, որը ընդգրկում է նաև կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը: Նախագծով փոփոխվում է այս դրույթը՝ այն վերապահելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Արդյունքում Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը վերահսկողություն է իրականացնելու միայն նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ:

2. Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով ընտրվող ավագանու ընտրություններում որպես ընտրական ցուցակների գրանցման պարտադիր պահանջ Նախագծով սահմանվել է կուսակցության կանոնադրության համապատասպանությունը օրենքի պահանջներին: Այս դրույթը ապահովում է, որ ընտրական գործընթացներին մասնակցեն այն կուսակցությունները, որոնք իրենց կառուցվածքով և գործունեությամբ համապատասխանում են օրենքով կուսակցությունների համար սահմանված նվազագույն պահանջներին:

3. Նախագծով կարգավորվել են նաև կուսակցության համագումարի և մշտապես գործող ղեկավար մարմնի կողմից ընտրական ցուցակների հաստատման և առաջադրման հետ կապված հարցեր:

3) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է «Կուսակցությունների մասին» օրենքում կատարվող փոփոխություններին համապատասխան լրացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի լիազորությունները, մասնավորապես՝ կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը, ներառյալ՝ կուսակցությունների ֆինանսական միջոցների, դրանց աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան

հաշվետվությունների ստուգումը, կուսակցությունների ղեկավար մարմինների անդամների կողմից ներկայացվող հայտարարագրերի ստուգումը և վերլուծությունը:

Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգումը: Առանձին հոդվածով կարգավորվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման ընթացակարգը: Այդ նպատակով սահմանվում է առանձին գործիքակազմ, որը հնարավորություն կտա Հանձնաժողովին լիարժեք իրականացնելու իր գործառույթը: Մասնավորապես՝ Հանձնաժողովն իրավունք ունի հաշվետվության ստուգման ընթացքում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, իրավաբանական և ֆիզիկական անձանցից պահանջելու և ստանալու (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով) կուսակցության հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ:

Հանձնաժողովին վերապահվում է վարչական իրավախախտման վարույթ հարուցելու և վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու իրավասություն՝ հաշվետվության ստուգման արդյունքում օրենքի խախտումներ բացահայտելու դեպքում:

Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի կազմակերպումը: Ինչպես նշվեց, Հանձնաժողովին է վերապահվել կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի կազմակերպումը: Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտը իրականացվում Հանձնաժողովի կողմից բաց մրցույթով ընտրված աուդիտորական կազմակերպությունների կողմից: Աուդիտի ենթակա կուսակցությունների բաշխումը մրցույթով ընտրված աուդիտորական կազմակերպությունների միջև իրականացվում է վիճակահանությամբ, որին կարող են ներկա գտնվել աուդիտի ենթարկվող կուսակցությունները:

4) «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ

2020 թվականի հուլիսի 16-ին ուժի մեջ է մտել «Տեսալսողական մեդիայի մասին» նոր օրենքը, որը արգելում է մասնավոր հեռարձակողների հիմնադրումը ոչ միայն կուսակցություններին, այլև կուսակցության ղեկավար մարմնի անդամներին և նրանց հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև կուսակցությունների հիմնադրամներիո: Խնդիրը նրանում է, որ «Կուսակցությունների մասին» գործող օրենքը թույլատրում է կուսակցություններին հիմնադրել զանգվածային լրատվության միջոցներ, սակայն մասնավոր հեռուստաընկերությունների հիմնադրումը համարվում է բացառություն այս կանոնից, ինչն ամրագրված է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում: Այդուհանդերձ, Նախագծով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ և 9-րդ կետերի այն դրույթները, որոնք վերաբերում են կուսակցության ղեկավար մարմնի անդամներին և նրանց հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև կուսակցության հիմնադրամներին:

5) «Վարչական իրավախախտումների վերաբերալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ» օրենքի նախագծի վերաբերյալ

Նախագծով փոփոխության է ենթարկվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 189.15-րդ հոդվածը՝ հաշվի առնելով այն հանգամաքը, որ, ի տարբերություն գործող

կարգավորման, Նախագծերի փաթեթով առաջարկվում է կուսակցության օգտին բոլոր նվիրատվությունները, առանց որևէ բացառության, կատարել անկանխիկ:

Միաժամանակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը լրացվել է նոր զանցակազմերով, որոնք պայմանավորված են «Կուսակցությունների մասին» օրենքում առաջարկվող կարգավորումներով: Մասնավորապես՝ վարչական պատասխանատվություն է նախատեսվում կուսակցության անդամի կողմից կուսակցության օգտին ապօրինի նվիրատվություն ներգրավելու, նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելու, իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելու, կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմված առավելագույն չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը այլ անձանց կողմից նվիրատվություն ձևակերպելու եղանակով շրջանցելու, բանկի կամ վարկային կազմակերպուության կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու, ինչպես նաև կուսակցության կողմից իր ղեկավար մարմնում հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին եռօրյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին չծանուցելու համար:

Կուսակցության օգտին ապօրինի նվիրատվություն ներգրավելու զանցակազմը կարող է դրսևորվել կուսակցության ղեկավար մարմնի անդամի կամ կուսակցության շարքային անդամի կողմից նվիրատվությունների համար օրենքով արգելված աղբյուրներից, ինչպես օրինակ՝ օտարերկրյա պետություններից, օտարերկրյա կազմակերպություններից, միջազգային կազմակերպություններից կամ ներպետական իրավաբանական անձանց կողմից նվիրատվություն կամ օրենքով սահմանված չափը գերազանցող նվիրատվություն ներգրավելու ձևով: Խնդիրը նրանում է, որ «Կուսակցությունների մասին» առաջարկվող օրենքի նախագծով արգելվում է ցանկացած տեսակի իրավաբանական անձի կողմից նվիրատվությունը: Արգելված է նաև նվիրատվությունը օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից: «Կուսակցությունների մասին» օրենքի նախագիծը կուսակցությանը թույլ է տալիս նվիրատվություններ ստանալ միայն ֆիզիկական անձանցից: Ընդ որում, ֆիզիկական անձանց նվիրատվությունների համար սահմանված է առավելագույն շեմ, որը գերազանցելը ևս կարող է դիտվել որպես ապօրինի նվիրատվություն (մեկ ֆիզիկական անձի դեպքում՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով (հոդվ. 24, մաս 2)): Այս զանցակազմի օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել կուսակցության ղեկավար մարմնի անդամի կամ կուակցության շարքային անդամի ակտիվ, նախաձեռնողական գործողություններով, երբ վերջիններս ձեռնարկում են կուսակության օգտին օրենքով արգելված աղբյուրներից կամ օրենքով սահմանված չափը գերազանցող նվիրատվութունների ներգրավումը կամ պարզապես համաձայնություն են տալիս այդպիսի առաջարկություններին: Այսինքն՝ ապօրինի նվիրատվությունների փոխանցումն ի սկզբանե իրականացվում է կուսկացության պատասխանատու անդամների գիտությամբ:

Վերը նշված զանցակազմի դեպքում «ապօրինի նվիրատվություն» եզրույթը անհրաժեշտ է մեկնաբանել «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի համատեքստում: «Նվիրատվություն» եզրույթը առավել լայն նշանակություն ունի. այն ներառում է ոչ միայն ֆինանսավորումը, դրամական միջոցները, այլև «Կուսակցությունների մասին» օրենքով

սահմանված բնեղենով նվիրատվությունները: Մասնավորապես՝ համաձայն «Կուսակցությունների մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1.1-ին կետի՝ բնեղենով նվիրատվություններ են համարվում նաև «կուսակցության օգտին անհատույց աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը, կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցումը, օգտագործման հանձնելը կամ նույն կամ համանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գործող շուկայական արժեքից էականորեն ցածր գնով կուսակցության օգտին աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման կամ կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցման կամ վարձակալության հանձնելու արդյունքում կուսակցության մոտ ձևավորված խնայողությունը (բնեղենով նվիրատվություն): Ընդ որում, համաձայն նույն օրենքի՝ գործող շուկայական արժեքից տարբերվող գինը համարվում է էականորեն ցածր, եթե այն գործող շուկայական արժեքից տարբերվում է **նվազագույնը քսան տոկոսը** գերազանցող չափով»:

Ապօրինի նվիրատվության ներգրավում չեն կարող դիտարկվել այն դեպքերը, երբ ֆիզիկական անձը կատարել է օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող նվիրատվություն կուսակցության օգտին կամ նվիրատվությունը կատարվել է օրենքով արգելված սուբյեկտների կողմից, և դրա մասին կուսակցության անդամները տեղյակ չեն եղել: Նման դեպքերում, համաձայն «Կուսակցությունների մասին» օրենքի, այդ նվիրատվությունները ենթակա են փոխանցման նվիրատվություն կատարող անձին՝ ֆիզիկական անձանց դեպքում, իսկ օրենքով արգելված նվիրատվությունները ենթակա են փոխանցման պետական բյուջե՝ համաձայն «Կուսակցությունների մասին» օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի: Նման դեպքերում կուսակցության պաշտոնատար անձը կարող է պատասխանատվության ենթարկվել միայն ապօրինի նվիրատվությունը «Կուսակցությունների մասին» օրենքով սահմանված ժամկետում նվիրատուին կամ պետական բյուջե չփոխանցելու համար՝ համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 189.16-րդ հոդվածի:

Նախագծով պատասխանատվություն է սահմանվում նաև **նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելու համար**: Ինչպես նշվեց, «Կուսակցությունների մասին» օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ մեկ ֆիզիկական անձի կողմից կուսակցության օգտին նվիրատվություն կարող է կատարվել առավելագույնը՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով: Ընդ որում, մեկ Ֆիզիկական անձը կարող է նվիրատվության՝ նշված առավելագույն սահմանաչափի շրջանակներում նվիրատվություն կատարել մեկ և ավելի կուսակցության: Բոլոր այն դեպքերում, երբ մեկ տարվա ընթացքում ֆիզիկական անձի կողմից մեկ կամ մի քանի կուսակցությունների օգտին նվիրատվությունների առավելագույն չափը կգերազանցի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկը, անձը ենթակա կլինի վարչական պատասխանատվության: Հարկ է նշել, որ տվյալ դեպքում կուսակցությունները որևէ պատասխանատվություն չեն կրում, վերջիններիս փոխանցված գումարը ենթակա չէ վերադարձման նվիրատուին, եթե, իհարկե, որևէ կուսակցության դեպքում այն չի գերազանցում կուսակցության կողմից նվիրատվություն ստանալու օրենքով սահմանված առավելագույն շեմը՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրհազարապատիկը:

Նախագծով պատասխանատվություն է սահմանվել նաև **իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելու** համար: Ինչպես նշվեց, «Կուսակցությունների մասի» օրենքի նախագծով արգելվում է ցանկացած տեսակի իրավաբանական անձի կողմից նվիրատվությունը: Թեև իրավաբանական անձինք վարչական պատասխանատվության սուբյեկտ չեն հանդիսանում, այդուհանդերձ, իրավաբանական անձի միջոցներից վերջինիս պաշտոնատար անձինք կարող են ուղղակիորեն նվիրատվություն կատարել կուսակցությանը՝ դրանով արտահայտելով նվիրատվություն կատարելու՝ իրավաբանական անձի կամքը և գործելով ի շահ իրավաբանական անձի: Ուստի իրավաբանական անձի պաշտոնատար անձինք ենթակա են պատասխանատվության իրավաբանական անձի անունից նվիրատվություն կատարելու համար: Ընդ որում, պարտադիր չէ, որ նվիրատվությունը լինի դրամական տեսքով: Այն կարող է արտահայտվել նաև բնեղեն նվիրատվությունների տեսքով, օրինակ՝ կուսակցության օգտին անհատույց կամ շուկայականից ցածր գնով ծառայությունների մատուցումը:

Անձի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը այլ անձանց կողմից նվիրատվություն ձևակերպելու եղանակով շրջանցելու զանցակազմի (հոդվ. 189.22) էությունը կայանում է հետևյալում. «Կուսակությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով սահմանված է առավելագույն սահմանաչափ մեկ ֆիզիկական անձի կողմից կուսակցությունների օգտին կատարվող նվիրատվության համար: Հնարավոր են իրավիճակներ, երբ մեկ ֆիզիկական անձը, նպատակ ունենալով կուսակցության հաշվին փոխանցել օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող նվիրատվություն, դրանում ներգրավվի մեկ կամ մի քանի անձանց՝ նվիրատվությունը ձևակերպելով վերջիններիս անունով: Նույն իրավիճակը հնարավոր է նաև օրենքով սահմանված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը շրջանցելու դեպքում, երբ, օրինակ, փաստացի իրավաբանական անձի կողմից կատարվող նվիրատվությունը ձևակերպվում է մի քանի ֆիզիկական անձի անունով: Տվյալ դեպքում գործ ունենք ֆիզիկական անձի կողմից օրենքով սահմանված նվիրատվության առավելագույն չափը գերազանցելու կամ իրավաբանական անձի կողմից նվիրատվություն կատարելու հատուկ ձևի (հատուկ նորմ) հետ, որի համար պատասխանատվություն է նախատեսվում առանձին հոդվածով: Ի տարբերություն ֆիզիկական անձի կողմից առավելագույն սահմանաչափը գերազանցելու կամ իրավաբանական անձի կողմից նվիրատվությունների ուղղակի դեպքերի, որոնք կարգավորվում են Նախագծի 189.20-րդ և 189.21-րդ հոդվածներով, տվյալ դեպքում իրական նվիրատուներին թաքցնելու համար ներգրավվում են երրորդ անձինք: Նախագծով նախատեսվող 189.22-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով որպես իրական նվիրատու և պատասխանատվության սուբյեկտ հանդես է գալիս այն ֆիզիկական անձը, որը իր սեփական միջոցներից նվիրատվություն է կատարում կուսակցությանը, սակայն նվիրատվությանը կամ դրա մի մասը (գերազանցող մասը) ձևակերպում է այլ ֆիզիկական անձի (ֆիզիկական անձանց) անունով: Իսկ Նախագծով նախատեսվող 189.22-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով որպես իրական նվիրատու կամ նրա պաշտոնատար անձ և դրանով պատասխանատվության սուբյեկտ կարող է հանդես գալ, օրինակ, օտարերկրյա քաղաքացին կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձը, ով նվիրատվություն կատարելու իրավունք չունի՝ համաձայն «Կուսակցությունների մասին» օրենքի:

Որպես իրական նվիրատուի պաշտոնատար անձ կարող է հանդես գալ, օրինակ, իրավաբանական անձի պաշտոնատար անձը, եթե նվիրատվությունը կատարվում է իրավաբանական անձի միջոցներից՝ ի շահ իրավաբանական անձի:

Նախագծով պատասխանատվություն է նախատեսվում նաև իրավաբանական անձանց հատուկ խմբի՝ ֆինանսկաան կազմակերպությունների կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու համար: Մասնավորապես պատասխանատվություն է սահմանվել բանկի կամ վարկային կազմակերպության կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու համար: Ըստ էության, խոսքը գնում է օրենքով արգելված նվիրատվությունների մասին, քանի որ նվիրատվություններն իրավաբանական անձանցից արգելված են: Ընդհանուր առմամբ, կուսակցությանը տրվող վարկերը կամ բանկային ավանդի դիմաց ստացվող տոկոսները չեն համարվում նվիրատվություն, եթե պահպանված են օրենքով սահմանված պայմանները: Սահմանված կանոնի համաձայն՝ կուսակցության հետ կնքվող վարկային պայմանագրի կամ ավանդի պայմանագրի պայմանները պետք է համապատասխանեն շուկայում գործող սովորական պայմաններին և չպետք է տարբերվեն համանման հանգամանքներում այլ անձանց հետ կնքվող պայմանագրերի պայմաններից: Մասնավորապես՝ բանկը կամ վարկային կազմակերպությունն իրավունք չունի բանկային ավանդի համար սահմանել չափազանց բարձր տոկոսադրույք կամ վարկի դեպում սահմանել չափազանց ցածր տոկոսադրույք, որի արդյունքում կուակցության մոտ, ըստ էության, կձևավորվի խնայողություն կամ կուսակցությունը ձեռք կբերի եկամուտ, որը բանկը կամ վարկային կազմակերպություն սովորաբար չի կատարում այլ հաճախորդների պարագայում: Այդ եկամուտը կամ խնայողությունն էլ, իր հերթին, համարժեք է նվիրատվության: Նույնը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ բանկը կամ վարկային կազմակերպությունը կուսակցությանը ազատում է պարտքը (վարկը) վճարելու պարտավորությունից, այսինքն՝ ներում է կուսակցության պարտքը (վարկը): Հնարավոր են նաև իրավիճակներ, երբ վարկային պայմանագիրը կնքելուց հետո բանկը կամ վարկային կազմակերպությունը վաղաժամկետ, վարկը դեռևս չմարած լուծի վարկային պայմանագրի հիմքում ընկած գրավի պայմանագիրը կամ վարկը կամ տոկոսները վճարելու պարտականությունը սահմանի այնպիսի երկարատև ժամանակահատվածի համար, որից ակնհայտ կդառնա, որը պայմանագիրը կրում է ձևական բնույթ և վարկը կամ տոկոսները հետ չեն վերադարձվելու (օրինակ՝ վարկային պայմանագրի կնքումը 100 տարով): Նկարագրված բոլոր դեպքերը համարվում են բանկի կամ վարկային կազմակերպության կողմից արգելված նվիրատվություն, որոնց համար նախատեսվում է վարչական պատասխանատվություն:

Նախագծով վարչական պատասխանատվություն է նախատեսվում նաև կուսակցության կողմից իր ղեկավար մարմնում հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին եռօրյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին չծանուցելու համար: «Կուսակցությունների մասին» օրենքի նախագծի 28.1-ին հոդվածով կուսակցության ղեկավար մարմինների անդամների համար սահմանվել է գույքի և եկամուտների հայտարարագիր ներկայացնելու պարտականություն: Ուստի կուսակցության իրավասու պաշտոնատար անձը պարտավոր է ղեկավար մարմնի պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու դեպքում այդ մասին եռօրյա ժամկետում

ծանուցել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Նշված պարտականության չկատարումն առաջացնում է վարչական պատասխանատվություն:

Միաժամանակ, Նախագծով փոփոխություն է կատարվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 14-րդ հոդվածում՝ սահմանելով «կուսակցության պաշտոնատար անձ» հասկացությունը, որն էլ, իր հերթին, կիրառելի է Օրենսգրքի՝ կուսակցության պաշտոնատար անձանց համար պատասխանատվություն սահմանող մյուս բոլոր հոդվածների դեպքում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կուսացկությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողական լիազորությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողովից փոխանցվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, ինչպես նաև նրան վերապահվել են նոր լիազորություններ՝ ուստի այդ լիազորությունների իրականացման ոլորտում գտնվող վարչական իրավախախտումների վարույթի հարուցման և պատասխանատվության միջոցներ կիրառելու իրավասությունը վերապահվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

Փոփոխություն է կատարվել նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի՝ գույքի և եկամուտների հայտարարագերի չներկայացման համար պատասխանատվություն նախատեսող 169.28-րդ հոդվածում՝ պատասխանատվության սուբյեկտների ցանկում լրացնելով կուսակցության ղեկավար մարմնիների պաշտոնատար անձանց:

Այս փոփոխություններով պայմանավորված կատարվել են նաև մի շարք այլ փոփոխություններ:

6) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ

Քրեական օրենսգրքում լրացվում են կուսակցությունների գործունեությանն առնչվող մի շարք հանգամանքներ, ինչպիսիք են կուսակցությանն անդամագրվելուն կամ անդամությունը դադարեցնելուն հարկադրելը կամ խոչընդոտելը, կուսակցության անդամի կողմից խոշոր չափով ապօրինի նվիրատվություն ներգրավելը, իրավաբանական անձի անունից կուսակցությանը խոշոր չափով նվիրատվություն կատարելը, նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու օրենքով սահմանված առավելագույն չափը խոշոր չափով գերազանցելը, կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը խոշոր չափով շրջանցելը և կուսակցության օգտին նվիրատվություն կատարելուն հարկադրելը:

Քրեական օրենսգիրքով ևս պատասխանատվություն է նախատեսում կուսակցություն ապօրինի նվիրատվություն ներգրավելու, իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելը, նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելու և կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը շրջանցելու համար, սակայն, ի տարբերություն վարչական պատասխանատվության, այստեղ պատասխանատվություն է նախատեսված միայն խոշոր չափի համար՝ որպես հանրային վտանգավորության ցուցանիշ: Իսկ խոշոր չափ է

համարվում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարին համարժեք նվիրատվությունը, այսինքն՝ մեկ միլիոն դրամը գերազանցող միջոցները:

Հանրային վտանգավորությամբ է պայմանավորված նաև կուսակցությանն անդամագրվելուն կամ անդամությունը դադարեցնելուն հարկադրելը կամ խոչընդոտելը, ինչպես նաև կուսակցությանը նվիրատվություն կատարելուն հարկադրելը քրեականացնելը, քանի որ վերջիններս կապված են անձի նկատմամբ հարկադրանքի կիրառման հետ:

Փոփոխություններ են կատարվել նաև գույքի և եկամուտների հայտարարագերի չներկայացման համար պատասխանատվություն նախատեսող հոդվածներում՝ պատասխանատվության սուբյեկտների ցանկում լրացնելով կուսակցության ղեկավար մարմնիների պաշտոնատար անձանց:

7) «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ

Նախագծով նախատեսում է կուսակցությունների տարածքային ստորաբաժանումները հաշվառելու մասին կարգավորում, ինչը հնարավորություն կտա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն կուսակցությունների տարածքային ներկայացվածության վերաբերյալ և գնահատելու նպատակային ֆինանսավորում տրամադրելու հիմքերի առկայությունը, ինչպես նաև ֆինանսավորման միջոցների օգտագործման հիմնավորվածությունը: Միաժամանակ, նախատեսվում է, որ կուսակցության տարածքային ստորաբաժանումների պետական հաշվառման համար պետական տուրք չի գանձվում:

Նախագծով նախատեսվում է նաև կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կողմից լիազորված անձի մասին տեղեկությունները իրավաբանական անձանց միասնական գրանցամատյանում գրառելու հնարավորություն, եթե մշտապես գործող ղեկավար մարմինը անձին լիազորել է հանդես գալու կուսակցության անունից:

8) «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ

«Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» օրենքում փոփոխությունները պայմանավորված են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կուսակցության ղեկավար մարմինների անդամների հայտարարագրերը վերլուծելիս, ինչպես նաև կուսակցությունների տարեկան հաշվետվությունները ստուգելիս վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն ստանալու անհրաժեշտությամբ: Այս կապակցությամբ օրենքում կատարվել են համապատասխան փոփոխություններ, որոնք Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին իրավունք են վերապահում վարկային բյուրոյից ստանալու վարկային տեղեկատվություն հայտարարագրերի վերլուծության, ինչպես նաև կուսկացությունների տարեկան հաշվետվությունների ստուգման նպատակով:

3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է Ազգային ժողովի ընտրական բարեփոխումների աշխատանքային խմբի կողմից: Աշխատանքային խմբի նախաձեռնած քննարկումներին մասնակցել և նախագծի պատրաստման գործընթացում մասնագիտական աջակցություն են տրամադրել մի շարք պետական հաստատություններ (Արդարադատության նախարարություն, Մարդու իրավունքների

պաշտպանի գրասենյակ, Կենտրոնական ընտրական հանձնաժողով, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով), հասարակական կազմակերպություններ («Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն, Իրազեկ քաղաքացիների միավորում, Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ), միջազգային կազմակերպություններ (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, Եվրոպայի խորհրդի՝ ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողով (Վենետիկի Հանձնաժողով), Ընտրական համակարգերի միջազգային հաստատության Հայաստանյան մասնաճյուղ (IFES), Ֆրիդրիխ էբերտ Հիմնադրամ):

3. Ակնկալվող արդյունքը

Սույն օրենքների նախագծերի փաթեթի ընդունմամբ ակնկալվում է հետևյալ խնդիրների լուծումը՝

- կուսակցությունների և կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացում,
- բազմակուսակցական համակարգի ու գաղափարական բազմակարծության խրախուսում,
- կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության բարձրացում, կուսակցական ֆինանսական միջոցների նկատմամբ հանրային վերահսկողության գործիքակազմի կատարելագործում,
- կոռուպցիոն ռիսկերի նվազեցում,
- քաղաքական գործունեության և բիզնեսի տարանջատում, կուսակցական գործունեության վրա մասնավոր շահերի ազդեցության նվազեցում,
- կուսակցական գործունեության ներառականության խթանում,
- կուսակցություններին ներքին ժողովրդավարության խրախուսում:

Աղյուսակ

կուսակցությունների պետական ֆինանսավորման վերաբերյալ

Հ/Հ	Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչներ / Կուսակցություններ և կուսակցությունների դաշինքներ	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	Ընդամենը
	Ընդամենը՝ «Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպութ	69,591.7	69,591.7	69,591.7	69,591.7	75,693.1	75,693.1	75,693.1	75,693.1	100,924.1	103,538.7	785,602.0

	յուններին, արհմիություններին» ծախսային ծրագիր											
1	«Ազգային միաբանություն» կուսակցություն	2,957.8	2,957.8	2,957.8	1,232.4							10,105.8
2	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	12,129.3	12,129.3	12,129.3	17,511.0	23,227.3	23,227.3	23,227.3	23,227.3	12,904.1		159,712.2
3	«Ելք» կուսակցությունների դաշինք									4,846.9	8,524.2	13,371.1
4	«Ժառանգություն» կուսակցություն	4,807.5	4,807.5	4,807.5	4,386.7	4,444.4	4,444.4	4,444.4	4,444.4	2,469.1		39,055.9
5	«Իմ քայլը» դաշինք											0.0
6	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն											0.0
7	«Ծառուկյան» կուսակցությունների դաշինք									17,028.0	29,947.0	46,975.0
8	Հայ Ազգային կոնգրես կուսակցությունների դաշինք				2,928.9	5,461.2	5,461.2	5,461.2	5,461.2	3,034.0		27,807.7
9	Հայաստանի Հանրապետական կուսակցություն	27,182.6	27,182.6	27,182.6	29,530.4	33,943.4	33,943.4	33,943.4	33,943.4	49,449.6	53,802.5	350,103.9
10	«Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն	10,552.9	10,552.9	10,552.9	6,740.9	4,370.4	4,370.4	4,370.4	4,370.4	6,519.7	7,196.2	69,597.1
11	«Հայկական վերածնունդ» կուսակցություն									2,313.6	4,068.8	6,382.4
12	Միավորված աշխատանքային կուսակցություն	3,515.8	3,515.8	3,515.8	1,464.9							12,012.3
13	«Նոր ժամանակներ» կուսակցություն	2,791.5	2,791.5	2,791.5	1,163.1							9,537.6
14	«Օրինաց երկիր» կուսակցություն	5,654.3	5,654.3	5,654.3	4,633.4	4,246.4	4,246.4	4,246.4	4,246.4	2,359.1		40,941.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կուսակցությունների մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ՀՕ-224-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) ~~3-րդ հոդվածում «սույն օրենքով,» բառերից հետո լրացնել «այլ օրենքներով,» բառերը:~~

~~**Հոդված 2.** Օրենքի~~ 5-րդ հոդվածը լրացնել 4-րդ մասով.

«4. Արգելվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական նախադպրոցական, դպրոցական և այլ ուսումնական հաստատությունների, պետական այլ ~~և համայնքային~~ կազմակերպությունների ~~և հիմնարկների~~ տեղակայումը կուսակցությանը սեփականության իրավունքով պատկանող շենքերում և շինություններում»:

Հոդված 2~~3~~. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության մեջ «ծառայողական (պաշտոնեական) դիրքն» բառերը փոխարինել «ծառայողական (պաշտոնեական) դիրքը, ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական և մարդկային ռեսուրսները, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների, ~~և այլ վարչական ռեսուրսները~~»բառերով:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում «առնվազն 100 հիմնադիր» բառերը փոխարինել «առնվազն 300 հիմնադիր» բառերով:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Կուսակցության հիմնադիր համագումարը որոշումներ է ընդունում կուսակցության հիմնադրման, կուսակցության ծրագրի ընդունման և կանոնադրության հաստատման, պետական գրանցման համար անձին (անձանց) լիազորելու մասին, իր կազմից ընտրում է ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններ:», հց հանել «ինչպես նաև իր կազմից ընտրում է մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավար (կամ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար)» բառերը,

2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Կուսակցության ստեղծման մասին որոշումը համարվում է ընդունված, եթե որոշմանը կողմ է քվեարկել կուսակցության հիմնադիր համագումարի մասնակիցներին ներկա հիմնադիրների մեծամասնությունը, բայց ոչ պակաս, քան առնվազն 3100 հիմնադիր»:

Հոդված 5. Օրենքի 9-րդ հոդվածում՝

3) 2-րդ մասնը ուժը կորցրած ճանաչել շարադրել նոր խմբագրությամբ.:

«2. Պետական գրանցման պահին կուսակցությունը պետք է ունենա ոչ պակաս, քան 800 անդամ:»,

4) 4-րդ մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) կուսակցության խնդիրներն ու նպատակներն արտացոլող ծրագրի առնվազն երկու օրինակ.»,:

3) 4-րդ մասի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) հիմնադիր համագումարի արձանագրությունը, ինչպես նաև կուսակցության հիմնադրմանստեղծման, մշտապես գործող ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրության, կանոնադրության հաստատման ու ծրագրային փաստաթղթերի ընդունման, պետական գրանցման համար անձին (անձանց) լիազորելուված անձի (անձանց) մասին մասին որոշումները,»

5) 4-րդ մասի 5-րդ կետնը ուժը կորցրած ճանաչել, շարադրել նոր խմբագրությամբ.

«5. պետական գրանցման պահին կուսակցության անդամների ցանկը, որը պետք է պարունակի կուսակցության անդամի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի համար և ստորագրությունը»,

5) 4-րդ մասի 6-րդ կետում «հիմնադիր համագումարին մասնակցած հիմնադիրների» բառերը փոխարինել «հիմնադիր համագումարում կուսակցության ստեղծման մասին որոշմանը կողմ քվեարկած հիմնադիրների» բառերով,

6) 4-րդ մասի 10-րդ կետում «տեղեկատվություն» բառից առաջ լրացնել «առկայության դեպքում՝» բառերը,

7) 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«7. Կուսակցության պետական գրանցումից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, կուսակցության կանոնադրությունը և ծրագիրը համընդհանուր իրազեկման նպատակով պետական լիազոր մարմնի՝ ~~Արդարադատության նախարարության~~ կողմից հրապարակվում են Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am»:

Հոդված 6. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությունում «սույն օրենքով» բառերից հետո լրացնել «ինչպես նաև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով» բառերը, իսկ երկրորդ նախադասությունից հանել «սույն» բառը:

Հոդված 7~~6~~. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) կուսակցության հիմնադիրների թիվը չի համապատասխանում սույն օրենքի պահանջներին կամ կուսակցության հիմնադիր համագումարում որոշում չի ընդունվել կուսակցության հիմնադրման կամ կուսակցության ծրագրի ընդունման կամ կանոնադրության հաստատման մասին կամ չեն ընտրվել կուսակցության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինները կամ~~ մշտապես գործող ղեկավար մարմնի կազմը չի համապատասխանում սույն օրենքի պահանջներին կամ~~», ~~ից հանել «ինչպես նաև ընտրված չէ մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավար (կամ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար)» բառերը,~~

~~2) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝~~

~~«3. Սույն օրենքով սահմանված ժամկետում պետական լիազոր մարմնի կողմից կուսակցության պետական գրանցումը չմերժելու կամ պետական գրանցման դիմումը չվերադարձնելու դեպքում կուսակցությունը համարվում է գրանցված՝ սույն օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասում նշված ժամկետը լրանալուն հաջորդող օրվանից»:~~

~~3) լրացնել նոր՝ 4-րդ մասով.~~

~~«4. Կուսակցության պետական գրանցման մերժումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով»:~~

Հոդված 8~~7~~. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Կուսակցության հիմնադիրներ և անդամներ կարող են լինել տասնութ տարին լրացած ընտրական իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:» ~~հց հանել «գործունակ» բառը, իսկ «Կուսակցության» բառից հետո ավելացնել «հիմնադիրներ և» բառերը:~~

Հոդված 9~~8~~. Օրենքի 16-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) կառուցվածք, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ձևավորման և կազմալուծման կարգը, ~~ում «իրավունքները և պարտականությունները և դրանց ժամկետները.» բառերը փոխարինել «~~իրավունքները և պարտականությունները, գործունեության ժամկետները և որոշումներ ընդունելու կարգը. »~~ բառերով~~,

2) 2-րդ մասի 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5) կուսակցության անդամների, ներառյալ՝ պատվիրակների միջոցով, համագումարին մասնակցության կարգը»,

3) ուժը կորցրած ճանաչել 2-րդ մասի 6-րդ , 7-րդ և 10-րդ կետերը,

4) 2-րդ մասի 8-րդ կետում «կանոնադրությունում» բառից հետո լրացնել «և ծրագրում» բառերը,

5) 3-րդ մասի առաջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն.

«Ընտրական ցուցակների ձևավորման կարգը պետք է արտացոլի Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքով ընտրական ցուցակներին ներկայացվող պահանջները»:

6) 4-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ.

«4. Տարածքային ստորաբաժանումների առկայության~~, ինչպես նաև ղեկավար այլ մարմինների առկայության~~ դեպքում կուսակցության կանոնադրությունը պետք է սահմանի~~տեղեկություններ պարունակի~~ նաև դրանց ստեղծման և գործունեության դադարեցման կարգը, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ձևավորման և կազմալուծման կարգը, իրավունքներն ու պարտականությունները և

դրանց գործունեության ժամկետները: գործունեության կարգի և գործունեության դադարեցման մասին:

Հոդված 109. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «ոչ ուշ, քան չորս տարին մեկ անգամ» բառերը փոխարինել «ոչ ուշ, քան երեքկու տարին մեկ անգամ» բառերով, իսկ առաջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն. «Կուսակցության անդամների նախաձեռնությամբ, որոնց նվազագույն թիվը սահմանվում է կուսակցության կանոնադրությամբ, ինչպես նաև կանոնադրությամբ սահմանված այլ դեպքերում և կարգով կարող է հրավիրվել նաև արտահերթ համագումար»:

2) 3-րդ մասի 1-ին կետից հանել «բացառությամբ սույն օրենքի փոփոխությամբ պայմանավորված փոփոխությունների և լրացումների. » բառերը, իսկ 2-րդ կետում «կազմավորումը» բառը փոխարինել «ընտրությունը» բառով, իսկ 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

3) 3-րդ մասը լրացնել նոր՝ 5-րդ կետով.

«5) Ազգային ժողովի հերթական ընտրություններում կուսակցության ընտրական ցուցակում թեկնածուների՝ առնվազն առաջին երեք տասնյակի հաստատումը.»:Ազգային ժողովի հերթական ընտրություններում կուսակցության ընտրական ցուցակի հաստատումը»:

4) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Կուսակցության անունից այլ մարմինների և անձանց հետ հարաբերություններում հանդես է գալիս կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարը՝ առանց լիազորագրի, եթե կուսակցության կանոնադրությամբ նախատեսված է մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի պաշտոն, ինչպես նաև մշտապես գործող ղեկավար մարմնի կողմից լիազորված անձը»:մշտապես գործող ղեկավար մարմնի կողմից լիազորված անձը»:

5) լրացնել նոր՝ 4.1. մասով.

«4.1. Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը (նախագահություն, վարչություն և այլն) ձևավորվում է կոլեգիալության սկզբունքով, որի անդամներըն կուսակցության կազմից ընտրվում են համագումարումի կողմից՝ կուսակցության կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետով: Մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի

~~վաթսուն տոկոսը:~~ Մշտապես գործող ղեկավար մարմինը որոշումներ է ընդունում նիստերի արդյունքում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով»:

6) ~~ուժը կորցրած ճանաչել~~ 5-րդ մասի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. ~~։~~

~~7)~~ «4) փոփոխություններ է կատարում համագումարի կողմից Ազգային ժողովի ընտրությունների համար հաստատված ընտրական ցուցակներում, եթե համագումարի կողմից հաստատվելուց հետո ընտրական ցուցակում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունն առաջացել է կուսակցության կամքից անկախ պատճառներով,»

7) 5-րդ մասը լրացնել նոր՝ 5.1-ին կետով.

«5.1. հաստատում է Ազգային ժողովի հերթական ընտրություններում կուսակցության ընտրական ցուցակը թեկնածուների այն մասով, որոնց հաստատումը սույն օրենքով և կուսակցության կանոնադրությամբ վերապահված չէ համագումարին, ինչպես նաև հերթական և արտահերթ ընտրություններում կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը»:

8) լրացնել նոր՝ 6-րդ մաս~~ով~~.

«6. Կուսակցության կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև կուսակցության այլ մարմիններ»:

~~8~~) ~~լրացնել նոր՝ 7-րդ մասով.~~

~~«7. Կուսակցության կանոնադրությամբ կարող է նախատեսվել ղեկավար մարմին հանդիսացող խորհուրդ՝ որպես կուսակցության ընթացիկ գործունեության ռազմավարությունը որոշող կոլեգիալ մարմին, որին կարող են փոխանցվել նաև վերահսկողական լիազորություններ»:~~

9~~7~~) լրացնել նոր՝ ~~8~~7-րդ մաս~~ով~~.

«8. Կուսակցության՝ օրենքով սահմանված ղեկավար մարմիններն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ՝ սույն օրենքով և կուսակցության կանոնադրությամբ սահմանված կարգով»:

Հոդված 11~~0~~. Օրենքի 18-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 18. Կուսակցության համագումարում որոշումների ընդունման կարգը

1. Կուսակցության համագումարին ձայնի իրավունքով մասնակցության, ներառյալ՝ պատվիրակների մասնակցության կարգը սահմանվում է կուսակցության կանոնադրությամբ:

2. Կուսակցության համագումարն իրավազոր է, եթե համագումարին ներկա են կուսակցության անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը, իսկ համագումարին պատվիրակների մասնակցության դեպքում՝ պատվիրակների ընդհանուր թվի առնվազն կեսը, բայց ոչ պակաս, քան 100 պատվիրակ: ~~Ի իրավազորության համար անհրաժեշտ ձայների քանակը սահմանվում է կուսակցության կանոնադրությամբ:~~

3. Կուսակցության համագումարի որոշումները, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, ընդունվում են համագումարում ձայնի իրավունք ունեցող ներկաների ձայների մեծամասնությամբ:

4. Կուսակցության կանոնադրությունում~~ան հաստատման~~ և ծրագրում~~ի ընդունման, դրանցում~~ փոփոխություններ և լրացումներ կատարելու, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրության, մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի ընտրության, կուսակցության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումներն ընդունվում են համագումարում ձայնի իրավունք ունեցող մասնակիցների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ»:

Հոդված 12~~1~~. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Կուսակցությունները կարող են իրենց կանոնադրությամբ սահմանված կարգով ունենալ տարածքային ստորաբաժանումներ: Կուսակցության տարածքային ստորաբաժանումները ենթակա են պետական հաշվառման՝ օրենքով սահմանված կարգով: Տարածքային ստորաբաժանումների պետական հաշվառման համար պետական տուրք չի գանձվում»:

Հոդված 13~~2~~. Օրենքի 21-րդ հոդվածում՝

7) 1-ին մասի 2-րդ կետից հանել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության» բառերը,

~~7)~~8) 1-ին մասը լրացնել 7.1-ին~~.~~ կետով.

«7.1) իր գործունեության ֆինանսավորման, այդ թվում՝ նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման նպատակով ստանալու վարկեր Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերից, վարկային կազմակերպություններից, ինչպես նաև ներդնել ավանդներ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում,

~~8)~~9) 2-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ.

«Կուսակցության կողմից իր գույքի վաճառքի կամ վարձակալության գինը չպետք է էականորեն գերազանցի պայմանագրի կնքման պահին համանման գույքի վաճառքի կամ վարձակալության համար գործող շուկայական գինը: Կուսակցության կողմից իր գույքը համանման գույքի համար շուկայական գնից էականորեն բարձր գնով վաճառելու~~ը~~ կամ վարձակալության հանձնելու դեպքում~~ը~~՝ վաճառքի գնի կամ վարձակալության վճարի՝ շուկայական գինը գերազանցող մասը դիտվում է որպես կուսակցության օգտին կատարվող նվիրատվություն և դրա նկատմամբ համապատասխանաբար կիրառելի են սույն օրենքի 24-րդ հոդվածի 1.2-րդ, 8.1-ին և 9-րդ մասերով սահմանված դրույթները~~»~~: Գործող շուկայական արժեքից տարբերվող գինը համարվում է էականորեն բարձր, եթե այն գործող շուկայական արժեքից տարբերվում է նվազագույնը քսան~~տասը~~ տոկոսը գերազանցող չափով»:

~~9)~~10) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«3. Կուսակցությունն իրավունք չունի զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ, ինչպես նաև լինելու առևտրային իրավաբանական անձի հիմնադիր կամ մասնակից, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի»:

~~10)~~11) 4-րդ մասում «Ազգային ժողովի ընտրություններում» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև համայնքների՝ համամասնական ընտրակարգով անցկացվող ~~համայնքների~~ ավագանու ընտրություններում ~~ու անդամի թեկնածուներ առաջադրելիս~~» բառերը:

~~11)~~12) լրացնել նոր՝ 6-րդ մաս~~ով~~.

«6. Կուսակցության կողմից հիմնադրված զանգվածային լրատվության միջոցների և հրատարակչությունների գործունեության արդյունքում ստացված և կուսակցությանը փոխանցված եկամուտը~~—~~ կարող է օգտագործվել միայն կուսակցության կանոնադրությամբ և ծրագրով սահմանված նպատակների համար:~~չի կարող փոխանցվել կուսակցությանը, այդ թվում՝ նախընտրական հիմնադրամին~~»:

Հոդված 14~~3~~. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասում՝ ~~ը~~

1) 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am, հրապարակել ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի վերաբերյալ հաշվետվությունը: Կուսակցությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով պարտավոր է ներկայացնել հաշվետվության ստուգման

համար անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային տեղեկատվություն»:

~~լրացնել 3-րդ կետով.~~

~~«3) օրենքով սահմանված կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տեղեկատվություն ներկայացնել կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմի վերաբերյալ»:~~

Հոդված 154. Օրենքի 23-րդ հոդվածում `

~~4) ուժը կորցրած ճանաչել 2-րդ մասի 4-րդ կետը,~~

4) 4-րդ մասի երկրորդ նախադասության մեջ «արգելվում է» բառերից հետո լրացնել «բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի» բառերը,

5) լրացնել 6-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«6. Կուսակցությունը կարող է բանկային հաշիվներ ունենալ միայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող՝ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված բանկերում»:

6) լրացնել 7-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«7. Կուսակցությունը բոլոր դրամական վճարումները կատարում է անկանխիկ հաշվարկներով»:

Հոդված 165. Օրենքի 24-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Կուսակցություններն իրավունք ունեն գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների, ներառյալ՝ փոխառությունների, երրորդ անձի կողմից կուսակցության պարտքի մարման, պարտատիրոջ կողմից կուսակցության պարտքը ներելու, ~~երրորդ անձի կողմից իրեն պատկանող իրավունքը (պահանջը) կուսակցությանը փոխանցելու (պահանջի զիջում),~~ ինչպես նաև կուսակցության օգտին կատարվող այլ գործունեության տեսքով նվիրատվություններ ստանալու ֆիզիկական անձանցից, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1 մաս.

«1.1. Նվիրատվություն է համարվում նաև կուսակցության օգտին անհատույց ~~կամ նույն կամ համանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գործող շուկայական արժեքից էականորեն ցածր գնով կուսակցության օգտին~~

աշխատանքների կատարումը, կամ ծառայությունների մատուցումը, կամ կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցումը, օգտագործման հանձնելը կամ նույն կամ համանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գործող շուկայական արժեքից էականորեն ցածր գնով կուսակցության օգտին աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման կամ կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցման կամ վարձակալության հանձնելու արդյունքում կուսակցության մոտ ձևավորված խնայողությունը (բնեղենով նվիրատվություն): Գործող շուկայական արժեքից տարբերվող գինը համարվում է էականորեն ցածր, եթե այն գործող շուկայական արժեքից տարբերվում է նվազագույնը քսան տոկոսը գերազանցող չափով»:

3) լրացնել 1.2. մասով.

«1.2. Սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված բնեղենով նվիրատվությունները ենթակա են հաշվարկման իրենց շուկայական արժեքով և պետք է արտացոլվեն կուսակցության տարեկան հաշվետվության մեջ, իսկ դրանց արժեքը (գումարը՝ դրամական արտահայտությամբ՝ պայմանագրով նախատեսված արժեքի և շուկայական արժեքի տարբերության մասով) ներառվում է նվիրատվությունների՝ սույն օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափում»:

4) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2. Կուսակցությանը տրվող նվիրատվության, ինչպես նաև անդամավճարի և մուտքի վճարի ընդհանուր չափը՝ դրամական արտահայտությամբ, մեկ տարվա ընթացքում չի կարող գերազանցել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրհազարապատիկը, այդ թվում՝ մեկ ֆիզիկական անձի կողմից՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկը:

Սույն հոդվածով սահմանված՝ նվիրատվությունների առավելագույն սահմանաչափը չի ներառում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում նախընտրական հիմնադրամներին կատարված նվիրատվությունները:

Ֆիզիկական անձը կարող է սույն մասի առաջին պարբերությունում նշված նվիրատվության առավելագույն սահմանաչափի շրջանակներում նվիրատվություն կատարել մեկ և ավելի կուսակցության»:

5) 3-րդ մասի առաջին նախադասությունն ուժը կորցրած ճանաչել:

6~~3~~) 4-8-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4. Նվիրատվություններ չեն թույլատրվում՝

1) օտարերկրյա պետություններից,

2) ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից, այդ թվում՝ օտարերկյա իրավաբանական անձանցից և միջազգային կազմակերպություններից,

3~~2~~) պետական և համայնքային բյուջեներից և (կամ) արտաբյուջետային միջոցներից, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն կատարվող ֆինանսավորման,

~~3~~4) պետական և համայնքային կազմակերպություններից, պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններից,

5) ~~Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանցից, բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում ընտրելու իրավունք ունեցող կամ թեկնածու հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց կողմից նախընտրական քարոզարշավիչության փուլում նվիրատվության կատարումը,~~

5~~4~~) անանուն անձանցից:

5. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը գերազանցող նվիրատվությունների ստացման դեպքում կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, կուսակցության համար սահմանված նվիրատվության, անդամավճարի կամ մուտքի վճարի սահմանված չափը գերազանցող մասը կամ նվիրատվությունն ամբողջությամբ վերադարձնել նվիրատուին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցել պետական բյուջե:

6. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ չթույլատրված նվիրատվությունների ստացման դեպքում կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, դրանք փոխանցել պետական բյուջե:

7. Նվիրատվություն կատարող անձինք պարտավոր են նշել իրենց անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի համարը:

8. Կուսակցությանն օրենքով սահմանված դրամական հատկացումները կատարվում են միայն անկանխիկ»:

7~~4~~) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1. -ին մաս՝

«8.1. Սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված նվիրատվությունների դեպքում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը գերազանցելիս

կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, նվիրատվությունը, նվիրատվությանը համարժեք դրամական գումարը —կամ նվիրատվության սահմանված չափը գերազանցող ~~մասին համարժեք~~ դրամական գումարը վերադարձնել նվիրատուին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցել պետական բյուջե: Եթե նվիրատվությունն ստացվել է սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ չթույլատրված աղբյուրներից, ապա կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, նվիրատվությունը, ~~կամ~~ նվիրատվությանը ~~դրան~~ համարժեք դրամական գումարը կամ նվիրատվության սահմանված չափը գերազանցող դրամական գումարը փոխանցել պետական բյուջե»:

8~~4~~) 9-րդ մասում «հոդվածի 4-րդ և 5-րդ» բառերը փոխարինել «հոդվածի 4-րդ, 5-րդ և 8.1-ին» բառերով:

9~~5~~) լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մաս.

«10. Սույն օրենքի իմաստով նվիրատվություն չի համարվում կամավորների կողմից, ներառյալ՝ վերջիններիս կողմից անձնական գույքի օգտագործմամբ (բացառությամբ տրանսպորտային միջոցների և անշարժ գույքի) կատարված աշխատանքը կամ ծառայությունների մատուցումը, ինչպես նաև տեղական կամ միջազգային համագործակցության շրջանակներում կուսակցությանը ու նրա անդամներին ուսումնառության, վերապատրաստման, համաժողովներին, սեմինարներին ու նմանատիպ այլ միջոցառումներին մասնակցության նպատակով հատուցված համապատասխան ողջամիտ ծախսերը:

Սույն հոդվածի իմաստով աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը չի համարվում կամավոր աշխատանք, եթե դրանց կատարման համար պահանջվում է որոշակի մասնագիտական որակավորում, դրանց դիմաց աշխատանք կատարողը կամ ծառայությունները մատուցողը այլ դեպքերում սովորաբար ստանում է հատուցում և աշխատանքի կամ ծառայության մատուցման տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը: Այդ ծառայությունները համարվում են բնեղենով նվիրատվություն և ներառվում նվիրատվությունների՝ սույն օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափում»:

10~~6~~) լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ մաս.

«11. Կուսակցության հետ վարկային պայմանագիր կնքելու դեպքում այդ պայմանագրի պայմանները, ներառյալ՝ վարկի տոկոսադրույքը պետք է համապատասխանեն շուկայում գործող սովորական պայմաններին և չպետք է

էականորեն տարբերվեն այլ անձանց~~, այդ թվում՝ այլ կուսակցությունների~~ հետ նույնանման պայմաններում կնքվող պայմանագրերի պայմաններից:

11~~7~~) լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-րդ մաս.

«12. Վարկային պայմանագրի դեպքում արգելվում է վարկը կամ դրանց տոկոսները ամբողջությամբ կամ մասնակի վճարելու պարտականությունից կուսակցությանն ազատելը (պարտքը ներելը) կամ պայմանագիրը կնքելուց հետո տոկոսադրույքի վերանայումը, որի արդյունքում տոկոսադրույքը շուկայականից էականորեն կնվազի կամ այդ պայմանագրերի հետ փոխկապակցված գրավի պայմանագիրը վաղաժամկետ լուծելը կամ պայմանագրի պայմանների այնպիսի փոփոխությունները, որոնք կարող են դիտվել ակնհայտ անհավասար այլ անձանց ~~կամ կուսակցությունների~~ հետ կնքվող համանման պայմանագրերի պայմանների համեմատ կամ փաստացի կարող են հավասարվել պարտքը ներելուն: Սույն դրույթների խախտումը կարող է դիտվել որպես իրավաբանական անձի կողմից~~ն~~ նվիրատվություն և առաջացնել~~ում է~~ օրենքով սահմանված պատասխանատվություն»:

12~~8~~) լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ մաս.

«13. Սույն հոդվածի 11-րդ և 12-րդ մասերի դրութների խախտման արդյունքում կուսակցության կողմից ձեռք բերված եկամուտը (խնայողությունը) համարվում է օրենքով արգելված նվիրատվություն և ենթակա է փոխանցման պետական բյուջե՝ սույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան: Սույն դրույթների խախտումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն»:

13~~9~~) լրացնել հետևյալ բովանդակությամբ 14-րդ մաս.

«14. Կուսակցության հետ բանկային ավանդի պայմանագիր կնքելիս պայմանագրի պայմանները, ներառյալ՝ բանկային ավանդի տոկոսադրույքը պետք է համապատասխանեն շուկայում գործող սովորական պայմաններին և չպետք է էականորեն տարբերվեն այլ անձանց~~, այդ թվում՝ այլ կուսակցությունների~~ հետ նույնանման պայմաններում կնքվող պայմանագրերի պայմաններից: Եթե բանկային ավանդի տոկոսադրույքը էականորեն գերազանցում է համանման պայմանագրերի դեպքում առաջարկվող տոկոսադրույքը, ապա ավանդի տոկոսներ~~ի~~ի՝ համանման պայմանագրերի համեմատ էականորեն գերազանցող մասը դիտվում է~~են~~ որպես օրենքով չթույլատրված աղբյուրից նվիրատվություն, և ենթակա է~~են~~ փոխանցման պետական բյուջե՝ սույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան: Սույն

մասի դրույթների խախտումը կարող է դիտվել որպես իրավաբանական անձի կողմից նվիրատվություն և առաջացնել է օրենքով սահմանված պատասխանատվություն»:

Հոդված 17. Օրենքի 25-րդ հոդված լրացնել 3-րդ մասով.

«3. Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում կուսակցությունների՝ օրենքով սահմանված դեպքերում հաշվետվությունների հրապարակումը, ինչպես նաև հայտարարություններն ու ծանուցումներն իրականացվում են անվճար:

Հոդված 18. Օրենքի 26-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝.

«Հոդված 26. Կուսակցությունների պետական ֆինանսավորումը

			չափով, 9) 20 և ավելի տոկոս ձայներ ստանալու դեպքում՝ մինչև 5 տոկոսի սահմաններում տրված յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափով, 5-ից մինչև 20 տոկոսի սահմաններում՝ յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի կեսի չափով, իսկ 20 տոկոսը գերազանցող սահմաններում տրված յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի քառորդի չափով: 5. Յուրաքանչյուր կուսակցության համար պետական ընդհանուր ֆինանսավորման ծավալը հավասար է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված բանաձևի արդյունքում ստացված գումարի 60 տոկոսին: 6. Յուրաքանչյուր կուսակցության համար պետական նպատակային ֆինանսավորման ծավալը հավասար է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված բանաձևի		

			արդյունքում ստացված գումարի 40 տոկոսին: 7. Եթե հաշվետու տարում կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչների թիվը գերազանցում է 40 տոկոսը, ապա կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման կեսը: Եթե կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչների թիվը կազմում է 20-40 տոկոս, ապա կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման քառորդը: Եթե կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչների թիվը պակաս է 20 տոկոսից, ապա կուսակցությանը պետական նպատակային ֆինանսավորում տրամադրվում չի տրամադրվում: Սույն մասով նախատեսված նպատակային ֆինանսավորումը կուսակցությանը տրամադրվում է կանանց, երիտասարդներին, հաշմանդամություն ունեցող անձանց և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին		

			կուսակցության գործունեության մեջ ներգրավելուն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով: 8. Եթե կուսակցությունը հաշվետու տարում ունեցել է տարածքային ստորաբաժանումներ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն ½-ում, ապա կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման քառորդը: Սույն մասով նախատեսված նպատակային ֆինանսավորումը կուսակցությանը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության մարզերում կուսակցության տարածքային ներկայացվածության և տարածքային ստորաբաժանումների գործունեության ապահովման նպատակով: 9. Կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման մյուս քառորդը, եթե կուսակցությունը հաշվետու տարում իրականացրել և հրապարակել է կուսակցության գաղափարախոսության, ծրագրային նպատակների և հանրային քաղաքականության հարցերի մասին		

			հետազոտություններ: Սույն մասով նախատեսված նպատակային ֆինանսավորումը կուսակցությանը տրամադրվում է կուսակցության գաղափարախոսության, ծրագրային նպատակների և հանրային քաղաքականության հարցերի մասին հետազոտությունների անցկացման, հրապարակմանն ու տարածման նպատակով: Պետական նպատակային ֆինանսավորման միջոցով իրականացված հետազոտությունների արդյունքները ենթակա են հրապարակման: 10. Հաշվետու տարում սույն հոդվածի 7-9-րդ մասերով սահմանված՝ նպատակային ֆինանսավորման միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: 11. Սույն հոդվածի 7-9-րդ մասերով նախատեսված նպատակային ֆինանսավորման միջոցների օգտագործումը պետք է արտացոլվի կուսակցության տարեկան հաշվետվության մեջ՝ այն ներկայացնելով հաշվետվությանը կից հավելվածով: Եթե հաշվետվության ստուգման արդյունքում պարզվում		

			է, որ կուսակցությունը չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել հաշվետու տարում սույն հոդվածի 7-9-րդ մասերով նախատեսված պահանջները կամ կատարել է նշված պահանջներից միայն մեկը կամ մի քանիսը, ապա հաշվետու տարվան հաջորդող տարվա համար նպատակային ֆինանսավորումը համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասամբ (չկատարված պահանջների մասով) չի տրամադրվում: Պետական նպատակային ֆինանսավորումը տրամադրելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ընդունում է որոշում, որի մասին ընդունման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, տեղեկացնում է Կառավարությանը: 12. Եթե կուսակցությունն իր գույքը հանձնում է վարձակալության կամ բանկային ավանդից ստանում է տոկոսներ կամ եկամուտներ է ստանում իր կողմից հիմնադրված զանգվածային լրատվության միջոցի կամ հրատարակչության գործունեության արդյունքում, ապա հաջորդ տարում կուսակցության կողմից ստացվող պետական		

			ֆինանսավորումը նվազեցվում է վարձակալության, բանկային ավանդի կամ իր կողմից հիմնադրված զանգվածային լրատվության միջոցի կամ հրատարակչության գործունեության արդյունքում ստացված և կուսակցությանը փոխանցված եկամտի չափով: Եթե տվյալ տարում գույքի վարձակալության, բանկային ավանդի կամ կուսակցության կողմից հիմնադրված զանգվածային լրատվության միջոցի կամ հրատարակչության գործունեության արդյունքում կուսակցության կողմից ստացված եկամուտը գերազանցում է պետական ֆինանսավորումը, ապա հաջորդ տարվա համար կուսակցության պետական ֆինանսավորումը դադարեցվում է: 13. Սույն օրենքով նախատեսված՝ կուսակցության գույքի վարձակալությունից, բանկային ավանդից կամ կուակցության կողմից հիմնադրված զանգվածային լրատվության միջոցի կամ հրատարակչական կազմակերպության գործունեության արդյունքում ստացված և կուսակցությանը փոխանցված եկամտի մասին տեղեկատվությունը Կոռուպցիայի		

			կանխարգելման հանձնաժողովը կուսակցության տարեկան հաշվետվության ստուգումից հետո մեկշաբաթյա ժամկետում փոխանցում է Կառավարություն: 14. Պետական ֆինանսավորման միջոցները կուսակցությունների ընտրական դաշինքին մասնակցող կուսակցությունների միջև բաշխվում են հավասարապես, եթե այլ բան նախատեսված չէ կուսակցությունների ընտրական դաշինքի որոշմամբ: 15. Սույն հոդվածով նախատեսված կուսակցությունների պետական ֆինանսավորումն իրականացվում է տվյալ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ժամանակահատվածում և դադարեցվում Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտման օրը: Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտման ամսվա համար կուսակցության պետական ֆինանսավորման հաշվարկն իրականացվում և ֆինանսավորումը փոխանցվում է ըստ օրերի քանակի՝ մինչև տվյալ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ավարտման օրը: 16. Կուսակցության		

			վերակազմակերպման, լուծարման պետական գրանցման օրվանից, ինչպես նաև կուսակցության գործունեության արգելման մասին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից պետական բյուջեի միջոցների հատկացումը դադարեցվում է»:		
		Նախագծի 18-րդ հոդված (փոփոխված՝ 20-րդ հոդված)	Նախագծի՝ համարակալում փոփոխված՝ 20-րդ հոդվածը վերաշարադրել հետևյալ կերպ. «Օրենքի 27-րդ հոդվածում՝ Օրենքի 27-րդ հոդվածում՝ 1) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ «2. Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մայիսի 31-ից ոչ ուշ, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը (այսուհետ՝ տարեկան հաշվետվություն), իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև դրա վերաբերյալ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			աուդիտորական եզրակացությունը: Հաշվետությունը ներառում է նաև սույն օրենքի 24-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված՝ կուսակցություններին և նրա անդամներին տեղական կամ միջազգային համագործակցության շրջանակներում ստացած նյութական և ոչ նյութական աջակցության նպատակով հատուցված (ներառյալ՝ դասընթացների, ճանապարհածախսի հատուցում և այլն) ծախսերի մասին տեղեկություններ»: 2) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «3. Կուսակցությունն իր հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելուց հետո՝ եռօրյա ժամկետում, պարտավոր է հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով»: 3) 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «7. Կուսակցության տարեկան հաշվետվության ձևը և		

			դրա լրացման կարգը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Կուսակցություններն իրավունք ունեն իրենց հաշվետվությանը կից ներկայացնելու լրացուցիչ բացատրական նյութեր»: 4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մաս՝ «8. Կուսակցության տարեկան հաշվետվությունը, ի թիվս այլ տեղեկությունների, պետք է պարունակի կուսակցության՝ 1) մուտքերը՝ ա. մուտքի վճարներ, բ. անդամավճարներ, գ. ֆիզիկական անձանց նվիրատվություններ, դ. օրենքով սահմանված կարգով ստացված բյուջետային ֆինանսավորում, ե. կուսակցության կողմից հիմնադրված զանգվածային լրատվության միջոցների և հրատարակչությունների կողմից հաշվետու տարում կուսակցությանը փոխանցված միջոցները՝ առանձին նշելով զանգվածային լրատվության		

			միջոցների և հրատարակչությունների կողմից հաշվետու տարվա գործունեության արդյունքում ստացված շահույթը, զ. տեղական և միջազգային համագործակցության շրջանակներում կուսակցությանը ու նրա անդամներին ուսումնառության, վերապատրաստման, համաժողովներին, սեմինարներին ու նմանատիպ այլ միջոցառումներին մասնակցության նպատակով հատուցված համապատասխան միջոցներ, է. վարկեր և փոխառություններ, ը. բանկային ավանդների գծով ստացված տոկոսները, թ. կուսակցության օգտին անհատույց կատարված աշխատանքներ և մատուցված ծառայություններ, ժ. քաղաքացիաիրավական այլ գործարքներից՝ կուսակցության գույքի առուվաճառքից, վարձակալությունից և		

			օրենքով չարգելված այլ գործարքներից ստացված միջոցներ, ժա. այլ մուտքեր: 2) Ելքերը՝ ա. աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված այլ վճարումներ, քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա ծառայությունների մատուցման վճարներ, բ. հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ, գ. կոմունալ վճարներ, դ. գույքի վարձակալության վճարներ, ե. ապրանքանյութական արժեքների ձեռքբերման համար կատարված վճարումներ, զ. տրանսպորտային ծախսերի գծով ելքեր, է. գործուղման ծախսերի գծով ելքեր, ը. այլ ելքեր, 3) կուսակցության գույքը՝ ա. անշարժ գույք (շենք, շինություն, հողամաս և այլն), բ. տրանսպորտային միջոցներ, 4) կուսակցության		

			պարտավորությունները՝ ա. բանկերի հանդեպ ունեցած պարտավորություններ, բ. վարկային կազմակերպությունների հանդեպ ունեցած պարտավորություններ, գ. փոխատուի հանդեպ ունեցած պարտավորություններ, դ. այլ պարտավորություններ»:		
		Նախագծի 19-րդ հոդված (փոփոխված՝ 21-հոդված)	**Հոդված 21.** Օրենքի 28-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «**Հոդված 28. Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտը** 1. Այն կուսակցությունների տարեկան հաշվետվությունները, որոնց՝ սույն օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված մուտքերը կամ ելքերը հաշվետու տարվա ընթացքում գերազանցել են օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգհազարապատիկը, ենթակա են պարտադիր աուդիտի: 2. Սույն օրենքով սահմանված կարգով պետական բյուջեից պետական ֆինանսավորում ստացած կուսակցությունների տարեկան	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հաշվետվությունները ենթակա են պարտադիր աուդիտի՝ անկախ հաշվետու տարում սույն օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված մուտքերի կամ ելքերի չափից: 3. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դեպքերում սույն օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված մուտքերի կամ ելքերի չափը հաշվարկելիս դրանում չեն ներառվում սույն օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետի ե. ենթակետով սահմանված՝ կուսակցության կողմից հիմնադրված զանգվածային լրատվության միջոցների և հրատարակչությունների կողմից հաշվետու տարվա գործունեության արդյունքում ստացված ընդհանուր շահույթը: Հաշվարկման ենթակա են միայն կուսակցության կողմից հիմնադրված զանգվածային լրատվության միջոցների և հրատարակչությունների կողմից հաշվետու տարում կուսակցությանը փոխանցված միջոցները: 4. Սույն հոդվածով նախատեսված պարտադիր աուդիտը ֆինանսավորվում է պետական բյուջեի միջոցներից և իրականացվում Կոռոպցիայի		

			կանխարգելման հանձնաժողովի կողմից բաց մրցույթով ընտրված աուդիտորական կազմակերպությունների կողմից: 5. Կուսակցությունները հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարին աուդիտի կազմակերպման նպատակով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջի հիման վրա հնգօրյա ժամկետում տրամադրում են աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով հայտարարվող մրցույթի անցկացման համար անհրաժեշտ տեղեկություններ»:		
		Նախագծի 20-րդ հոդված (փոփխված՝ 22)	**Հոդված 22.** Օրենքը լրացնել նոր՝ 28. 1-ին հոդվածով. «**Հոդված 28.1. Կուսակցության ղեկավար մարմնի պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման պարտականությունը** 1.Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում՝ այդ մարմնի անդամները (այսուհետ նաև՝ հայտարարատու պաշտոնատար անձինք) պարտավոր են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իրենց գույքի և եկամուտների	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հայտարարագիր, որի ձևանմուշը և հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: 2. Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են պաշտոնը ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրեր: 3. Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագերի ներկայացման կարգի նկատմամբ կիրառելի են «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքների համապատասխան նորմերը, բացառությամբ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների կողմից իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ ներկայացնելու պարտականության և պատասխանատվության վերաբերյալ դրույթների: 4. Կուսակցությունը իր ղեկավար մարմնում հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին եռօրյա ժամկետում ծանուցում է		

			Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ տրամադրելով համապատասխան ակտի պատճենը: 5. Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում՝ այդ մարմնի անդամները ազատվում են սույն հոդվածով նախատեսված հայտարարագիր ներկայացնելու պարտականությունից, եթե «Հանրային ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածի իմաստով հանդիսանում են հայտարարատու պաշտոնատար անձ: 6. Եթե սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված անձը պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագիրը ներկայացնելուց հետո շարունակում է պաշտոնավարել որպես կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում՝ որպես այդ մարմնի անդամ, ապա նա կուսակցությունում պաշտոն ստանձնելու հայտարարագիր չի ներկայացնում: Այդ դեպքում անձն օրենքով սահմանված կարգով ներկայացնում է տարեկան հայտարարագիր: 7. Եթե սույն հոդվածի 5-րդ		

			մասով նախատեսված անձը պաշտոնական պարտականությունները դադարեցնելու հայտարարագիրը ներկայացնելուց հետո մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ն ազատվում է կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում՝ այդ մարմնի անդամի պաշտոնից, ապա պաշտոնը դադարեցնելու օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում կուսակցության պաշտոնի դադարեցման հայտարարագիր: 8. Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձը «Հանրային ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված պաշտոնի նշանակման դեպքում չի ազատվում «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարագիր ներկայացնելու պարտականությունից»:		
		Նախագծի 21-րդ հոդված (փոփոխված՝ 23-րդ հոդված)	Նախագծի 21-րդ հոդվածի 2-4-րդ կետերը հանել, իսկ Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ կերպ. «1.Կուսակցությունների ընթացիկ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն, ներառյալ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվության ստուգումն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն օրենքով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով»: 2) 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:		
		Նախագծի 22-րդ հոդված (փոփոխված՝ 24-րդ հոդված)	1)Օրենքի 32-րդ հոդվածը լրացնել նոր՝ 10-րդ մասով. 8) լրացնել 10-րդ մասով. «10. Կուսակցության գործունեության կասեցումը հիմք չէ այդ կուսակցության առաջադրմամբ ընտրված պատգամավորի, համամասնական ընտրակարգով ընտրված՝ համայնքի ավագանու անդամի լիազորությունները կամ Ազգային ժողովում տվյալ կուսակցությունը ներկայացնող խմբակցության գործունեությունը դադարեցնելու համար»: 2)Նախագծի 24-րդ հոդվածից հանել 8-րդ և 9-կետերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		Նախագծի նոր՝ 25-րդ հոդված	**Նախագիծը լրացնել նոր՝ 25-րդ հոդվածով.** **«Հոդված 25.** Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասում	Ընդունվել է:	Ընդունվել է:

			«դադարեցնելու» բառից հետո լրացնել «կամ Ազգային ժողովում տվյալ կուսակցությունը ներկայացնող խմբակցության գործունեությունը դադարեցնելու» բառերը»:		
		Նախագծի 24-րդ հոդված (փոփոխված՝ 27-րդ հոդված)	Նախագծի 27-րդ հոդվածը վերաշարադրել հետևյալ կերպ. **«Հոդված 27. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից: 2. Սույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ կետերը, 14-րդ հոդվածը, 16-րդ հոդվածի 3-րդ կետը, 18-24-րդ և 26-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2022 թվականի հունվարի 1-ից: 3. Կուսակցությունները պարտավոր են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022 թվականի հունվարի 1-ը իրենց կանոնադրությունները և կառուցվածքը համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին և պետական գրանցման նպատակով կանոնադրության փոփոխությունները ներկայացնել պետական լիազոր մարմին: Սույն հոդվածով նախատեսված պետական գրանցման	Ընդունվել է:	Ընդունվել է:

			գործառույթի դիմաց պետական տուրք չի գանձվում: 2022 թվականի հունվարի 1-ից հետո սույն օրենքի փոփոխությամբ պայմանավորված՝ կանոնադրության փոփոխությունները պետական գրանցման ներկայացնելու դեպքում կուսակցությունը չի ազատվում օրենքով սահմանված պետական տուրքը վճարելու պարտականությունից: Սույն մասով սահմանված ժամկետում կուսակցության կանոնադրությունը սույն օրենքի պահանջներին չհամապատասխանեցնելու դեպքում կուսակցության կանոնադրությունը գործում է այնքանով, որքանով այն չի հակասում սույն օրենքին և կուսակցությունների գործունեությունը կարգավորող այլ օրենքներին: 4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող օտարերկրյա բանկերում բանկային հաշիվներ ունեցող կուսակցությունները փակում են իրենց բանկային հաշիվները: 5. Կուսակցությունները 2021 թվականի իրենց տարեկան հաշվետվությունները 2022		

			թվականին ներկայացնում են սույն օրենքով սահմանված կարգով: 6. Սույն օրենքի 19-24-րդ և 26-րդ հոդվածներով սահմանված դրույթներն ուժի մեջ մտնելուց հետո՝ քսանօրյա ժամկետում, Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն իր մոտ առկա՝ կուսակցությունների ընթացիկ ֆինանսական վերահսկողության հետ կապված փաստաթղթերի փաթեթը փոխանցում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: 7. Սույն օրենքով նախատեսված կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում՝ այդ մարմինների անդամները մինչև 2022 թվականի մարտի 31-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացում 2021 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիրը:		
		ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ			

		ԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ			
		Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում «**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**» բառից հետո «**ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ**» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		Նախագծի 2-րդ հոդված	«8. Ազգային ժողովի հերթական ընտրություններում կուսակցության համապետական ընտրական ցուցակում առնվազն առաջին երեք տասնյակ թեկնածուները հաստատվում և առաջադրվում են կուսակցության համագումարի որոշմամբ: Ազգային ժողովի հերթական ընտրություններում համապետական և տարածքային ընտրական ցուցակները թեկնածուների այն մասով, որոնց հաստատումը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով և կուսակցության կանոնադրությամբ վերապահված չէ համագումարին, ինչպես նաև հերթական և արտահերթ ընտրություններում կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը հաստատվում և առաջադրվում են կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի որոշմամբ (դաշինքի անդամ կուսակցությունների մշտապես գործող ղեկավար մարմինների որոշումներով): Համապետական և	Ընդունվել է:	Ընդունվել է:

			տարածքային ընտրական ցուցակների բոլոր էջերը կնքում և ստորագրում է կուսակցության (դաշինքի անդամ կուսակցությունների) իրավասու անձը»:		
		Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածը վերաշարադրել հետևյալ կերպ. **«Հոդված 3.** Օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. «2) կուսակցության համագումարի և մշտապես գործող ղեկավար մարմնի որոշումները (դաշինքի անդամ կուսակցությունների համագումարների և մշտապես գործող ղեկավար մարմինների որոշումները)՝ համապետական և տարածքային ընտրական ցուցակները հաստատելու և առաջադրելու վերաբերյալ. »:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		Նախագծի 4-րդ հոդված	Նախագիծը լրացնել նոր՝ 4-րդ հոդվածով. **«Հոդված 4.** Օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ 7-րդ կետով. «7) կուսակցության կանոնադրությունը չի համապատասխանում «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի պահանջներին»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

		Նախագծի 5-րդ հոդված	Նախագիծը լրացնել նոր՝ 5-րդ հոդվածով. **Հոդված 5.** Օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 6-րդ կետով. «6) կուսակցության կանոնադրությունը չի համապատասխանում «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի պահանջներին»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ			
		Նախագծի 1-ին հոդված	1) Նախագծի 1-ին հոդվածից հանել 1-ին կետը, 2) Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը վերաշարադրել հետևյալ կերպ. «9) «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում և կարգով կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության	Ընդունվել է:	Ընդունվել է:

			իրականացումը, ներառյալ՝ կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների (այսուհետ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվություններ) ներկայացման պահանջների պահպանման և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգումը,»		
		Նախագծի 2-րդ հոդված	Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում՝ 1) 3-րդ կետում «հայտարարատու պաշտոնատար անձանց» բառերից հետո լրացնել «, այդ թվում՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով նախատեսված՝ կուսակցությունների ղեկավար մարմինների պաշտոնատար անձանց» բառերը, 2) նոր լրացվող 27-րդ կետը վերաշարադրել հետևյալ կերպ. «27) ստուգում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանումը և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը,»	Ընդունվել է:	Ընդունվել է:

			3) նոր լրացվող 28-րդ կետը հանել:		
		Նախագծի 4-րդ հոդված	Օրենքի Օրենքի 25-րդ հոդվածի 7-րդ մասում՝ «հայտարարատու պաշտոնատար անձի» բառերից հետո լրացնել «այդ թվում՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված՝ կուսակցության ղեկավար մարմնի պաշտոնատար անձի» բառերը»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		Նախագծի 5-րդ հոդված	Օրենքում լրացվող նոր՝ 40.1-ին հոդվածում՝ 1) 2-րդ մասը վերաշարադրել հետևյալ կերպ. «2.Եթե կուսակցության հաշվետվության ստուգման արդյունքում Հանձնաժողովը պարզում է, որ հաշվետվության մեջ առկա են սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ, կուսակցությանը տրամադրում է նվազագույնը 10-օրյա, առավելագույնը՝ 30-օրյա ժամկետ՝ դրանց վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու և տվյալները շտկելու նպատակով»: 2) 3-րդ մասից հանել «դրամարկղային և», «նախնական» բառերը, 3) 4-րդ մասում «այդ թվում՝» բառերից հետո լրացնել «բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ,» բառերը,	Ընդունվել է:	Ընդունվել է:

			4) 5-րդ մասի առաջին նախադասությունում «բանկերին ուղղված» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկին ուղղված» բառով, «մնացորդի և շարժի վերաբերյալ» բառերը փոխարինել «համախառն մուտքի և համախառն ելքի» բառերով, իսկ «բանկային պահատուփերում պահվող գույքի» բառերը փոխարինել «բանկային պահատուփերի առկայության» բառերով: 5) Լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-8-րդ մասեր. «6.Բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալուց հետո Հանձնաժողովն իրավասու է այդ կապակցությամբ կուսակցությունից պահանջելու ներկայացնել լրացուցիչ նյութեր: 7. «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով նախատեսված պետական նպատակային ֆինանսավորման միջոցների օգտագործումը ստուգելիս Հանձնաժողովը կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմի և տարածքային ստորաբաժանումների վերաբերյալ տեղեկատվություն է ստանում իրավաբանական անձանց պետական միասնական		

			գրանցամատյանից: 8.Հանձնաժողովը կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում իրականացնում է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 10-13-րդ մասերով նախատեսված լիազորությունները»: 5. 7-րդ մասը հանել, 6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ և 14-րդ մասերով. «13. Այն կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգումը, որոնց հաշվետվությունները ենթակա են պարտադիր աուդիտի, իրականացվում է սույն օրենքով սահմանված՝ աուդիտորական եզրակացությունն ստանալուց հետո: 14. Պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգումն իրականացվում է աուդիտորական եզրակացությունը ստանալուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հաշվետու տարվան հաջորդող տարվա հունիսի 15-ը»:		
		Նախագծի 6-րդ	Օրենքում լրացվող 40.2-րդ	Ընդունվել է:	Ընդունվել է:

		հոդված	հոդվածը վերաշարադրել հետևյալ կերպ. «**Հոդված 40.2. Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի կազմակերպումը** 1. Հանձնաժողովը կազմակերպում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտը: 2. Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտը ֆինանսավորվում է պետական բյուջեի միջոցներից և իրականացվում Հանձնաժողովի կողմից բաց մրցույթով ընտրված աուդիտորական կազմակերպությունների կողմից: 3. Աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով բաց մրցույթն անցկացվում է կուսակցության կողմից աուդիտորների ընտրության նպատակով հայտարարվող մրցույթի համար անհրաժեշտ տեղեկությունները Հանձնաժողովին տրամադրելուց հետո երկամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 31-ը: 4. Բաց մրցույթի արդյունքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը յուրաքանչյուր		

			կուսակցության հաշվետվության աուդիտի նպատակով ընտրում է առավելագույնը երեք աուդիտորական կազմակերպությունների, որոնց միջև վերջնական ընտրությունն իրականացվում է հրապարակային վիճակահանության միջոցով, բացառությամբ այն դեպքերի, երբ մրցույթին մասնակցել և ընտրվել է միայն մեկ աուդիտորական կազմակերպություն: 5. Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանում է Հանձնաժողովը: Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը պետք է հնարավորինս երաշխավորի մեկ կուսակցության հաշվետվության աուդիտի իրականացման համար մի քանի աուդիտորական կազմակերպությունների մասնակցության հնարավորությունը՝ ապահովելով ընտրված աուդիտորական կազմակերպությունների միջև հրապարակային վիճակահանությունը»:		
		Նախագծի 7-րդ հոդված	Նախագծի 7-րդ հոդվածը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:

		Նախագծի 8-րդ հոդված (փոփոխված՝ 7-րդ հոդված)	**Հոդված 7. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ:** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից: 2. Սույն օրենքը Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվելուց և հրապարակվելուց հետո մինչև 2022 թվականի հունվարի 1-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 19-րդ հոդվածով սահմանված կարգով ստեղծվում է առանձին կառուցվածքային ստորաբաժանում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով վերապահված լիազորությունների իրականացումն ապահովելու նպատակով: 3. Սույն օրենքը Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվելուց և հրապարակվելուց հետո մինչև 2022 թվականի հունվարի 1-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սահմանում է կուսակցության ղեկավար մարմնի անդամների կողմից ներկայացվող՝ գույքի և եկամուտների տարեկան հայտարարագրի, պաշտոնը	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ստանձնելու և դադարեցնելու հայտարարագրերի ձևանմուշները: 4. Սույն օրենքը Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվելուց և հրապարակվելուց հետո մինչև 2022 թվականի հունվարի 1-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածին և սույն օրենքին համապատասխան, հաստատում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի իրականացման նպատակով աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները: 5. Սույն օրենքը Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվելուց և հրապարակվելուց հետո մինչև 2022 թվականի հունվարի 1-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սահմանում է կուսակցությունների տարեկան հաշվետվության ձևը և դրա լրացման կարգը: 6. Սույն օրենքը Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվելուց և հրապարակվելուց հետո մինչև		

			2022 թվականի հունվարի 1-ը սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսվող՝ 40.1-ին հոդվածի 4-րդ և 5-րդ մասերից բխող համապատասխան փոփոխություններ են կատարվում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցման կարգը և ձևաչափը հաստատելու մասին»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի՝ 2020 թվականի հունիսի 12-ի թիվ 91-Ն և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ 2020 թվականի հունիսի 12-ի 04-Ն համատեղ որոշման մեջ:		
		ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ			

		Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում՝ 1) «2003 թվականի ապրիլի 18-ի» բառերից հետո լրացնել «թիվ ՀՕ-528-Ն» բառերը: 2) նոր լրացվող 161.1-ին հոդվածի 2-րդ մասում «առավելագույնը» բառը փոխարինել «երկուսից» բառով, իսկ 2-րդ մասի 1-ին կետում «երկու և ավելի» բառերը «երկու կամ ավելի» բառերով: 3) նոր լրացվող 161.2-րդ հոդվածի վերնագիրը և 1-ին մասը վերաշարադրել հետևյալ կերպ. «**Հոդված 161.2. Կուսակցության օգտին խոշոր չափով ապօրինի նվիրատվություն ներգրավելը** 1. Կուսակցության անդամի կողմից կուսակցության օգտին օրենքով չթույլատրված աղբյուրից խոշոր չափով կամ օրենքով սահմանված առավելագույն չափը խոշոր չափով գերազանցող նվիրատվություն ներգրավելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով»: 4) նոր լրացվող 161.3-րդ հոդվածը վերաշարադրել հետևյալ կերպ. «**Հոդված 161.3. Իրավաբանական անձի անունից կուսակցությանը խոշոր չափով**	Ընդունվել է:	Ընդունվել է:

			նվիրատվություն կատարելը 1. Իրավաբանական անձի անունից կուսակցությանը խոշոր չափով նվիրատվություն կատարելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով: 2. Սույն հոդվածի իմաստով խոշոր չափ է համարվում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարին համարժեք նվիրատվությունը»: 5) նոր լրացվող 161.4-րդ հոդվածը վերաշարադրել հետևյալ կերպ. «**Հոդված 161.4. Նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու օրենքով սահմանված առավելագույն չափը խոշոր չափով գերազանցելը** 1. Նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու օրենքով սահմանված առավելագույն չափը խոշոր չափով գերազանցելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով կամ		

			կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով: 2. Սույն հոդվածի իմաստով խոշոր չափ է համարվում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարին համարժեք նվիրատվությունը»: 6) Լրացնել նոր 161.5-րդ հոդված հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 161.5. Կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով չթույլատրված աղբուրներից նվիրատվությունների արգելքը խոշոր չափով շրջանցելը** 1.Անձի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը այլ անձի անունից նվիրատվություն ձևակերպելու եղանակով շրջանցելը, որը կատարվել է խոշոր չափով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ մեկից երեք ամիս		

			ժամկետով: 2. Նույն արարքը, որը կատարվել է 1) պաշտոնեական դիրքն օգտագործելով, 2) երկու կամ ավելի անձանց ներգրավելու միջոցով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով: 3. Սույն հոդվածի իմաստով խոշոր չափ է համարվում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարին համարժեք նվիրատվությունը»: 7) Լրացնել նոր՝ 161.6-հոդված հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 161.6. Կուսակցության օգտին նվիրատվություն կատարելուն հարկադրելը** 1. Կուսակցության օգտին նվիրատվություն կատարելուն հարկադրելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով: 2. Նույն արարքը, որը կատարվել է 1) պաշտոնեական դիրքն		

			օգտագործելով, 2) երկու կամ ավելի անձանց նկատմամբ՝ պատժվում է կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:		
		Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասը վերաշարադրել հետևյալ կերպ. «1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ			
		Նախագծի 1-հոդված	Առաջարկվում է Օրենսգրքի 14-րդ հոդվածը լրացնել նոր՝ 2-րդ մասով՝ Նախագծի 1-ին հոդվածը վերաշարադրելով հետևյալ կերպ. **Հոդված 1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության	Ընդունվել է:	Ընդունվել է:

			1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 14-րդ հոդվածը լրացնել 2-րդ մասով. «2. Սույն օրենսգրքի իմաստով կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը»:		
		Նախագծի 1-ին հոդված (փոփոխված՝ 2-րդ հոդված)	Նախագծի 1-ին հոդվածում առաջարկվում է «189.21-րդ» թվից հետո նշված «և»-ը փոխարինել ստորակետով, իսկ «189.22-րդ» թվից հետո լրացնել «և 189.23-րդ» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		Նախագծի 3-րդ հոդված (փոփոխված՝ 4-րդ հոդված)	Օրենքի՝ նոր լրացվող 189.15-րդ հոդվածը վերաշարադրել հետևյալ կերպ. «**Հոդված 189.15. Կուսակցությանը օրենքով սահմանված նվիրատվությունները կամ կուսակցության կողմից**	Ընդունվել է:	Ընդունվել է:

			դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելը 1. Կուսակցությանն օրենքով սահմանված նվիրատվություններն անկանխիկ չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում նվիրատու ֆիզիկական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչև հիսնապատիկի չափով, իսկ կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով: 2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում նվիրատու ֆիզիկական անձի նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև երկուհարյուրհիսունապատիկի չափով, իսկ կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ երեքհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով: 3. Կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելը՝ առաջացնում է տուգանքի		

			նշանակում կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով: 4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ երեքհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով:»		
		Նախագծի 4-րդ հոդված (փոփոխված՝ 5-րդ հոդված)	Օրենքում նոր լրացվող 189.19-հոդվածը վերաշարադրել հետևյալ կերպ. **«Հոդված 189.19. Կուսակցության անդամի կողմից կուսակցության օգտին ապօրինի նվիրատվություն ներգրավելը** 1. Կուսակցության անդամի կողմից կուսակցության օգտին օրենքով չթույլատրված աղբյուրներից կամ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող նվիրատվություն ներգրավելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության անդամի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հինգհարյուրապատիկի չափով»:		
		Նախագծի 5-րդ հոդված (փոփոխված՝ 6-րդ հոդված)	Օրենսգրքում նոր լրացվող 189.20-րդ հոդվածը վերաշարադրել հետևյալ կերպ. **«Հոդված 189.20. Նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելը** 1. Նվիրատուի կողմից կուսացությանը նվիրատվություն կատարելու օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ առավելագույն չափը գերազանցող գումարի չափով: 2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումը, որ կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող գումարի կրկնապատիկի չափով»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		Նախագծի 6-րդ հոդված (փոփոխված՝ 7-րդ հոդված)	Օրենսգրքում լրացվող 189.21-րդ հոդվածը վերաշարադրել հետևյալ կերպ. **«Հոդված 189.21. Իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելը**	Ընդունվել է:	Ընդունվել է:

			1. Իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ իրավաբանական անձի պաշտոնատար անձի նկատմամբ նվիրատվության գումարի չափով: 2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումը, որ կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում իրավաբանական անձի պաշտոնատար անձի նկատմամբ՝ նվիրատվության գումարի կրկնապատիկի չափով»:		
		Նախագծի 7-րդ հոդված (փոփոխված՝ 8-րդ հոդված)	Օրենսգրքում լրացվող 189.22-րդ հոդվածը վերաշարադրել հետևյալ կերպ. «Հոդված **189.22. Կուսակցությանը նվիրատվություն կատարելու օրենքով սահմանված առավելագույն չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը շրջանցելը** 1. Անձի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը	Ընդունվել է:	Ընդունվել է:

			չգերազանցելու արգելքը այլ անձի անունից նվիրատվություն ձևակերպելու եղանակով շրջանցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ իրական նվիրատուի նկատմամբ՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող գումարի չափով: 2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումը, որ կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում իրական նվիրատուի նկատմամբ՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցող գումարի կրկնապատիկի չափով: 3. Օրենքով չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը այլ անձի անունից նվիրատվություն ձևակերպելու եղանակով շրջանցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում իրական նվիրատուի կամ նրա պաշտոնատար անձի նկատմամբ՝ նվիրատվության գումարի չափով: 4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված խախտումը, որ կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝		

			առաջացնում է տուգանքի նշանակում իրական նվիրատուի կամ նրա պաշտոնատար անձի նկատմամբ՝ նվիրատվության գումարի կրկնապատիկի չափով»:		
		Նախագծի նոր՝ 9-րդ հոդված	Օրենսգրքում լրացնել նոր՝ 189.23-րդ հոդված հետևյալ բովանդակությամբ. **«Հոդված 189.23. Բանկի կամ վարկային կազմակերպության կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելը** 1. Բանկի կամ վարկային կազմակերպության կողմից «Կուսակցությունների մասին» օրենքով արգելված պայմաններով վարկի տոկոսները նվազեցնելը կամ ավանդի տոկոսները բարձրացնելը կամ վարկը կամ դրանց տոկոսները ամբողջությամբ կամ մասնակի վճարելու պարտականությունից կուսակցությանն ազատելը (պարտքը ներելը) կամ պայմանագիրը կնքելուց հետո վարկի տոկոսադրույքի վերանայումը, որի արդյունքում տոկոսադրույքը շուկայականից էականորեն կնվազի կամ այդ պայմանագրերի հետ փոխկապակցված գրավի պայմանագիրը վաղաժամկետ լուծելը կամ պայմանագրի պայմանների այնպիսի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			փոփոխությունները, որոնք կարող են դիտվել ակհայտ անհավասար այլ անձանց հետ կնքվող համանման պայմանագրերի պայմանների համեմատ կամ փաստացի կարող են հավասարվել պարտքը ներելուն (օրենքով չթույլատրված նվիրատվություն)՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով»:		
		Նախագծի նոր՝ 10-րդ հոդված	Օրենսգիրքը լրացնել նոր՝ 189.24-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 189.24. Կուսակցության կողմից հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին չծանուցելը** 1. Կուսակցության կողմից իր ղեկավար մարմնում հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին եռօրյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին չծանուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			նվազագույն աշխատավարձի քառասնապատիկից մինչև ութսունապատիկի չափով»:		
		Նախագծի նոր՝ 12-րդ հոդված	Նախագծի 9-րդ հոդվածում առաջարկվում է «189.21-րդ» թվից հետո նշված «և»-ը փոխարինել ստորակետով, իսկ «189.22-րդ» թվից հետո լրացնել «189.23-րդ և 189.24-րդ» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		Նախագծի նոր՝ 13-րդ հոդված	Նախագծի 10-րդ հոդվածում առաջարկվում է «189.21-րդ» թվից հետո նշված «և»-ը փոխարինել ստորակետով, իսկ «189.22-րդ» թվից հետո լրացնել «189.23-րդ և 189.24-րդ» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		Նախագծի նոր՝14-րդ հոդված	**Հոդված 14. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից: 2. Սույն օրենքի 3-րդ, 10-12-րդ հոդվածներն ուժի են մտնում 2022 թվականի հունվարի 1-ից: Մինչև սույն օրենքի 11-12-րդ հոդվածների ուժի մեջ մտնելը սույն օրենքի 4-9-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Մինչև սույն օրենքի 11-12-րդ հոդվածների	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ուժի մեջ մտնելը հարուցված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի գործերը շարունակում է քննել և լուծել Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:		
		«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ			
		Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածը վերաշարադրել հետևյալ կերպ. **Հոդված 1.** «Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետից հանել «, այդ թվում՝ կուսակցության ղեկավար մարմնի անդամները և նրանց փոխկապակցված անձինք» բառերը»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը վերաշարադրել հետևյալ կերպ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից»:		

		«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»	«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում կատարված փոփոխությամբ պայմանավորված առաջարկվում է Նախագծերի փաթեթից հանել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ » ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ	Նախագծերի փաթեթում ներառել «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը հետևյալ բովանդակությամբ. **«Հոդված 1.** «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» 2001 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-169	Ընդունվել է:	Ընդունվել է:

		ՄԱՍԻՆ	օրենքի (այսուհետ՝ Օրենք) 26-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 23-րդ կետով. «23) տեղեկություններ իրավաբանական անձի անունից առանց լիազորագրի հանդես գալու իրավունք ունեցո անձի մասին (անձը նույնականացնող տվյալներ, նշում պաշտոնի և լիազորությունների մասին), եթե այդպիսիք ներկայացվել են»: 2) 6-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ. «Կուսակցությանը վերաբերող գրանցման մեջ գրառվում են նաև տարածքային ստորաբաժանման անվանումը և հերթական (հաշվառման) համարը»: 3) 16-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «16. Կուսակցությունների վերաբերյալ իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում գրառման ենթակա չեն սույն հոդվածի 1-ին մասի 10-րդ, 11-րդ և 12-րդ կետերով կետերով նախատեսված տեղեկությունները, և գրառվում են մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների վերաբերյալ տեղեկությունները (անունը,		

			ազգանունը անձնագրային տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը), իսկ սույն հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով նախատեսված տեղեկությունների փոխարեն գրառվում են կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի կամ մշատպես գործող ղեկավար մարմնի ղեկավարի պաշտոնակատարի կամ մշտապես գործող ղեկավար մարմնի կողմից լիազորված անձի մասին տեղեկություններ, եթե մշտապես գործող ղեկավար մարմինն անձին լիազորել է հանդես գալու կուսակցության անունից (անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը, բնակության (հաշվառման) վայրի հասցեն, կապի միջոցները՝ էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարն ու ֆաքսը, եթե այդպիսիք ներկայացվել են գործակալություն)»: **Հոդված 2.** Օրենքի 39-րդ հոդված լրացնել նոր՝ 6-րդ մասով. «6. Կուսակցության տարածքային ստորաբաժանման հաշվառման կամ հավառումից հանելու դեպքում ներկայացվում է համապատասխան դիմում և կուսակցության իրավասու մարմնի		

			որոշումը տարածքային ստորաբաժանում ստեղծելու կամ դրա գործունեությունը դադարեցնելու մասին: Կուսակցության տարածքային ստորաբաժանման պետական հաշվառման, փոփոխությունների պետական հաշվառման, պետական հաշվառումից հանելու համար պետական տուրք չի գանձվում»: **Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:		
		«ՎԱՐԿԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ	Նախագծերի փաթեթում ներառել «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը հետևյալ բովանդակությամբ. **Հոդված 1.** «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» 2008 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՕ-185-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասի 1.1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ. «1.1. Վարկային բյուրոները	Ընդունվել է:	Ընդունվել է:

		ՄԱՍԻՆ	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հայտարարատու պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց վերաբերյալ, ինչպես նաև «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով նախատեսված հայտարարատու պաշտոնատար անձանց վերաբերյալ վարկային տեղեկատվությունը նրանց համաձայնությամբ տրամադրում են վարկային բյուրոյի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ սույն հոդվածի 2-րդ մասի 2.1-ին և 2. 2-րդ կետերով սահմանված նպատակներով»: 2) 2-րդ մասի 2.1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ. «2.1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին		

			համապատասխան՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հայտարարատու պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց և «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով նախատեսված հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերի վերլուծությունը. »: 3) 2-րդ մասը լրացնել նոր՝ 2.2-րդ կետով. «2.2. «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների ստուգումը. »: **Հոդված 2.** Օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին նախադասությունում «հայտարարագրերի թվին» բառերից հետո լրացնել «կամ յուրաքանչյուր կուսակցության կողմից ներկայացված տարեկան հաշվետվությունների թվին»		

			բառերը: **Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:		
		Նախագծերի փաթեթ	Նախագծերի փաթեթում ներառված նախագծերում իրականացվել են տեխնիկական և խմբագրական բնույթի այլ փոփոխություններ:	Ընդունվել է:	Ընդունվել է: